

983

613
G-96

12022

2010

№ 4485.

Армянская книга

ԵՐԱՐ ԿԵՐՈՒՔ

Եր

ԱՐԵ ԳԵՅՈՒՄ ԵՐ

ՊՈՒՐՈ-ԲԺՇԿԱՊԵՏ

Վահագին մարտ պատկենած քրոջ
տուն, ինչու և մասաւիւր կեսարի թելլի

Ժ. Ա. Բ. Հ.

Թարգմանած Ճիշճ

Տ. Ա. Վ. Բ. Ք. Հ. Հ. Ա. Բ.

ՊՈՒՐՈ-ԵՐ

Խ. Ա. Վ. Ա.

Տպոգրաֆия быв. А. В. Кудрявцевой, Инсинація д. Сытова.

1882.

613
4-96

610
165-60



ԵՐԵՐ ԿԵՐԵՐ

եր

ՆՈՐ ՊԵՍՄԱՆԵՐ

1003
10322

ՆՈՐՈՐ ԲԺՇԿԱԳԵՏԻ

Ամենայն մարդ՝ Պարկեանց քրոջ
նման, ինքն է մանուշիւր կեանքի թելը:

Ժ Ռ Բ Է:

Թարգամանութիւն

Տ. ՅԱԿՈԲ Ռ. ՔԱՀԱՆՅԱՅԻ

ԱՌԵՐԱՆԵՐԵՅ:

ՄՈՍԿՎԱ.
Տիպографія быв. А. В. Курдячевой, Мясницкая д. Сытова.

1882:

16175

Գ Ե Ր Ա Զ Ն Ե Ւ Տ

ՅՈՎԱՆԴԻՆԻ ԱՑԵՓԱՆԵՍԵ

ՅՈՎԱՆԴԻՆԵՑ

Дозволено цензурою. С.-Петербургъ, Іюня 2 дня 1881 года.

Կ Ա Ր Ա Բ Բ Հ

Խ Ա Մ Ա Ր Ա Բ Հ Հ Հ Հ :

ԵՐԿՈՒՅ ԽՈՍՔ.

Այս գիրքը հրատարակելով ոչ միայն ինձ չեմ
կարծում իմ պարտաւորութեան սահմանից շեղ-
ուած, այլ և Վզգի մի համեստ և շահաւէտ ծառա-
յութիւն մատուցած եմ համարում, հանգստութեան
աղատ ժամերս նուիրելով թարգմանութեան:

Կեանքը Ասոսոծոյ պարգեւած մեր ամենամեծ
բարիքն է: Կեանքը անդորր և առողջ մինչև խոր
ծերութիւն, մեր երկրաւոր երջանկութիւնն է:

Իարոյական օրէնքը առողջապահութեան հիմքն
է: Մենք մեր կեանքը պահպանելով, սիրում ենք
մեր անձը. իսկ մեր անձը սիրելով, հպատակում
ենք բարոյական օրէնքին և վայելում ենք Աս-
տոծոյ պարգեւած () բ-հ-ն ութիւնը:

Այս, որ եկեղեցին յանցանք կամ մեղք է ան-
ուանում, բժշկականութիւնը կեանքի ցեց է հա-
մարում: Այս կենսամաշցեցը մեր անզուոպ կամքի
և վատ կրքերի մէջ է:—Ահա այս գրքի բովանդա-
կութիւնը:

Աշխարհօրեն քննած է սորա մեջ երկայնակեցու-
թեան կանոնները և զանցաւութիւնները, որ մենք
կեանքի պարզ գաղափարներից համոզուինք բա-
րոյապէս ինսամք տանել մեր կեանքին, ապրինք ան-
դորր, առողջ, երկար և ընդարձակ միջոց ունենանք
բարի և օգտաւէտ գործերու:

Ուարդմանիչ:

Վ

ԱՆԳԻՒՆԵԿԻՆ ՅԵՌԵՎԱՆՄ:

«Վեր կեանքի նաւակը անդադար առաջ է ընթանում ժամանակի հոսանքով» ասաց Շենառտէնդէսսենպիէր, բայց կայ միջոց նորան ուղղութիւն տալու և կարելի է պահպանել մեր այդ գիւրաբեկ մակոյկը աներևոյթ ժայռերից և վաղահաս խորտակումից:

Եւյս միջոցը-առողջապահութիւնն է: «Ա, Կրացատրէ մի խորհրդաւոր գաղտնիք, այն է «պահպանել մեր կեանքը»:

«Կեանքը երկարատեւ է» ասաց Աենեքա, «բայց մենք ինքերս կարձացնում ենք այն»: Non accepimus brevem vitam, sed facimus.

Հատ մարդիկ մեռանում են աւելի հիւանդութիւնից, քան թէ ծերութիւնից: Երեւելի գիտնական Պաօմէ Շէկոնը՝ կարծումէր, թէ մարդը՝ որ հոգւով անմահ է կարող է ապրել հաղար տարի, եթէ իւր ուժերը գործ դնէր իւելացի և չափաւոր կերպով: Առչակաւոր կրօնաւորին կարծիքը տարօրինակ չէին երևում և այն ժամանակ, երբ սահմանափակ փիլիսոփայութիւնը հետամուտ էր լինում անմահութեան: Եթէ հաւանութիւն տանք այն ցնորքին թէ մեր կեանքի կարձատեռութիւնը բոլորովին համապատասխան չէ բնութեան սահմանած միջոցին, այնու ամենայնիւ պէտք է համաձայնինք որ մեր կեանքի տեղութիւնը աւելի կարճ է քան

բնութեան սահմանածը: Ա՞նք մեռանում ենք կէս
ճանապարհի վերայ:

Այն երկոյթը՝ որ Եւրոպայումը մարդիկ այժմ
միջին թուով երկար են ապրում, կարօղ է լինել
ապացոյց, թէ առսղջապահութիւնը որ այժմեան
հասարակութեան համար անհրաժեշտ պահանջ է
դարձել օգուտ է բերում մարդկութեան:

Ու թէ արհեստական, այլ այս իսկ գիտութեան
միջոցների մէջ պէտք է որոնել երկայնակեցութեան
գաղտնիքը: Այդ գաղտնիքը երկու խօսք է—«Աի
կարձացներ քո կեանքը և դու աւելի
կերկարացնես այն»:

Յ Ա Ն Կ.

Երես	
Գ Լ ու ի Ա. Պատմական հետազոտութիւններ երկայնակեցու- թեան վերայ.	1
Գ Լ ու ի Բ. Մարդկային կեանքը արուեստական միջոցներով եր- կարացնելու եղանակները.	8
Գ Լ ու ի Գ. Մարդու կեանքի մնական սահմանը	23
Գ Լ ու ի Դ. Անհատական պայմանները, որոնք օգնում են շատ ազգելու.	29
Գ Լ ու ի Ե. Օ՛Ե որպէս ազգիւր կենաց	38
Գ Լ ու ի Զ. Լոյսը չերմաթիւնը կեանքի համար անհրաժեշտ են. .	52
Գ Լ ու ի Է. Զավարարութիւնը և մարստղակեան առողջապա- հութիւնը.	59
Գ Լ ու ի Ը. Խփչքներ.	81
Գ Լ ու ի Թ. Մարմին շարժողութիւն.	93
Գ Լ ու ի Ժ. Քունը.	103
Գ Լ ու ի ԺԱ. Կլման և տեղի զանազան դրութիւնները.	111
Գ Լ ու ի ԺԲ. Կաշին հոգատարութեան մասին.	118
Գ Լ ու ի ԺԴ. Սերական ժումկալութիւնը և ամուսնութիւնը. .	132
Գ Լ ու ի ԺԴ. Բարդյական կեանքը.	146
Գ Լ ու ի ԺԵ. Կենցաղավարութիւն	169

Գ Ա Ր Ե Խ Ը

Պատմական հետազոտութիւններ երկայնակեցու-
թեան վերայ:

„Երբ մենք ծերանում ենք, մեզ
թուում է թէ ծերանում են մեր
շրջակայրը“: Բ է կօն:

Մի մարդատեաց քննելով լոտիանկապէս մեր
կեանքը, հասաւ այն եղակացութեան, թէ նո-
րա մէջ կալելի է միմիայն երեք տարիի չափ եր-
ջանիկ օրեր համարել, որոնք մի խառնուրդ են
կազմում վաթսուն կամ եօթանասուն, հոգեկան
և մարմնական ցաւերով լի, տարիների հետ:

Եւ սակայն, չնայելով այդ եղակացութեանը,
մենք տիսրում ենք, երբ դատարկելով այդ դառն
խառնուրդի բաժակը, նորա յատակն ենք տես-
նում:

Ամենայն ժամանակ երկայնակեցութիւնը հա-
մարուել է իրմւ երկնային գերագոյն պարգև:

Աթենացիք և Հռովայեցիք մեծարանօք շրջապատռմէին ծերունի մարդկանց, իւրեանց առների օրերը:

Մինչև այժմ արմատացած է այն կարծիքը, թէ մարդու կեանքը հին ժամանակները աւելի երկարաւեւ էր. որպէս թէ՝ բնութիւնը գեռ մանուկ լինելով, մարդուն աւելի մեծ պաշար էր տալիս կենական ուժի համար. բայց ուսումնական հետազոտութիւններով այդ կարծիքը հերթուեցաւ: Բնութիւնը չէ ծերանում: Գենալէր և այլ շատ ուսումնականք ապացուցին, որ Եբարահամից առաջ, տարին երեք ամիս ունէր, Եբրահամից յետոյ—ութն ամիս. Յովսեփից յետոյ, որ փարանների մէկի նախարար էր — տասներկու ամիս: Եյս հաշուին նայելով Մաթուսալայի երկարաւեւ կեանքը ոչինչ անհնարին երեսոյթ չէ, մեր ժամանակն ևս մարդիկ համումէն այդպիսի երկարակեցութեան: Դորս ապացոյց բերումէն մի Պրուսացի վինուորի, որ մասնակից էր երեսնամեայ սկատերազմին և մեռաւ 1881 թ. 200 տարեկան:

Պատմական դարերում, որնք յաջորդում են առասպելեալ ժամանակներին, մարդկային կեանքի սահմանը այնքան էր, որքան է այժմա: „Մեր կեանքը չէ երկարում, ասումէ թագավասակ մարդաբէն, առաւելքան եօթանասուն տարի: Եթէ ամբապինդ մարմնով մարդիկ ապրում են մինչև

2

ութուն տարի, այդ ցաւօք և հեծութեամբ է լինում“: Պլինոս յիշումէ թէ՝ Վեսպասիանոսի թագաւորաւթեան ժամանակի աշխարհագրի մէջ հարիւրամեայ ծերերը բացառութիւն էին համարուում: Ինչպէս մեր ժամանակը:

Շատ հեռու չգնանք, մեր ժամանակին ևս կան շատ ապրող մարդիկ, որ մեզ զարմանք են բերում:

1838 թ., Սեն-Կոլոմբի շրջակայթում, Գաղղիոյ վերին Գարօննի կուսակալութեան մէջ, Մարիա-Պիիու ազգիկը մեռաւ 158 տարու:

1746 թ. Փետրվարի 6, Ապանիայում, Տօլոզի մետրիկական մասնենի մէջ արձանագրուած կայ մի կոօջ մահը և թաղումը 158 տարու:

Սմենքից ծեր գերմանացին 1839 թ., ինչպէս վկայումէ „Օքրիէստի Նկատող“, յայտնուել է ծանս-ծերց անուն ով մէկը, որ ապրում էր այն ժամանակ Գիլա հառովենում: Վիլեզեայի մէջ, և 142 տարեկան էր:

Պօլիսիման անունով վերաբյժը մեռաւ Լոգարինդիայի մէջ 1825 թ. 140 տ:

Դիւֆուրիէլ, Փարիզի բժշկապետը, մեռաւ 120 տարեկան, 1810 թ.: Արիւր տարեկան հասակին նա ոտք կոտրեց, բայց ոսկորը աճեցաւ առանց արգելքի:

Մի երկարագործ՝ որ երբեմն զինուոր էր, Դէլ-

*

3

պիւշ անունով, մեռաւ Աէն-Աեռնիվի մէջ 1840
թ. մարտի ամսումը, նոյնպէս 120 տարեկան:

Մի այլ երկրագործ, Գամդօ, մեռաւ նոյն
տարիով Լուսիաքում (Գաղղից Գերափ գա-
ւառում) 1833 թ:

Տինեղիայի մէջ (Գաղղ.) մեռաւ, 12 մայիսի
1845 թ., Առարի-Ապլէ 115 տարու. մինչև
110 տարին Ճերմակեղին կարելով էր սպառում,
առանց ակնոց գործածելու:

* * *

Եռաջ բերենք մի քանի այլ ճշմարտապատում
օրինակներ, որ քաղում ենք երկայնակեցութեան
վերայ ընտիր զրուածքներից:

Ըստանտացի Ահմետ-Աօնկօ և Հոնդարացի
Պէտր Զարդեն մեռան 185 տարու: Երվե-
կիացի Յովսէփ Առուբենկոն 160 տարու: Ենդ-
ղիացի Թօմաս Գերմին 152 տարու: Թօմաս
Պարրէ Ենդղիացի 152 տարու: Գրակինազորի
Գանիմարբացին 146 տարու: Խօհան Լավինդամ
Ենդղիացին 144 տարու: Ժարժ-Վունտէր Գեր-
մանացին 136 տարու: Ահստելշդադա Գերմանա-
ցին 125 տարու: Տուղլաս Գուրկեն Շվեյց 120
տարու: Ամրիս Վալլասն Ոտուր 115 տարու:

Եյդ բոլոր երկայնակացների մէջ նշանաւոր է
Տօմ-Պարրէ, որ ապրեցաւ Ենդղիացումինն թա-
գաւոնների ժամանակ: Երբ 103 տարու էր՝ այն-
քան ուժեղ էր, որ կալումը ցորեն էր փշրում:

4

125 տարեկան էր Պարրէ, երբ Կարօլոս Բ. Հրա-
մանով տարին նորա Լօնդօն. թագաւորը նորա
հետ ողբանձ վարուեցաւ և հրամայեց պատուել
հարուստ ճաշով. բայց ծերունին միւս օրը մե-
ռաւ: Նորա մարմինը բացեց Գերվէ երկելի
բրժշկապետը և գտաւ բոլոր ներքին գործարան-
ները ամենալաւ դրութեան մէջ. նա մեռել էր
ստամօքսի անսովոր կերակրիցը:

* * *

ՃՌ գարը նշանաւոր է հարիւրամեայ ծերերի
բազմութեամբ: Եհա մի քաղուած ժամանակակից
օրագրերից, այն նշանաւոր մարդկանց վերաբե-
րեալ ծանօթութիւններով:

27 յունվարի 1702 թ.—Օմիոնիայում մե-
ռաւ Գուանսուա Հօնկօ 114 տարու: Եա իւր
բոլոր կեանքումը ոչինչ չէր խմած, բացի ջրից,
որոյ մէջ աւելացնումէր գայլախոտի արմատի հե-
ղուկը:

1721 թ.—Եանսիի մէջ մեռաւ Օռպի, 116
տարու: Եա ծաղկէ էր հանել 104 տարեկան
եղած ժամանակը:

Վալբիլում 1726 թ.—Ժան-Ռւարեգօ, Գա-
լիցիացի երկրագործը մեռաւ 147 տարու, որ միայն
բլինձով էր ապրում:

Օգոստոսի 1737 թ.—Բէլ Բիւսի կալուա-
ծատիրոջ արքին, մեռաւ Պառւաէի մէջ (Գաղղ)

5

111 տարու. շրջազգեստին քղանցը ոաքերին վասթաթուելով ընկաւ սանդուղեց:

2 փետր 1755 թ.—Այրի Լէժէ մեռաւ 107 տարեկան: «Կա երբէք կօշիկ չէր հագնում և սասակիկ ցրտի ժամանակ անդամ շրջում էր բոպիկ:

28 ապրիլի 1756 թ.—Ճան-Պիեր - Մէնտէս մեռաւ 130 տարու: Մեռնելից մի տարի առաջ այնքան սուր էր նորա տեսութիւնը, որ որսի ժամանակ հրացանը անսխալ ուղղում էր նապաստակների վերայ:

21 գեկտ. 1756 թ.—Ճան-Մուլի վախճանեցաւ 119 տարու 11 ամսու և 11 օրուան: «Կորա կերակուրն էր հաց, ապուր և լոբի. խմում էր լոկ ջուր: Մեռնելից երկու տարի առաջ նա շրջում էր ձիով երկու մղոն: «Կա երբէք չէր բարեկանում:

3 յունվարի 1757 թ.—Այլիինա Շնգղիացի սպայն մեռաւ 100 տարեկան: «Կա յիսուն տարի ու կէս բանակ մէջ փակուած էր:

19 մարտի 1759 թ.—Անգելիկա Լարափդ մեռաւ 103 տարու: Ակրում էր որտորդութիւնը:

16 ապրիլի 1759 թ. Պիյում-Կասայէ, «Կշշատելից (Օվեցելից), մեռաւ 108 տարու: Հւանդութեան ժամանակ ոչինչ դեղ չընդունեց և խմում էր իւր սովորական մեղքաջուրը:

9 փետրվարի 1760 թ.—Լիտաիլիսի մէջ Արիկիօն կօշկակարը մեռաւ 126 տարու: «Կա ա-

մուսնացել էր 103 տարեկան հասակումը 15 տարեկան օրիորդի հետ:

20 նոյեմբերի 1760 թ.—Կօտոէլ անունով մէկը մեռաւ Գիլազելիիայումը 120 տարու: «Կա ամուսնացաւ 22 տարեկան և ապրեցաւ կնօջը հետ 98 տարի: Խակ կինը մեռաւ մարդիցը երեք տարի յետոյ, 115 տարու:

16 փետրվարի 1765 թ.—Ճան - Ընտուան-Բօնգի բժիշկը մեռաւ 117 տարու Խտալից Ապրկէթօյի մէջ, որ բժշկութիւնով պարապում էր 95 տարի:

18 փետրվարի 1767 թ.—Երբաշամ-Փասպիօ Օվեցելից Օնեկսումը մեռաւ 104 տարու: «Կա բերանից չէր պակասեցնում ծխաքաշը:

* * *

Մէր օրերում հազուագիւտ են առասպելական երկայնակեցութեան օրինակները. բայց, աստիճանաբար, լուսաւորութեան հետ, աւելանում է միջին կեանգի չափը:

Օրինակ բերենք Գաղղիոյ Կիժօն քաղաքը, որ հետագանել է մի ուսումնական բժիշկ: ԺԷ դարու կեանգի միջին թւանշանը եղած է այնաեղ 24 տարի: ԺԷ դարում հասել է 30 տարու և 8 ամսու, խակ ներկայումն 38 տարի 9 ամիս է:

—♦♦♦—

Գ և ս բ ն թ ի

Մարդկային կեանքը արուեստական միջոցներով
երկարացնելու եղանակները:

Իմաստութիւնը ամենալաւ օշարակն է
առողջութեան և երկայնակեցութեան:
Ա և բ է յ:

Արուեստական միջոցներով կեանքը երկարացնելու գիտութիւնը ոչ միայն պղտորեց տկարամիտների երեւակայութիւնը և զրգուեց սրիկաների շահամիտութիւնը, բայց և բարձր տաղանդաւոր գլուխներ նորա գաղտնիքը քննելով պարապեցան: Մարդկութեան համար անսպառող շմնաց բժշկականութեան մէջ փիլտառիայական քարի որոնելը, որ միջին դարերի մօլութիւններից մինն էր: Վիմիկոնները, երկայնակեցութեան օշարակը որոնելիս, գտան ածխային թթուն, փոսփօրը, ծարիրը, մկրնդեղը. հարստուցուցին բնաբանութիւնը, ուղղագործութիւնը և բժշկութիւնը նոր գիւտերով, հաստաեցին առողջապահական առողջապահութիւնը ամուր հիման վերայ:

րածնաւ Գերօկոմիա կոչուած ուսուսը, հիմնած բնաբանութեան սկզբանց վերայ: Առորք գիրքը ամենից առաջ յիշում է այդ միջոցի համար, որ նպասակ ուներ պահպանել մարդու տկարացեալ ոյժերը: Յայանի է, որ Գավկիթ ծերութեան ժամանակ նորոգեց իւր ոյժը մատաշահաս Առմինացուն գիրկը: Քասանելեց դարյեաց, նոյն իսկ եղանակը առաջարկեց երեւելի գիտնական Բաէրդաւ, Ամատերդամի ծերունիքաղաքապետին խորհուրդ տալով ննջել երկու մատաղահաս աղջկանց մէջ: Ասում են, Բարձրարուսսա կայսրը, որ խորին ծերութեան էր հասած, մի հրեայ բժշկի խորհրդով, միշտ բոնում էր իւր փորի վերայ փոքրիկ երեխաներին, շարունակ փոփոխելով: Եյդ սպեղամին, ինչպէս այն ժամանակի մարդիկ հաստատումեն, աւելի ամացնում էր նորա:

Միջին դարերի մէջ երեւան ելան մօլքեր, մարդկային շնչառութենից օգուտ բերել երկայնակեցութեանը, իբրև մի բժշկարար տարրից: Մինչև 13 տարեկան մատաղահաս աղջկանց պահումէին մայիս ամսումը մի փոքրիկ սենեկի մէջ և նոյաշնչառութիւնը, առանձին խողովակների միջոցով, հաւաքում էին ջրով լցուած ամանի մէջ: Եյդ ջրի գործածութիւնը, ինչպէս հաւատացնում էին, ուներ ծերերի վերայ հրաշագործ ներգործութիւն:

Երկայնակեցութեան տարեգրերը բազմաթիւ
օրինակներ են բերում շատ ապրող մարդկանց,
որոնք հանսապաղ ապրում էին մատաղահաների
շրջանի մէջ: Ալօտ-Գելրմինուս, որ 115 տարի ապրեցաւ, պարապում էր աղջկանց դասախարակութեամբ և այդ սբազմունքն էին համարում նորսա երկայնակեցութեան պատճառը:

Հռչակաւոր Կօրնարո իւր տան մէջ պահում էր տասնեմի նորահաս աղջակիցներ և դաստիարակում էր անձամբ: Ահա այդ ընկերակցութիւնը և կերակրներից չափազանց ժուժկալութիւնը, որ հազիւ մի քանի զօլոդնիկ էր ուտում: Հասցընն նորա հարիւր տարու (Ճնւելէր Ահետիկ 1467թ., մեռաւ 1566թ.):

Կոգհառովէն բժիշկը յիշում է մի Գաղղիացի ազնուականի մասին, որ բարեգործական նպատակով ընդունեց իւր տան մէջ տասն երկու նորսահաս աղջկանց և նոցա ընկերութեան մէջ գրանուում էր հանսապաղ բայց երբ նա 90 տարուեղաւ, արձակեց նոցա և ապա շատ չանցաւ մեռաւ, կրցնելով իւր բոլոր ուժը:

Ուալէր Անգղիացի բանսասեղծը, որի տաղանդը մարեցաւ 80 տարեկան հասակում, սիրում էր մատաղահաս սիրուն կանանց ընկերութիւնը և զորա հետեւանք էր համարում իւր առողջութեան պահպանութիւնը և տաղանդի անշէջ մնալը:

10

* * *

Շատ հաւանական է, որ նորահաների ընկերութեան մէջ, ոչ այնքան նիւթական պատճառները, որքան վուարձութիւնը և անհոգութիւնը, որ միշտ տիրում է այդ նախանձելի յարբերութեան մէջ, ունեին այդ մարդկանց կետնքի տեւողութեան վերայ աղջեցութիւն: Միայն՝ ժամանակակից շատ երևելի բժիշկներ կարծում են, թէ մաշուած կազմուածքները քաղում են նոր ուժ այլոց երիտասարդութեան ծաղկեալ և առողջ կազմուացքի շրջապատող օլից: Պեկոնի կարծիքով ամեն մարդու կենսական ուժի շրջանակը տարածուում է իւր սեպհական մնարմնոյ սահմանէն դուրս: Այս ապացոյց նաբերում է շատ օրինակներ, ինչպէս շատ անդամ անդամութութեան հարուածը թեթեւանումէ անսամնական բաղանիսներով: Յայտնի է, որ ուժից ընկած ծերերը, սմնեւանանալով նորահաս առոյդ աղջկանց հետ, ստանուում են նոր զօլութիւն և համարեա առոյդանուում են այդ ընկերակցութեան շնորհիւ: Ամենայն մարդ զիտէ, որ մասգործերը, որ հանսապաղ ապրում են կենգանիների թաղմ գոլրշերի մէջ, վայելում են ծաղկեալ առողջութիւն:

* * *

Միջին դարերը, երբ մարդիկ ոգեւորուած էին հրաշքների և ամենայն գերենական իրերի հա-

11

ւասպը, ջեր մեռանդով հետեւում էին մարդու երկայնակեցութեան հարցին: Այդ մթին ժամանակների մէջ ախրապեառում էր այն համազմունքը, թէ գեղօրէից գործածութենով կարելի է հասանել անհաւատալի ծերութեան, մարդիկ անհրաժեշտա հարկ էին համարում պատապարել իրանց ամեն տեսակ թշնամական ազգեցութիւնների դէմ, որոնց կարգումը ընդունած էին և համաստեղութեանց ազգեցութիւնը: «Եռքա, զորօրինակ, հաւատում էին, թէ օձի, եղջերուի, արծուի միարունին զօրութիւն կազմուածքը նորոգելու. որով հետեւ այդ կինդանիները ամենայն տարի նորոգուում են՝ օձը փոխում է իւր շապիկը», եղջերուն—եղջեւը, արծիւը—փետուրը: Ի՞նդհամուր գործածութեան մէջ կային շաա օշարակներ, որոնց բաղադրութեան մէջ մանում էին լիմոնի ջրի մէջ լուծուած ոսկի, մարգարիտ, զմուխտ և եղջերուի փոշիացուցած եղջեւը. վերջապէս աշխատում էին գրաւել կամ հալածել համաստեղութեանց ազգեցութիւնը, գործ դնելով զանազան մատանիներ և հմայիլներ:

Ներմետիկական փիլիսոփայութեան բացառութեան համաձայն, „փիլիսոփայական քար“ առուանեալ խորհրդաւոր միջոցը ունենալու էր երբեք առանձնական յատկութիւններ:

Վկանական դրութեան մէջ, նորա միջոցով մետաղները ոսկի էին փոխարկուում:

Երկրորդ աստիճանին՝ կարող էր մարդկային կեանքը երկարաձգել բնականից դուրս:

Ա երջապէս, ամենաբարձր կասարելութիւն ունեցողի միջոցով կարելի էր ընկերակցիլ անմարմին հոգիների հետ:

Խասհակ Նոլանստացի, Ա ասիլ Ա ալենդին և Պանիկ Օ աքարիա հաստատում էին, թէ այդ դեղը ամենայն օր քիչ քանակութեամբ ընդունելով, մարդ կարող է առողջ ապրիլ միշտ, մինչեւ նախասահմանած օրը: Աօլումն Տրիամողին վկայում է, թէ նորան աջողւել է 90 տարեկան պառաւներին երիտասարդ դարձնել կենաատու օշարակի միջոցով: „Երկարեցնել մարդու կեանքը մինչեւ երկրորդ գալուստը“ ասում էր նա, „ինձ համար հասարակ բան է“: Երակ Փիտու, որ ապրում էր 1130 թ., հապար տարու էր ասում իւր համար. „Ես Երակ Փիտու, այս գլուխ, ապրում եմ աշխարհիս երեսին 1000 տարի, ողորմութեամբն Եստուծոյ և շնորհիւ գործածութեան Քվինսո-Եստէնցիայի“:

* * *

Միջին դարերումը սաստիկ տպաւորութիւն գործեց Առնո Ա իյլէվի գիւտը: Այդ ուսումնագէտը հարիւր տարի կեանք էր խոսանում ամեն մարդու, ով որ իւրաքանչիւր եօթը տարին ուշ կդնէր այս պատուերներին՝

Եպրիլ կամ մայիս առնումը սրախն վերայ դնել՝
քնած ժամանակ այն սպեղաննին, որի բաղադրու-
թեան մէջ կար զաֆրան, կարմիր վարդի թեր-
թեր, անդալ, տաճար և հալօէ:

Ուտել հաւի միս, որ մնուցած լինէր օձի մնով:
Ընդունել մասպարաից, շարիզայից, զմուխ-
աից և մուսկից բաղադրած օշարակը:

Դորա վերայ պէտք է աւելացնել որ Արէ-
նելը իւր այդ գիւտը հրատարակելից յետոյ, զար-
նուեցաւ աստեղաբաշխութեանը, և գուշակեց
աշխարհի մօտագայ կատարածը, որ ինչպէս յա-
յտնի է, չկատարեցաւ։ Այդ քիմիկոսի մոլու-
թիւնը կարելի է ներել, մտաբերելով որ ՏՏումբի
և ազօտի թթուների և բեւեկինի իւզե (Ol. There-
binthinae) գիւտը նորան ենք պարտական։

* * *

Ճ.Օ. դարու սկիզբը մի այլ ուսումնական
իւր անունը հռչակեց Եւրոպից մէջ։ Այդ
Օրէու Փիլիպպ Թէօֆրաստ - Ռոմեաստ Հո-
չէնհէյմն էր, որ աւելի ծանօթէ Պարացէլս
անունով։

Ես, բանալով բժշկական հրապարակական դա-
սախոսութիւններ, սկսաւ այրել Գալիէնի և Ա-
վեցէննի պէս երեւելի բժիշկների գրուածները։

„Պիտոցէք, ասում էր նա իւր զմայլած ուն-
կընդիններին, որ իմ գտակի մէջ աւելի իմաստու-

14

թիւն կայ, քան այդ խարեւաների գլխումը։ Կա
պարծենումէր կենաց ջուրի գիւտավը և պնդում
էր թէ՝ կարօղ է քիմիական գործիքների միջո-
ցով արուեստական մարդ կազմել։ Այդ անմա-
հութիւն խոսացող մարդը մեռաւ 48 տարեկան։

* * *

Հարիւր ասարից յետոյ մեծ գործածութիւն
գտաւ արիւն թողնելը, իրաւ ամենայն հիւան-
դութիւնների գէմ գեղ։ Լուգովիկոս ՃԳ-ից
47 անգամ արիւն թողին նորա կեանքի վերջին
ատան ամիսների միջոցումը։ Բայց շուառվյայտ-
նուեցաւ մի նոր գաղաբար, գորա բոլորովին
հակառակը. մտածեցին՝ կեանքի ուժը աւելաց-
նելու համար, մի մորդի արիւնը միւսի երակնե-
րի մէջ լեցընել։ Որովհեաւ արիւնը ամենակա-
րեւոր նիցուին է կենսական անտեսութեան մէջ,
յայտնուեցան կարծիքներ, թէ կարելի է ծերե-
րի կեանքը անսահման երկարեցնել լեցընելով
նոցա երակները մտաղահամերի արիւնով։ Աա-
կայն կօշտ եղանակը, որով այդ օպէուացիան կա-
տարուում էր, ունեցաւ վշտակ հետեանքներ և
վերջապէս բոլորովին արգելուեցաւ Հռովմայ
գուան և Փարիզի ծերակուտի կանոնադրու-
թեամբ։ Բայց եթէ չհասաւ իւր նպատակին
այդ միջոցը և չիրագործեց նորա պաշտպան-
ների սպասածները, որով մարդու կազմուածքը

15

պիտի նորոգւէր, դարձեալ պէտքէ չնորհակալ լինել այդ օպէսացիայի սկզբունքին. որովհետեւ մեր ժողովակումը երախների մէջ արիւն ներածելու արհեստի նորագոյն կատարելագործութիւնը (In-fusion, Tranfusion) շատերին փրկեց յատուկ մաշից: Կարելի է նաև հաստատ նեթադրել թէ այդ բժշկական միջոցին սպասումէ փառաւոր ապագայ, ինչպէս արդէն գուշակեց Հուֆլանդ:

* * *

Ապայն մարդիկ ամեն ժամանակ հաւատում էին, թէ արիւնը ունի իւր մասնաւոր յատկութիւնները: Խնչպէս, ոչխարի արիւնը համարւում էր կշտացաւի ուղղակի փարատիչը, ծիծեռնակինը վերնոտութեան, մարդունը—վարցաւքի և այն: Երգի արիւնը հնումը թոյն էին համարում: Կրիւ հին աւանդութիւն մնացել էր, որ թէ միստոկիչս սպանեց ինք իրան այդ միջոցով: Բայց Վայսեր հերքեց այդ առասպելը, նա հրամայեց կենդանի եղեց հանել մի բաժակ արիւն և խմեց անվնաս: Եսում են, Լուգովիկոս Ժ. Խմելմ էր երեխայի արիւն, ծերութեան ակար ուժը զօրացնելու համար:

Եյն գարերում, երբ երախների մէջ արիւն լեցընելը հնարուեցաւ, Պրանտուա-թէկօն, փորձառական փիլիտոփայութեան հայրը, պարապուում էր երկայնակեցութեան հարցի հետա-

զօտութեամբը: «Առա կարծիքով, կեանքը մեզ շրջապատող օդի մէջ այրին է — մի ճշմարառութիւն, որ այժմ ամենքին յայտնի է: Կը լութիւնը ու այլ ինչ է, եթէ ոչ բոլոր մարմնի չորանալը, որի մասնիկները աստիճան առ աստիճան միմեանց մօտենումն մի կողմանէ՝ դրաի օդի ներգործութիւնից և միւս կողմանէ՝ ներքին կենսական ուժերի գիմադրող ներգործութիւնից, որ գործումն ինը դիմունից դէպի մակերեւոյթը: Եյդքայքայման առջեւն առնելու կամ նորա ակարացնելու համար, ասում է թէկօն, հարկաւոր է արդիլել մարմնի վրայից շոգու աղասիլը, եղելով մարմինը կամ մինչեւ անդամ լակքսելով, և յետոյ հարկաւոր է հիւթերթնորոգել հիները գուրա հանել՝ քաղածութեան և լուծողական գեղերի միջոցով, և ներածելնորերը՝ սաստիկ մնարդար կերակրների օգնութեամբ: Ոքան և այդ երեւելի կանցլերի կարծիքները տարօրինակ երեւեին, կրկին նորա „Ահանքի և մաշուան պատմութիւն“ անունով զիրքը բովանդակում է իւր մէջ շատ նոր գիւտեր, նուրբ հետագառութիւններ և գործնական եղբակացութիւններ:

Դեկարտ նոյնպէս պարապեցաւ կեանքը երկարացնելու հարցը մշակելով: «Աս թէպէտ շնորհունից անմահ լինելու կարելութիւնը, բայց նահապետ-



ների շափ ապլիլը հնարաւոր էր համարում: «Եռ-
լս կարծեքով բուսեղեններով պահեցողութիւնը
նպաստաւորում է երկանակեցութեանը, բայց
պէտք է ուտելյաճախ եքիչ, այնպէս, որ ստամքար,
ջրաղացի երկանաքարի նման անընդհատ աշխա-
տութիւն ունենայ: Գրեկարա մեռաւ Ատօկհօլմի
մէջ 54 տարու, բայց նորս մահը առաջ եկաւ
հիւսիսային դաժան կլիմայիցը:

* * *

Մի այլ փելիսափայ—Մոպերատիւի, կարծում
էր, թէ կարելի է կեանքը երկարացնել եթէ ար-
գելնք մարդու մարմնի զարգացումը, և այդ իւր
կարծիքը հիմնում էր նա այն բնական օրէնքի
վերայ, որով բնութիւնը միատեսակ ներդործում
է ինչպէս կենդանիների, նոյնպէս և բոյսերի թա-
գաւորութեան մէջ: Չմեռնային հանդսաեան սո-
վորած բոյսերը և ծառերը ջերմանոցի անընդ-
հատ առաքութեան մէջ աւելի կարծ են ապրում:
Թռուշունների և որդերի ձուերը մի մի կենդանի
գոյութիւններ են, միայն պարունակուած են պար-
կի մէջ: «Եոցա մէջ փակուած կայ կեանք, որ կա-
րելի է շատ երկար ժամանակ պահել եթէ պատո-
պարուին ջերմութենից, որի զօրութեամբ վերա-
ծնում են նոքա դէպ ի կեանք: Մոպերատիւի
ինչպէս և թէկոն, փոխադրելով այդ ենդադրու-

18

թիւնը մարդու կեանքի վերայ, կարծեցին թէ
մարմինը լաքով ծեփելով, կարելի է կեանքը եր-
կարացնել:

Ախալուիլը յատուկ է մարդուս!

* * *

ՃՌ դարու վերջը միջնադարեան նախապա-
շարմունքները երեան ելան այլ ձեւակերպութիւն-
ներով ովին օգնեցին մաքերի ընդհանուր խառ-
նակութիւնը և այն ժամանակի քաղաքական և
սոցիալական փոփոխութիւնները: Նարուեցան
զանազան օշարակներ, կաթիւններ, համսդեղեր
և այլ միջոցներ, որոնց նպատակն էր բնութեան
քայլայեցուցիչ ուժին դէմ դնել և հեռացնել
վերահաս ծերութիւնը: Առաջ բերենք այս գաղտ-
նիքների մի քանիսը:

Ա ենսական աղ բառն Լէօբօլտ Շերշենի:
Ծակ կոմն Աէն-Մարմէնի, որ ինչպէս հա-
ւատացնում են, հրաշք էր գործում: Մեղ հա-
սաւ այդ թէյի պարզ գեղաթերթիկը. նա կազ-
մուած էր թանթրլինի ծաղկից, սամիթի և
անխօնի սերմերից, աճալի թերթից և կրէմօտար-
տարից:

Են մահ ութեան օշարակ: Այդ երեելի
Կալիօստրօյի հնարած ստամքսային ամենան-
մեղ գեղն էր:

*

19

Վերջապէս երկնային մաշիճ բժիշկ
Գրոկամի. երբ այդ մահիճը աճուրդով վաճառ-
ուեցաւ նորա պարագերի փոխարէն և քննեցին,
երևեցաւ, որ մի տեսակ մագնիսական մեքենայ
էր, հոտաւէտ նիւթերով և մետաղէ թելերով,
որոնք շարժման ժամանակ ներդաշնակ ձայներ
էին հանում:

Այդ դարերի բոլոր դոցա նման զիւտերի
յատկութիւնները այնու նշանաւոր են, որ նցին
իսկ հարօղները չեն հաւասումիւրեանց հնար-
քների ձշմարտութեանը և միայն նպաստակ ունեին
զիւրահաւան մարդերից հանելիւրեանց դրամա-
կան օգուտը. մինչդեռ միջին դարերի քիմիա-
գէտները և բժիշկները անկեղծ հաւասում էին
իւրեանց զիւտերին, ուստի և առաւել արժանի
են ապագայ սերունդի ներողամասութեանը:

* * *

Պատգամ բժշկի մահիճը միշեցնում է մեզ
մի այլ գորա նման միջոց, որ առաջարկում էր
գերմանիայի բժիշկ Խւլիուս ֆոն-դէր-Գիշ-Վ-է-
լզը, որ մի քանի տարի առաջ մեռաւ հարիւր տա-
լուից աւել ապրելով: Կորա կարծիքով, նա կա-
րող է երկար ապրել ով որ ջանայ որքան կա-
րելի է, մանաւանդ զիշերները, իւր մարմինը պա-
հել այնպիսի գրութեան մեջ, որ պլուխը դէպ

Հիւսիս, իսկ ուգերը—հարաւ գարցած լինի:
Այդպիսի գրութիւնը մարդու պահումէ մագ-
նիսական հոսանքի ազդեցութեան տակ, որ ու-
նի իւր անմնդհատ ընթացքը հիւսիսային բեւե-
սից դէպի հարաւայինը. այդպիսով արեան
մեջ գանուած երկաթի նիւթերին շարունակ
մագնիս է հաղորդում և կիւսական ոյժերը գո-
րութիւն են ստանում:

* * *

Իսյց, եթէ այդ ամեն միջոցները ոչ այլ ինչ
են, եթէ ոչ միայն մոլորութիւն և սրիկացու-
թիւն, և եթէ արհեստը չունի զօրութիւն
հնացեալ մարմնոյ մեջ նոր կեանք ներշնչել,
բնութիւնը երբեմն վարձատրում է իւր սիրե-
լիներին մանաւոր և անհականալի նորոգումնի:
Եհա մի քանի օրինակներ:

Հումիլանդ յիշումէ Պալատինատի մի բնակչի
համար, որ 98 տարու հասակումը նոր աստամ-
ներ հանեց: «Կա մեռաւ 102 տարու:

Ոինկէր պասմում է մի մարդու համար, թէ
հարիւր հինգ տարու էր, երբ նոր աստամներ
հանեց և սեւ մազեր դուրս եկան:

«Եղին իսկ ուսումնական անձը յիշումէ մի կնօջ
մասին, որ 99 տարեկան էր, երբ գլխի վերայ սև
մազեր բուսան, հինգ տարիից յեայ, այսինքն

մեռնելից քանի ամիս առաջ, սպիտակեցան։ Ո՞ի
կի՞ն Ճանն-Բօօր, Պեռիկուից (Գաղղ.), 108 տա-
րու մեռաւ, սև մազերը սպիտակեցան 90 տա-
րեկան հասակումը մինչև հարիւր տարին և ապա
մահուանից առաջ սպիտակեցան։

Ա երեւը յիշեցինք Գյուանսուա- ծանգո անու-
նով մարդուն, որ մեռաւ Օմիւանիայում 165 տա-
րեկան. երբ նա 100 տարու էր մազերը սևացան, 112
տարումը սևացան բեղերը և մօրուքը, նմանապէս
բուսան երկու ատամներ։

Բ էւշաէյն ասումէ մի կնոջ համար, թէ 60
տարեկան եղածին դադարեցաւ ամսական արեան
հոսումը ծննդականութիւնից յետոյ, և յետոյ
կրկին 75 տարումը յայտնուեցաւ և շարունա-
կուեց մինչև 99 տարին։

Գ և ս բ ի Գ.

Մարդու կեանքի բնական սահմանը։

Մարդը երկայնակեաց կնորանիների դասա-
կարգին է պատկանում, ուստի մեր կեանքի
կարգութեան մասին արտոնջլ անհիմ է։
Հ ա ւ է բ ո

Ենիշատակ ժամանակներից սկսած՝ մտածող
մարդիկ ջանացին որոշել մարդկային կեանքի
բնական չափը և սահմանը։ Գէզիօդ հաշումէ,
թէ ագռաւը ապրումէ մարդից ինն անգամ ա-
ւելի, եղնիկը ագռաւից—ըսրս անգամ աւելի և
այն. և այս հաշեւը շարունակումէ նա մինչև
փիւնիկս թռչունը և ծովահարսը, որոնց գոյու-
թեանը չէր կարելի չհաւասալ այն ժամանակ։
Պինիոս աւանդումէ մեզ Պետեղերիսի կար-
ծիքը, թէ կարելի է Խտալից մէջ ապրել մին-
չև 144 տարի. յետոյ յայտնուեցաւ Խակուլափի
ուսումը, որ պնդումէր, թէ կեանքի սահմանը

չափուած է համաստեղութիւններով։ Այս ուսումնան հետեւողները այն կարծիքէն էին, թէ երկայնակեցութեան օրինակները հազուագիւա են անոր համար, որ շատ մարդիկ ծնում են լուսնի վերջերը և ապրելով վասնգաւոր տարիների ազգեցութեան տակ, չեն կարող 54 տարիից աւել երկայնակեաց լինել։ Խպիկէն չէր հաւատում, որ մարդ կարողանայ ապրել մինչեւ 112 տարի, Ինչրոզ—117 տարի։ Խարուսիների պրազան մատեանը կեանքի բնական չափը սահմանում էր 12 եօթնամեակի կամ 84 տարիների։ Առան նոյնպէս հաւատ էր ընծայում եօթնամեայ շրջաներին, որովք, նորահաշւովը, մարդու կեանքի մէջ տասն էին, այսինքն 70 տարի։ Պաղամէոսի, Կարտօնի, Երկօլի և այլ հնագարեան իմաստասէրների կալծիքով, մարդու կեանքի աեւողութեան վրայ ապրում էին մոլորակների ունեցած դրութիւնը նորա ծննդեան վայրինենին։ Այն իսկ չափաւորութիւն սիրող Կորնարօն հարիւր տարուայ կեանքը համարում էր վերջին սահման և հաւատում էր համաստեղութեանց մարդու ճակատագրի վերաց ունեցած ազգեցութեանը։ Իսյց, նորա կարծիքով, չափաւորապէս ապրելով, կարելիէ նշանաւոր կերպով յեաաձել մահուան տխուր վայրինեանը։ » Երկինքը ունի ազգեցութիւն, բայց ոչ գէպի չարն է գործածում այն՝ ասում էր նա։ Առ կարծիքների մէջ նշանաւորէ Իսուտաի

յայտնածը. նա գանելով որ օրգանական կեանքը ենթարկուած է խիստ մասեմատիկական օրէնքներին և Ճանաչելով 3 թիւր իրեւ հիմնական թիւ, կեանքի ամեն—մի շրջանին տուեց 3²=9 տարի, իսկ բոլոր կեանքը արտայայտեց այս ձեռով՝ 9²=81 տարի։

Իսուրատիս, գերմանացի երևելի բնանաբանը, բնական կեանքի չափը հասցնում էր 4000 եօթնեակի, կամ 76 տարու, 3 շրբաթի և 3 աւոր։

Ինւֆֆոն, հիմք առնելով իրան բնաբանութեանը օրէնքները՝ հասաւ այն եզրակացութեանը, որ կեանքի չափը գտնելու համար հարկաւոր է գիտենալ թէ որչափ ժամանակ է գործածում կազուածքը (organisme) զարգացման մի յայնի աստիճանին համանելու համար։ Իսյց այդ երեւելի բնագէտին յայտնի չէր հիմնական օրէնքը, որով այդ հալցը նա վճռել կամիր, զարգացման գործողութեան վերջանալուն ճիշտ նշանները նա չգիտէր։ Ուեր ժամանակը, գաղղիացի ուսումնական Գլուրանը գտաւ այդ նշանը ուկորների կատարելապէս աճման և միաւորութեան մէջը, որ աւարտում է մարդու մօտ մինչեւ 20 տարին, ձիուն՝ — 5 տարին, առիւծին՝ 4 տարին, շնոր 2 տարին։ Իսազմապատկելով այդ թւերը հինգ անգամ, գտնում ենք, որ ձին ապրում է 25 տարի, առիւծը — 20, շունը — 10 — 12, և այլն. այսինքն զարգացման

շըանից հինգ անգամ աւելի: Եռ այսպէս, բնական կանոնով, մարդու կեանքը պետք է երկարէ հարիւր ասրի:

Գլուրան աւելի առաջ անցաւ: Հիմնելով ձալլերի կարծիքի վերայ, նմանապէս և երկարակեցութեան անսարսակուսելի օրինակներին, որ պատահում են թռչունների, ձկների և կաթնատուն անսառների մէջ, նա բաժանում է կեանքը երկու աւսակի՝ „սովորական“ կեանք և „բացառական“ կեանք. այս վերջնոր կարողէ առաջինից կրիսապատիկ երկար լինել և այսպէս ուրեմն հանել մինչև 200 ասրի:

Գլուրան ընդարձակելով կեանքի սահմանը այս կարգով պետք էր մի նոր դասաւորութիւն աար կեանքի զանազան շրջաններին: Կորա սիսաեմայ հասակը կամ կեանքի շրջանը չորս կրիսապատիկ կարգերի են բաժանուում:

Եռաջին մանկութիւն՝ ծնած օրից մինչև 10 աարին, երկրորդ մանկութիւն՝ 10—20 աարին:

Եռաջին երիտասարդութիւն՝ 20—30 ա., երկրորդ երիտասարդութիւն՝ 30—40 ա:

Եռաջին կատարեալ հասակ՝ 40—55 ա., երկրորդ կատարեալ հասակ՝ 55—70 ա:

Եռաջին ծերութիւն՝ 70—85 ա., երկրորդ ծերութիւն՝ 85 մինչև մահ:

Գլուրան ընդարձակում է մանկութիւնը մինչև 20 աարին այն հիման վերայ, որ միայն այդ աա-

րիքում վերջանում է ոսկորների լիակատար զարգացումը և դադարում է մարմնոյ աճիլը դէպի երկայնութիւն:

Եթէ նա երիտասարդութեանը 40 աարի է տալիս, գորա պատճառը այն է, որ մինչև այդ տարին վերջանում է մարմնոյ միւս մասերի աճումը. որովհետեւ 40 տարիից յետոյ աւելացածը միայն ճարպ (իւղ) է լինում:

Չափաւոր հասակը նա շարունակում է մինչև 70 աարին, որովհետեւ մարմնոյ բոլոր մասունքը ամրանում են վերջնականապէս 40 մինչև 55 տարին, և այդ դրութեան մէջ մնում են մինչև 70 տարին:

Յետոյ սկսում է ծերութիւնը: Գլուրանի կարծիքով, ծերութեան յատկանիշն շամները են՝ պատրաստ ունեցած ուժի կորցնելը, առանց նորը ձեռք բերել կարենալու:

* * *

Հայլէր և Հուֆլունդ, մեր ժամանակի այդ երկու նշանաւոր բնաբանները, դեռ Գլուրանից առաջ ընդարձակ ասպարել բաց արին մարդկային կեանքի երկատեւութեան վերայ քննութիւններ անելու, որ միշտ սիրելի նիւթ է եղած մարդկանց երեակայութեան:

Հայլէր, հիմնուելով գիտնական փաստերի և

պատմական հետազոտութիւնների վերայ, կեանքի սահմանը իննուուն կամ հարիւր տարին ճանաչեց: Իւաւական ժամանակ յետոյ ձուֆլանդ, ուրիշ գաղաբարներ իրան ուղղեկից ունելով, հասաւ միենոյն եղակացութեանը; ինչպէս Պլուրան: Այդ երկու գիտականների կարծիքով, ամենաերկար կեանքը, որ մարդիկ ունեցել են մեզ ամենամօա ժամանակներում, ցոյց է աալիս այն ծայրաշեղ ասակիձանը, որին կեանքը ընդհանրապէս հանել կարող է, կամ ուրիշ խօսքերով, մեր գոյութեան կատարելասիպը:

Այդ երկարատեւ գոյութիւնները, որ մեզ իբրև բացառութիւններ են երեւում, իսկապէս ոչ այլ ինչ են, եթէ ոչ միայն օրինակներ, կամ տիպարներ նորա, ինչ որ բնութիւնը կարող է կատարել բարեյաջող պայմանների մէջ:

Վիւկա բժիշկը աւելի հեռուն գնաց: “Եանայումէ ծայրաշեղ երկայնակեցութեան վերայ, իբրև մի կոչման դէպի ուշիմ և ժուշկալ կենցաղավարութիւնը, որ անկարծիք միայն հասուցանում է խոր և առողջ ծերութեան, եթէ մինչեւ անդամ զիպուածով և ոչ բարեհաջող պարագաներ ի մէջ ևս բնութեան մի քանի ընտրեալները հասանէին անսովոր տարիներին:

—○:○—

Գ լ ո ւ ն Պ ա

Ենչատական պայմանները, որոնք օգնում են շատ ապրելու:

Օգուտքաղել մեր ունեցածից և գործել մեր ուժի շափով, իմաստունի կանոն է: Կիկերոն:

Երկայնակեցութեան նպաստող անչատական (individuel) յատկութիւնների գլուխը պէտք է ժառանգականութիւնը զնել: Մարդիկ, որոնց գերդաստանի մէջ եղած են շատ ծերեր, կարող են յուսուլ շատ ապրելու: Ոչուշ բժիշկը չէր գտած և ոչ մի ուժսունամեայ ծեր, որի սերնդի մէջ չլիներ երկայնակեց մարդ: Իսկ մի քանի գերդաստանների անդամներին, ասես, վճռուած լիներ վաղահաս մահը: Այսպէս, Տիւրկոյի յայանի ընտանիքի և ոչ մի անդամը ապրեցաւ 50 տարիէն աւելի: Դոցանից մինը, որ հոչակաւոր անուն էր ստացել անսնելով օրհա-

սի մերձենալը, փութաց վերջացնել իւր սկսած
աշխատասիրութիւնը—և արդարեւ մեռաւ 53
տարեկան:

Գրեթէ բոլոր մարդիկ, որոնքյայտնի են եղել
իրեւ երկայնակեաց, պատկանել են այնպիսի գեր-
դաստաններին, որոնք, կարծես թէ՝ ձուլուած
են մի առանձին կազմուածքով երկար ապրելու
համար: Հենրիխ Լնկինս, որ ապրեցաւ 169
տարի, կանչուած էր վկայութիւն տալու մի
անցքի վերայ, որ պատահել էր 140 տարի առաջ.
Նա ներկայացաւ դաստարան իւր երկու որդուոց
շետ, որոնցից երեցը 102 տարեկան էր, իսկ
կրտսերը—100:

Կորվեկիացի Յովսէփ Առւրբենկդոն մեռաւ
160 տարեկան և թողեց շատ որդիք, որոնցից
մեծը 103 տարեկան էր:

Ճան Վիօսակէ, որի հայրը մեռաւ 1820 թ.
117 տարու, ապրեցաւ 105 տարի: Կորա մի
հօրեղբայրը ապրեցաւ 107 տարի:

Վերեւում յիշած, 156 տարի ապրած, լե-
չացի գիւղականի հայրը մեռաւ 150 տարեկան:
Ծառմա Պառուէի, (որ ինչպէս վերը ասացինք,
մեռաւ 150 տարեկան) Անդղեոյ Կարոլոս թ.
սուած ճաշէն յետոյ) գերդաստանի մէջ համա-
րում են չորս երկայնակեաց մարդիկ՝ 112, 113
և 124 տարեկան: Կորա որդին մեռաւ 127 տա-
րեկան:

30

1782 թ. մեռաւ մի լեհացի կալուածատիրօջ,
Օռլուսկու, գիւղացին 155 տարու: Կա ամռա-
նացել էր 30 տարեկան հասակին: Վիօջ հետ
ապրեցաւ 113 տարի: Կորա հայրը ապրել էր
150 տարի:

1846 թ. Կոնդրիայումը (Գաղլ.) ապրումէին
երկու քոյրեր, Շանդալ որոնց մինն էր 106 տա-
րեկան, իսկ միւսը—104: Կորա բնակումէին ա-
ռանձին, մի քանի կիլոմետր հեռու և ոտով գնում
էին երեքն միմեանց տեսութեան և անցեալի
վերայ խօսելու: Կորա մայրը ապրել էր 110 տարի:

* * *

Կյժմ աշխատենք՝ բնաբանական (ֆիզիոլո-
գիական) նշանների վերայ հիմնուած, նկարա-
գրել այն մարդկու արտաքին պատկերը, որին
սահմանուած է երկար կեանք:

Կա միջահասակ է, մինչև անգամ փոքր ինչ
կորացած, ոչ վատուժ և ոչ պարարտ:

Երկար հասակով և նմանապէս գէր, պարարտ
մարդիկ կարող են շատ ապրել եթէ գործու-
նեայ կեանք վարեն և շատ շարժողութիւններ
անեն:

Փոքր հասակով և վտիտ մարմնով մարդիկ
կհասանին խոր ծերութեան, եթէ հանդարդ
բնաւորութեամբ լինին և սիրին խաղաղութիւն
և հանգստութիւն:

31

Գլուխը պէտք չէ փոքր լինի և ոչ շատ մեծ,
պարսնոցը՝ չափաւոր երկայնութեամբ, թիկունքը
բոլորայեալ, կուրծքը լայն, գուշա ելած, փոքր ոչ
աւելի դուրս տարածուած, արինքը բոլորածե,
ոռքերը, միջակ չափով, մկանունքը և ջղերը
հասա, բազկերակը հաւասար և արագ:

* * *

Գրանսուա Ռեկօն, որ ուսումնասիրել էր եր-
կայնակեցութեանը նպաստող ֆիզիքական պայ-
մանները համարում է, ուուֆլանդի կարծիքին
հակառակ, որ չէկ մարդիկ ընդհանրապէս առա-
ւել շուտ են մեռնում, քանի թիսամորթերը: Զիու
մազերի նման՝ կարծը մազերը, Ռեկօնի հետա-
զոսութեամբ, աւելի բարեյաջող նշան է երկա-
րասեւ կեանքի համար, քան բարակ և փափուկ
մազերը: Աշէ կուրծքը ծածկուած է խիտ մա-
զերով, նոյն խակ գիտնականի նկատողութեան հա-
մաձայն, այնպիսի մարդու կետնքը չէ կարող եր-
կար լինել: Իսայց այդ վերջին գուշակութիւնը
հաղեւ թէ հիմնաւոր է և հերքում է բազ-
մաթիւ փաստերով: Օսորօրինակ, թառմա Պառ-
ուէի կուրծքը, ինչպէս նորա դիակը բացող բժշկը
վկայուում է, խիտ մազերով ծածկուած է ե-
ղած: Ընդհանրակին, եթէ վիստերը և ոռքերը
մազու են, եթէ աչքերը քիչ խոշոր են և բիբերը

32

կանանչ, ակնաթերթքը՝ միխրազյն, փոքր՝ կորա-
ցած, այդ նշանները կարող են նախագուշակ հա-
մարտուել երկայնակեցութեան:

* * *

Վնդղից երեելի կանցլերը մեծ նշանակու-
թիւն էր տալիս մարդու ձեռքերի կազմութեան
մի քանի մասնաւորութիւններին, երկայնակեցու-
թեան վերաբերմանբ: Կորա կարծիքով թաթը
պէտք է լինի լայնասարած, ողորկ և քիչ գծե-
րով, և նոյն խակ գծերը խոր ճեղքուած լինելու
չեն: Եյդ ցուցումները վերջին հարկն էր, որ
վճարեց Ռեկօն գիտութեամը, և որ առաջին ժա-
մանակներումը մեծ փառք ստացան, բայց վեր-
ջումը կորցրին իւրեանց բոլոր համարումը և նշա-
նակութիւնը: Մեր խօսքը Զեռնահմայութիւն
կոչուած ուսման վերայ է: Մարդկային կազ-
մուացքի բոլոր մասերի մէջ, որոնցից կարելի
էր գուշակել կեանքի երկարասեւութիւնը, ձեռքը
ուստումնասիրութեան առանձին առարկայ էր դար-
ձել միջին դարերում: Կորա վերայ նայում էին,
ինչպէս մի բաց դիքի վերայ, որի մէջ դրած է
մարդու ծակատագիլը: Իսութ մասար շրջապա-
տող զիծը անուանուում էր „կեանքի զիծ“, և
նայելով ինչ երկայնութիւն, լայնութիւն և խո-
րութիւն ունէր նա, զանազան եղրակացութիւն-

3

33

Գլուխը պէտք չէ փոքր լինի և ոչ շատ մեծ,
պարանոցը՝ չափաւոր երկայնութեամբ, թիկունքը
բոլորացեալ. կուրծքը լայն, դուրս ելած, փորը ոչ
աւելի դուրս տարածուած, սրբնքը բոլորածե,
ոսքերը, միջակ չափով, մկանունքը և ջղերը
հաստ, բազկերակը հաւասար և արագ:

* * *

Թրանսուա Իւկօն, որ ուսումնասիրել էր եր-
կայնակեցութեանը նպաստող ֆիզիքական պայ-
մանները համարում է, ուռիշանդի կարծիքին
հակառակ, որ չէկ մարդիկ ընդհանրապէս առա-
ւել շուտ են մեռնում, քանի թխամորթերը: Զիու
մազերի նման՝ կարծր մազերը, Իւկօնի հետա-
զոտութեամբ, աւելի բարեյաջող նշան է երկա-
րատեւ կեանքի համար, քան բարակ և փափուկ
մազերը: Եթէ կուրծքը ծածկուած է խիա մա-
զերով, նյյն իսկ գիտնականի նկատողութեան հա-
մաձայն, այնպիսի մարդու կեանքը չէ կարտղ եր-
կար լինել: Իսայց այդ վերջին գուշակութիւնը
հաղեւ թէ հիմնաւոր է և հերքում է բազ-
մաթիւ փաստերով: Օսորօրինակ, թռոմա Պառ-
ուէի կուրծքը, ինշպէս նորա գիտակը բացող բժշկը
վկայուում է, խիա մազերով ծածկուած է ե-
ղած: Ընդհակառակն, եթէ զիտերը և ոսքերը
մազոտ են, եթէ աչքերը քիչ խոշոր են և բիբերը

32

կանանչ, ակնավթերթքը՝ մոխրագոյն, փորը՝ կորա-
ցած, այդ նշանները կարող են նախագուշակ հա-
մարուել երկայնակեցութեան:

* * *

Անգլից երևելի կանցերը մեծ նշանակու-
թիւն էր տալիս մարդու ձեռքերի կազմութեան
մի քանի մասնաւորութիւններին, երկայնակեցու-
թեան վերաբերմամբ: Կորա կարծիքով թաթը
պէտք է լինի լայնատարած, ողորկ և քիչ գծե-
րով, և նյյն իսկ գծերը խոր ճեղքուած լինելու
չեն: Այդ ցուցումները վերջին հարկն էր, որ
վճարեց Իւկօն գիտութեանը, և որ առաջին ժա-
մանակներումը մեծ փառք ստացան, բայց վեր-
ջումը կորցրին իւրեանց բոլոր համարումը և նշա-
նակութիւնը: Ուր խօսքը Ձեռնահմայութիւն
կոչուած ուսման վերայ է: Մարդկային կազ-
մուացքի բոլոր մասերի մեջ, որոնցից կարելի
էր գուշակել կեանքի երկարատեւութիւնը, ձեռքը
ուսումնասիրութեան առանձին առարկայ էր գար-
ձել միջին դարերում: Կորա վերայ նայում էին,
ինչպէս մի բաց գլքի վերայ, որի մեջ գրած է
մարդու ձակատագիրը: Իութ մատը շրջապա-
տող գիծը անուանուում էր „կեանքի գիծ“, և
նայելով ինչ երկայնութիւն, լայնութիւն և խո-
րութիւն ունէր նա, զանազան եզրակացութիւն-

3

33

ներ էին անում մարդկանց երկայնակեցութեան նկատմամբ։ Արիստոսէլ ևս նկատել էր, թէ երկայնակեցութեան նշան է այդ գիծը, եթէ խոր է և տարածուում է բոլոր թաթի երեսին։

* * *

Մի քանի բնաբաններ հաստատում են թէ տղամարդիկ, որոնք իւրեանց կազմուածքի փափկութեամբը նմանութիւն են բերում կանանց, նոցա պէս երկար կեանք են վայելում։ Երդարեւ կանայք աւելի շատ են ապրում քան տղամարդիկ—մի անչաւասապութիւն, որով բնութիւնը ջանք է անում վերականգնել այն անչաւասարա կշռութիւնը, որ առաջ է գալիս աղայոց, աղջկանց դէմ, աւելի մեծ թւով ծնուելուցը։

* * *

Երկայնակեցութեան բարեյաջող պայմանների կարգում պէտք է դասել և գործարանների աճման դանդաղութիւնը։ Մենք արդէն տեսանք, որ կենդաննեաց և բռուսոց թագաւորութեան մէջ առաւել երկար կեանք ունին այն տեսակները, որոնց զարգացումը դանդաղ է կատարուում։ Այդ գոյութիւններին հարկաւոր է աւելի երկար ժամանակ, որ հասնին այն կատարելութեանը,

որին ընդհանրապէս ընդունակ են նոքա. անոր համար էլ նոցա կազմուածքը առաւել ամուր է լինում և կենսական ոյժերը առաւել զարգացած։ Ո՞րչափ դանդաղ են անցնում կենդանիները կեանքի զանազան շրջանների միջով, որ հասնին կատարեալ հասունութեան, այսինքն ատամների ելնելը, մազերի, մօրուքի, եղջուկների և այլն բուսնիլը ո՞րչափ ուշ է կատարուում, այնչափ երկարաւել է նոցա գցութիւնը։

Ընումը ընդհանրապէս աւելի արագ է կատարուում տաք երկիրների մէջ, ուստի և հիւսիսում առաւել յաձախ ենք պատահում երկար ապրող մարդկանց։

Գան Մինկեռ առաջ է բերում յետագայ դէսքը, իբրեւ մի նշանաւոր օրինակ տարօրինակ արագ զարգացման, որի հետեւանքը եղած է արագահաս ծերութիւն։ Ա ենդրիոյ Վլատիալս. Օ, թագաւորի որդին, Լուգովիկոս Ի., աշխարհ եկաւ բնութեան պայմանած ժամանակից առաջ։ Երկու տարեկան հասակումը նորաթագաւոր օծեցին, վեց տարեկան յաջորդեց նախը հօրը, տասն և չորս տարումը երկայն մօրուք ունեցաւ, տասն և հինգ տարումը ամումնացաւ, տասն և ութը տարումը նորա մազերը սպիտակացան, քասն տարեկան նաև մեռաւ։

* * *

Պատառական ընդունակութիւնների վաղա-
հաս զարգացումը պէտք է նոյնպիսի մնասա-
կար երեւոյթ համարել ինչպէս վաղահաս ֆի-
զիզբականը: Եւ այսպէս զուր չեն ասում շատ
երեխանների համար թէ՝ „նորա խելքը տարիքի
համեմատ չէ, նա չի ապրիլ“

Հանձարաւոր երեխաններից քիչերը ապրում
են, կամ եթէ ապրում են, ոչ երկար: Պախա-
րակելի է ներկայ դաստիարակութեան ձեւը, որ
նազատակ ունի բռնադատական միջոցներով երե-
խայոց և պատաննեաց մնաւորական ընդունակու-
թիւնները զարգացնելու: Դաստիարակութեան
այդ եղանակը սպաննում է դեռահաս մնաւորա-
կան և ֆիզիզբական ոյժերը, դեռ նոցա երեւան ել-
նելուց առաջ: Հումքանի հին գերմանացւոց բար-
ձր հասակը և մարմնոյ պինդ կազմուածքը արգա-
սիք է համարում դաստիարակութեան ողջամիտ
եղանակին, որով նոցա հմասութիւնները ձեռք
էին բերուում ծանր և աստիճանաբար:

* * *

Օօրեղ առողջութիւնը, որ առաջ է գա-
լիս կազմուացքի բոլոր ունակութիւնների (func-
tion) կատարեալ հաւասարակշութենիցը, ող-
ջախոհ կեանք վարած, կարող է գրաւական
լինել երկայնակեցութեան: Ասկայն չէ կարելի

ասել, թէ տկար կազմուածքով մարդիկ չեն կա-
րող ապրիլ մինչեւ ծերութիւն: Խարխուլ առող-
ջութիւն ունեցողներ, ինչպէս մենք պիտի տես-
նենք այս գլքի միւս գլուխների մէջ, շատ ան-
գամ աւելի լաւ են դիմադրում վտանգաւոր հի-
ւանդութեանց, քան առողջ կազմուածքով մար-
դիկ, և ապրում են մինչեւ խորին ծերութիւն:
Մի քանի հիւանդութիւններ, որոնց հետեանքն
լինում է մարմնոյ վասուժութիւն, եթէ կանո-
նաւոր բժշկուին, կարող են կեանքի երկարանալու
պատճառ լինել. այդ ցաւերը նորոգում են գոր-
ծարանները, փոխելով հին և փշացուած հիւ-
թերը նորերի հետ: Այդ իսկ պատճառով մի
երեկոյ բժիշկ ասում էր՝ „առողջանալը նոյն է,
ինչ որ երիտասարդանալը“:

Գ Ա Ր Ա Խ Ե Վ

(Ծը որպէս աղբիւր կենաց:

Օդը կամ ռուճու և տալս կամ
թունաւորում է—միջին սահման չկայ:
քօնսակրին

Ո՞ի անգղիացի բժիշկ առում էր, որ եթէ
նորա առաջարկէին անպիտան կերակուր կամ
անպիտան օդ, նա կընտրէր առաջինը, իբրև եր-
կու չարեաց փոքրագոյնը:

Ո՞եր կեանքի ընթացքը առաւել երկար և ա-
խորժ անելու ամենածիշդ միջոցը անտարակցյա-
պին կլինէր, եթէ ամեն մարդ սովորէր կանոնա-
ւոր կարգով շունչ առնել, եթէ նա, աւելի պարզ
ասած, ենթարկէր իրան շնչառական մարմնա-
վարժութեանը, որովհեաւ մինչեւ այժմ մարդ-
կային ազգը շունչ է առնում մեքենապէս, ա-
ռանց հասկանալու, անչափ, անհաշիւ:

Գերմանացի բժիշկ Լիւտաերբախ, որ նուիրել

էր իրան շնչառութեան գործարանների ուսում-
նասիլութեանը, առաջարկում է քսան երեք
եղանակներ օգը ներջնչելու և արտաշնչելու հա-
մար: «Աս այնպիսի ոգեւորութեամբ է բացատ-
րումիւր կանոնները, որ ակամայ յիշեցնումէ մեզ
հոչակաւոր գաղղիացի աստեղաբաշխ Լագորին,
որ ամեն անգամ քամու աղացք տեսնելիս, հանում
էր իւր գտակը գլխից, ցանկալով ցոյց տալ իւր
պատկաւանքը գեափի օդի ոյժը և մարդկային
հնարագիտութիւնը, որ կարողացել էր հնազան-
դեցնել իրան այդ կամակօր տարրը»:

Մի կոլմ թողած գերմանական արտակենդրո-
նութիւնը, այնու ամենայնիւ, հարկաւոր է ձաւ-
նաչել այն անկարծիք ձշմարտութիւնը, որ շն-
չառութեան գործողութիւնը կարեւոր գեր է
խաղում մարդու կեանքի և նորա երկարատեւու-
թեան մէջ:

„Աեանքը և կլակի բոցը նորանով են միմեանց
նման ասում է Աիւվյէ, որ ոչ մինը և ոչ միւսը
գյութիւն ունին առանց օդի“:

Մարդ կարող է ապրիլ շատ օրեր, մինչեւ
անգամ շաբաթներ առանց կերակրի, բայց առանց
շնչառութեան և ոչ երկու վարիեան կարող է
կենալ: Ու ոք երկբայում է այդ ստիպողական
անհրաժեշտութեանը, և սակայն քիշերին յայտ-
նի է այն մասնակցութիւնը, որ ունի մթնոլորդի
օդը կենսական երեւոյթների մէջ:

Որպէս զի մաքուր կամ փշացուած օդի շնչառութեան գործարանների վերայ ունեցած ներգործութիւնը կատարելապէս հասկանանք, պէտք է մտաբերենք, որ մլմնոլորտի օդը անցանում է մեր թոքերի միջով տասն և վեցից մինչև տասն և ութն անգամ մի վայրկենի մէջ. պէտք է գիտենալ, որ ամեն մի շնչառութեան ժամանակ թոքերի մէջ մտնում է մինչև կէս լիտր օդ, այսինքն մի ժամուայ մէջ 500 լիտր:

Այս գործողութիւնը կատարուում է անգատար, որ և գիշեր, քնած ծամանակ, ծննդեան վայրկենից մինչև վերջին շունչը: „Օդը շնչառութեան հացն է“, ասաց Պակս Վիմօն բժիշկը: Եւ եթէ օդը մնուցանում է կեանքի լապտերը և այդ լապտերը այդպիսի մեծ քանակութեամբ է գործածում նորանից, հարկաւոր է, որ նա բոլորին մաքուր լինի, որ նորաս մէջ չլինին ոչինչ վնասակար խաւնուրդներ: Թռչունները, չնայելով իւրեանց արագ աճմանը և սեռական անչափաւութեանը համեմատաբար մարդից երկար են ապրում, և այդ յատուկ այն պատճառաւ, որ նոքա ծծում են մաքուր օդ, և այդ է նոցակազմուացքի ամենագլխաւոր նպաստակը: Թռչունոց թոքերի մակերեւոյթը բավկաթիւ ծակերով հաղորդակցութիւն ունի մարմնոյ բոլոր մասերի հետ, մինչև անգամ ոսկորների և փետուրների հետ: Բնաւանի թռչունները, որ գետ-

նից չեն բարձրանում, աւելի շակաս ընդունակ են երկար ապրելու, համեմատելով այն տեսակների հետ, որոնք բնակում են բարձր տեղեր և թռչում են օդի աւելի բարձր շրջաններում:

* * *

Համեմատեցէք երկրագործին որ բնակում է գաշաելում, արհեստաւորի հետ, որ փակուած է նեղ սենեակի կամ շնչափակ արհեստանոցի մէջ: Մէկը ծաղկում է առողջութեամբ, միւսը դրժգոյն և վասոյժ է: Զանազանութիւնը առաջնում է այն պատճառից, որ մինը գտանուում է կենաց և առողջութեան աղբիւրի մօտ՝ շնչում է մաքուր և առատ օդ, մինչդեռ միւսի թոքերը ծծում են ապականուած օդ, այն էլ անբաւական քանակութեամբ: Պի փորձաւու բժշկի հարցըն, թէ ինչ միջոց կայ մշտական առողջութեան, պատասխանեց՝ „օդի մէջ ապրիլ“:

* * *

Որպէս զի կարողանանք հասկացողութիւն կազմել օտար մասնիկների աշագին քանակութեան վերայ, որ պարունակում է իւր մէջ մաքուր կարծուած մլմնոլորտը, բաւական է նայել մուժ սենեկի մէջ զարկած լուսոյ ճառագայթի վերայ:

Նորա մէջ լողումեն բիւրաւոր փոշիների, բարձրացած կերակրից, հագուստից, սենեկի զարդերեց և այլն:

Ասացինք թէ թաւնոց ոսկորների մէջը դատարկ է և թէ նոքա մասնակից են չնչառութեան գործողութեանը: Պուշէն գտաւ մի ամրոցի մէջ պահած սերամարդի ոսկորների մէջ բրդեղէն և կերպասեղէն, բաց գոյնով ներկած, շորերի կառուանք, որ ամրոցի նախկին տէրերի զգեսաների մնացորդներ էին: Ի՞նդհակառակն, մի հացագործի հաւի ոսկորները լիքն էին ալիւրով և կօշա շորերի կառոներով: Եծիսագործի հաւի ոսկորները լցուած էին ածուխի փոշիով:

* * *

Շաս գործարանների և արհեստանոցների մթնոլորդը պարունակում է իւր մէջ վնասակար օտարօաի մասնիկներ, որոնց թռքերի վերայ ունեցած ներգործութիւնը կարող է տխուր հետեւանքներ առաջ բերել: Ժամացոյցի պաքներ շենողների հարիւրից 55ը բարակացառով են հիւանդանուում: Շիֆֆիլդում պողպատ որոճողներից գրեթէ բոլորը մեռնում են վազահաս մահով: Կորան 2500ից հազեւ 35ը համնում են 50 տարուայ և 70—45 տարուայ: Բժշկապետ Ահյուր նկատել է, որ պատառաքաղ ողորկողներից ոչ մինը ալ-

լում է մինչև 36 տարի: Ի՞նդհամերապէս ովքան բարակ լինի փոշին, այնքան աւելի դիւրին թափանցում է մարմնոյ նելքին գործարանների մէջ:

* * *

Փակուած բնակարասնների օդը ապականուում է ոչ միայն նորանում լողացով փոշիներից, այլ և նոյա բնակիչների չնչառութիւնից: Մարդը իւր չնչառութեան ժամանակ ծծում է մթնոլորդի կենսական մասը (թթուածինը) և նորա տեղ արտաշնչում է նոյնչափ ածխաթթու: Չափահաս մարդը արտաշնչում է մինչև 18 լիսու այդ վնասակար գագից մի ժամի մէջ: Դորանից մենք կարող ենք չափել այն օդային թոյնի քանակութիւնը, որ հաւաքուում է թարսնների և երաժշտական դահլիճների մէջ, երբ մեծ բազմութիւն ժողովուած է լինում:

Անդկաստանում Վնդղեացիք 146 մարդ փակել էին երեկոյին մի նեղ քան քառակուսի ոսք մեծութեամբ, սենեկի մէջ, որ օդի շարման համար ոչ մի անցք չունէր, բացի դռան վերացի փոքրիկ ծակիցը: Վինչև առաւատեան երկուժամբ այդ թշուառներից 96 հոգի խեղդուած էին, լուսոյ գէմ երբ բանախն դռները բացին, միայն 23 մարդ կենդանի դասան, նոյա էլ շատ ողբալի դրութեան մէջ:

Դորա նման մի դէպք ևս պատահեցաւ Վեւս-
արիայի պատերազմից յետոյ. երեք հարիւր աւս-
արիայի գերիներից, որ փակուած էին գետնա-
հարկի մէջ, մի քանի ժամուայ միջոցումը մե-
ռել էին 260 հոդի: Այսպիսի հարիւրաւոր օրի-
նակներ կարելի է հաշուել:

* * *

Պարապ տեղը չէր ասում Ճա Ճա Որուսո,
թէ մի մարդու շնչառութիւնը թոյն է միւս
մարդկանց համար: —Օդը, որ միանդամ եղել է
թռքերի մէջ, կորցրել է իւր կիւասական սկզ-
բունքը, նման է կիւնդանիների աղքին, որ ոչ
միայն մննդեան համար պիտանի չէ, այլ և մին-
չե վերին ասախճան վնասակար: Մարդ ապա-
կանում է օդը ոչ միայն իւր շնչառութեամբը,
ծծելով թթուածինը և արտաշնչելով ածխային
թթուն, այլ ապականում է նորան նաև զանա-
զան օրդանիքական նիւթերով, որոնցմով լիքն է
նորա մարմնոյ վերայից բարձրացած գոլորշին:
Օօրանոցների, հիւանդանոցների և դպրոցների
նեղ շնչուածքները, եթէ օդը կանոնաւոր կեր-
պով փոփոխելու յարմարութիւններ չունենան,
բուն կրառնան շատ հիւանդութեանց, մանա-
ւանդ տարափոխիկ տեսակներին:

* * *

Ոտերումն բժիշկ Լէմեր գտաւ փակուած
օդի մէջ անհամար բազմութիւն միկրոսկոպիքա-
կան բյուրի և կիւնդանիների: Ճուրլը, եթէ նաև
քիչ ժամանակ մնայ փակուած, անժարշ օդի
մէջ, վնասակար կրառնայ առողջութեան:

Ժանէլ բժիշկը Խրիմու պատերազմի ժամա-
նակ այցելելով Կերչի հիւանդանոցը, շատ զոչ
մնաց վերաւորուածների դրութենից: „Ինձ այդ
ամեննեին չէ զարմացնում, ասայ նա վերակա-
ցուին, որովհետեւ գուք լւաւ խնամք էք տա-
նում հիւանդների վերայ և ձեր պատուհանները
առանց ապակիի են“:

—Եյդ հեշտ բան է, ասաց վերակացուն, ես
կհրամայեմ, որ ապակիներ դնեն:

—Եյդ որ անէք, պատասխանեց Ժանէլ, ձեր
հիւանդները հարբուխ չեն ստանալ, բայց նոքա
այն ժամանակ կմեռնեն աիֆից: Վրդարեւ ա-
պակիները դրուեցան և Ժանէլի գուշակութիւնը
կատարուեցաւ:

* * *

Բաւական է որ օդը 10% ածխային թթու-
պարունակէ իւր մէջ, որպէս զե նա մաշ պատ-
ճառէ մարդու, առանց հազի կամ շնչարգե-
լութեան նշանների կանխապէս երեւալուն: Եթէ
աւելի պակասքանակութեամք էլ օդի մէջ գտնուի
այդ գուղը, անզգալի կերպով վտանգաւոր աւե-

բուժներ կանէ մարդու գործարանների մէջ:—
Եւելի ստէպ նա ապականումէ փակուած քնա-
կարանների օղը, ուստի և շատ հետաքրքրէ լի
է քննել զանազան պարագաները, որոնցից առաջ
է գալիս այդպիսի ապականութիւնը:

Խնչէս վերը ասացինք, մարդը արտաշնչումէ
մի ժամուայ մէջ մինչև 18 լիսոր ածխաթթու:—
Եյդ քանակութիւնը նշանաւոր կերպով աւելա-
նումէ սաստիկ շնչառութեան ժամանակ: Տղա-
մարդիկ, համեմատելով կանանց հետ, աւելի
շատ են արտաշնչում ածխաթթուն. այդ զա-
նազանութիւնը առաւել նշմարելի է 30ից մին-
չև 40 տարին: Պարարա անձինք աւելի են դուրս
տալիս, քան վասուժները: Քննոյ ժամանակ պա-
կասում է նորա քանակութիւնը, պակասում է
նոյնպէս, եթէ մարդ մնունդը անբաւականացու-
ցիչ չափով ընդունի:

Խմբեղէն կերակրների գործածութիւնը աւե-
լացնում է այդ գաղի կազմուիլը և բաժանուիլը,
իսկ ոգեղէն խմիչքները ակարացնում են այդ
գործողութիւնը:

(Օդի կենաւական մասերը ներշնչելից և ած-
խաթթուն արտաշնչելից մժնոլորդի օդը վերջա-
պէս բոլորովին անպիտան պիտի դառնար շնչա-
ռութեան համար, եթէ բարեինամ բնութիւնը
օգնութեան չհամեր և չվերականգնէր հաւա-
սպասկութիւնը բոյսերի միջոցով: Պարզուն

հակառակ, բոյսերը արտաշնչում են թթուածինը
և ծծում են ածխաթթուն: Աակայն այդ գոր-
ծողութիւնը կատարուում է միայն օրուայ մէջ,
արեւի լուսոյ աղդեցութեան ասկ, իսկ մթու-
թեան մէջ աերեւները նոյնպէս գուրս են տալիս
ածխաթթու: Եյսպէսով մեխտումէ, թէ ի՞նչ
պատճառաւ վնասակար է գիշերները ծառերի
տակըջելը կամննջարաններում բոյսեր պահելը:

Մարկս բնագէտը փորձելով բոյսերի շնչա-
ռութեան օրէնքները զննելիս նկատեց, որ վեց
ժամուայ միջոցում, զանգակի տակի օդի մէջ, ուր
դրուած կար մի վարդ, ճրագը երկու անգամ
մարեցաւ—մինչև այն ասաիճան խանդարուած
էր օդը: Պարկս ասումէ թէ՝ հոսաւէտ և
թէ առանց բուրմունքի ծաղկիները հաւասարա-
չափ թթուածին են ծծում գիշերները:

* * *

‘Օաղեկներից բարձրացած յնդական նիւթերը
ոչ միայն ապականում են օդը, այլ և, եթէ նո-
քա նեղ և փակուած բնակարանների մէջ ժո-
ղովուին, կարող են թունաւոր դառնալ մարդու
համար:

Դարնի վարդագոյն ծաղեկը գիշերը ննջարա-
նում գրած մաչ է պատճառել այնաեղ քուն
եղողներին:

Լճնդոնում անկորուց մէջ մեռած գտնուեցաւ

մի կին. նորա մահը առաջ էր եկել փոքրիկ
ննջարանում դրած շուշանների բուրմունքիցը:

Քժիշկ Տոխլէռ տեսել է մի աղջիկ, մեռած
մանուշակի հոտերից:

Մի քանի տեսակ պատուզների հոտը նոյնավիսի
ներգործութիւն ունի, ինչպէս ծաղկանցը:

Եխոնում, մի այլի կին թողել էր իւր ննջա-
րանի մէջ մի քանի զամբիւղ դեղձ, որ միւս օրը
քաղցրաւէնի պիտի պատրաստէր. բայց առաւօ-
տուն նորա մեռած գտան ննջարանում:

Մի բարդցեղէն շինողի աշակերտին նարին-
ջով լեցուած սենեակում առաւօտու գտան
խեղդուելու դրութեան մէջ. բժշկի եռանդուն
միջամտութիւնը փրկեց նորա մահից:

Երկեւիլի սաստիկ հօնի ևս կարող է նյին
չեաեւանքները առաջ բերել. Մի կին, գնելով
այդ պաղից մի մեծ քանակութիւն, դրաւ իւր
սենեկի մէջ: Գրացիները, տեմնելով որ նա տա-
նից դուրս չէ գալիս, մտան նորա սենեակը և
գտան նորա կիսամեռ դրութեան մէջ:

* * *

Մի քանի ծաղկանց բուրմունքը սաստիկ ներ-
գործում է ջղերի վերայ, մանաւանդ զգայուն
կանանց:

Ամուէլ Լէւէլ բժիշկը տեսել է մի կին, որ
կարմիր վարդի հոտիցը ուշաժափ էր լինում.

իսկ Խնօկէաիս Ճ պապի բժիշկը, Օ պքիս,
չէր կարող ամսել ազիտակ վարդի հոտը:

Մշկահոս առողջափ հոտը երթեմն կանանց սաս-
տիկ թալկացում է պատճառում:

Դրաբիօն ծաղիկի հոտը առաջ է բերում զլը-
խի մէջ սամափիկ ցաւ և ծանկութիւն:

Կունութիւնը, բայց դլխացաւից, աչքերի մէջ
ցնցումներ է պատճառում:

Մենք բաւականում եմք այս օրինակներով.
Թէպէտ կարելի էր դեռ շատերը առաջ բերել:

* * *

Մաքուր օդը անգին գանձ է ամեն հասակի
մարդու, բայց մնաւանդ նա օդտակար է երե-
խաների և ծերերի համար:

Երեխայից սաստիկ շարժողութիւնները և
արեան արագ պտտիլը պահանջում են մժնոլոր-
դական օդի մի առատ հօսանք դէպի թոքերը:
Զէ կարելի չգատամպարտել այն մայրեին, որնկը
սովորութիւն ունին երեխայից օրօրցները և ան-
կողինները ամեն կողմից վարագումներով պատապա-
րելու, որով խեղձերը ստիպուած են լինում մնա-
նալ փչացուած և խեղդուկ օդով: Երեխայն
քնած ժամանակը պէտք է իւր բոլոր կուրծքով
շունչ առնէ: Վմեն օր, ամեն եղանակի, մաքուր
օդի մէջ զբոնուլլ անհրաժեշտ պայման է երե-

Խայից առողջ լինելուն, մանաւանդ քաղաքներում բնակուղներին: Արեւու ճառագայթները նոյնպէս շատ օգտակար են նոցա, եթէ սաստիկ չեն այրում:

Ինչ որ վերաբերումէ ծեր մարդկանց, պէսք է ասել որ մաքուր օդի օգուտը նոցա համար աւելի նշմարելի է լինում, երբ նոցա շնչառութեան գործարանները ենթարկուումեն անատօմիքական փոփոխութիւններին: Առւրծքը (կուրծքի վանդակը, զաքիւղը) կամաց կամաց կորսնցնումէ իւր առաձգականութիւնը (élasticité), այդ պատճառաւ նա բարձրանումէ ծանր և անբաւական: Գորանից զատ՝ թոքերի ներքին անցքերի թիւը պակասումէ և այդպիսով փաքրանումէ այն մակերեւոյթը, որի միջոցով օդը արեան մէջ պիտի ծծուիր: Առանից հետեւումէ, որ ծեր մարդկանց աւելի օդ է հարկաւոր, քան երիասարդներին, որպէս զի կազմուածքը, այդ անբարեյաջող պայմանների մէջ, իրան հարկաւոր եղած օդը սասանալ կարողանայ:

Եթէ առողջ մարդը մաքուր օդի պէսք ունի, ևս առաւել կարեւոր է նա հիւանդի համար: Մի ժամանակ Հռոմում այսպէս անուանուած մեթօդիսն երի բժշկական աղանդը կար, որ հիւանդութիւնները բժշկում էր ամենապարզ, առողջապահական օրէնքների վերայ հիմնած, միջոցներով: Վանաւանդ նոքա ստիպում էին իւրանց հիւանդներին օդ ներա քաշել որպէս զի

առողջանան: «Հարկաւոր է, ասում էին այդ բժիշկները, օդի վերայ աւելի մեծ ուշադրութիւն դարձնել քանի թէ կերակրի վերայ, որովհետեւ մենք երկու անդամ ենք ուտում օրուայ մէջ, իսկ շունչ ենք աւնում անդադար:»

Մեթօդիսանները դնում էին հիւանդներին, նայելով ցատի աետամին, մեծ կամ փաքր, հիւսիսային կամ հարաւային կողմը դարձած, ապացրած կամ պաղեցրած, սենեակի մէջ: Վենեակները երբեմն հոտաւէտ գոլորշեով լեցնում էին: Լոյսը նոյնպէս մեծ գեր էր խաղումնոցա բժշկութեան մէջ: «Կոքա գնում էին հիւանդներին շատ անդամ գեանայարկերի և ստորելկիւայ անցքերի մէջ, գետինը ծածկում էին խաղողի և մասակրի ծառի տերեւներով, եղեւների սատերով ուռոգում էին մաքուր ջրով և օդը անդադար նորոգում էին առանձին փուքսերի և հովհարների միջոցով,

Գ Ա Ր Ե Ւ Յ Ա .

Լոյսը և ջերմութիւնը կեանքի համար անհրաժեշտ են:

«Լոյսը և կեանքը պյառքէս սերտ կապուած
են մէկմէկի հետ, որ առանց լցոփ կեանք չկայ»:
Բ Ի Ւ Խ Ն Ե Ր :

Եղբ բնութեան Անձ Երարիչը ասաց՝ „Եւ-
զեցի լոյս“—«Եա» կեանք տուեց աշխարհին:

Եռանց լոյսի՝ բոյս և անհասուն կիթառամին
և կմեռնին:

Յուրա միժութեան մէջ գրուած բոյսը ձբգ-
տումէ դէպ այն կողմն, որտեղեց զարնումէ արե-
փ լոյսը: Եթէ դնենք մի ծաղեկ երկու լուսանցք
ունեցող սենեկի մէջ, նա կդառնայ դէպի առա-
ւել շատ լոյս առողջին: Խեղճ բանդարիկեալը
բնակնասպէս զգումէ, որ այնտեղ նա կդանի
իրան համար ոյժ և առողջութիւն:

„Բոյլոր ծաղեկների մէջ, ասումէ մի բանա-
սաեղծ, կեանքի ծաղեկը ամենից աւել կարօտ

է արեւի“: Ան բնակած շրջանները, որչափ
շատ տաքանան արեւով, այնչափ աւելի առող-
ջարար կրառնան: Վմեն մարդ գիտէ սպանիա-
կան առածըլ թէ, „ուր արեւը չէ մանում, այն-
անդ յայսնուումեն հիւանդութիւնը և բժիշկը“:
Կարելի է ասել, որ ամենասառողջ տունը ապա-
կիից շնուրածը պիտի լինէր, որաեղ ցանկա-
նումը էր առզիւլ յոյն փիլխառին:

Թէ կենդանիք թէ բյանը լոյսի են կարօտ,
որպէս զի առողջ ապրին և բնութենից նոցա վե-
րայ գրուած գերը կասարիւլ կալողանան:

Յայսնի է, որ միժութեան մէջ կեցած բյանը
գունատ, ակար, անհամ են և անկալուղ պաղա-
բելութեան: Լոյսի ազգեցութենից զվկուած՝
նոքա չեն կարողանում գուրս առալ թթուածինը,
որ բուսոց կազմուածքի ամենանշանաւոր մասն է
կազմում:—

Եյդիսի երեւոյթներ կարելի է նկատելնաև
մարդու վերայ: Լոյսի բացակայութիւնը, մա-
նաւանդ, եթէ նորա հետ միանան նաև թացու-
թիւն, օդի անմաքրութիւն և ցուրտ, ամենա-
վասնապատոր հիւանդութիւնների պատճառ կը-
դառնայ: Վյն մարդը, որ իւր կեանքի մի մասը
անցուցել է վաս. լուսաւորուած տեղերում,
շունչ է առնում զժուար և ասկաւ, ուրեմն և
անբնական: Ոյլեշոտ ապացուցեց, որ մարդու
գուրս առուած ածխաթթուի քամակութիւնը
կախումունի լոյսի ներգործութիւնիցը, —որչափ

սասաթիկ լինի լցոփի ցժը, այնչափ շատ է արտաշնչում մարդ այդ գաղից: Ացոփի նուազութիւնը արգելումէ նաև գոլորշին բարձրանալը մարմնոյ վերայից: Յետոյ երեւան են ենում արեան պակասութեան հետևանքները — մարմնոյ գունատութիւն և հոգեկան և մարմնական ցժերի անկումը: — Ացոփից զրկուած երեխայը կորանցնում են իրանց բնական աշխուժութիւնը, մեծանում են դանդաղ և զարդանում են անկանոն կարգով:

Անուանի բնագէտ Ո՞ին—Լցուարդսի հետաքրքրական փորձը ցոյց տուեց, թէ ինչպիսի ազդեցութիւն ունի լցոլ կենսական երեւոյթների վերայ: «Ա իջեցրեց Աէն գետի մէջ երկու արկղ որոնց մէջ զլուած էին գորտի սաղմեր և որոնք ջռւր առնելու համար փոքրիկ ծակեր ունեին: Երկղերից մէկը ասպակիից էր շնուռած, իսկ միւսը երկաթից: Աաղմերի գորտ դառնալը կատարուեցաւ ամբողջապէս առաջի ամանի մէջ, մինչդեռ երկրորդում ուր լցոլ չէր կարող թափանցել, 12 սաղմից գորտ էին գարձել միայն երկուսը:

Ո՞ի ուրիշ բնագան — Ո՞րդէն փորձեր արեց երկու ամանների վերայ, որոնք լցուած էին մաքուր ջռով: «Առցանից մին ենթարկուեցաւ լցոփ ազդեցութեանը, և շուտով սկսան ջրին մէջ ծնուել վանազան միքրոսկոպիական կենդանիներ (infusorium), իսկ միւս ամանը, որ դրաւած էր

մթութեան մէջ, ոչինչ կենսական երեւոյթներ ցոյց չտուեց:

Ո՞ի ուրիշ փորձի ժամանակ, ջրով լեցուած երկու ամանները այսպիսի հետեւանք տուին. լուսաւորուած ամանին մէջ առաջ եկան միքրոսկոպիական կենդանիներ, իսկ մթութեան մէջ թողածին — նոյնպիսի բցսեր:

Պերջապէս մի ամբողջ շարք ամանների, որ ենթարկուեցան աղօտ կամ զօրաւոր լցոփի ազդեցութեանը, ցոյց տուին, որ ո՞չսափ սասաթիկ լինի ներգործող լցուր, այնչափ առելի բարձր դասին կպատկանին ծնած կենդանիների տեսակները:

* * *

Ացոփի ներկայութիւնը անհրաժեշտ է ձեւի զարգացման համար: Ո՞ին-Լցուարդս կարծում է, որ կենդանեաց ցեղերը, մթութեան մէջ մնալով, կարող են փոխել իրանց բնական տիպը: Հումքով իւր ճանապարհորդութիւնների ժամանակ նկատեց, որ վայրենիների մէջ, որոնք իրանց տաք կլիմաններում մնան են գալիս առանց զգեստների, ուրեմն և ապրում են հանապազարեւի տակ, ու ապատական համար համար արեւի տակ, չեն պատահում մարդիկ մարմնաւոր պակասութիւններով: Տարակցոյ չկայ, որ մէր երկիններում լցոփի պակասութիւնը պատճառ է լինում զանազան ծուռթիւնների և մարմնոյ

թերութիւնների, նմաննապէս և երեխացից վեր-
նոտութեան և արիւնի տակառանալուն:

Ընութիւնը սերա կապերով միացրել է լոյսը
և ջերմութիւնը, այնպէս -որ մի քանի գէպըե-
րում գժուար է որոշել մինի ներգործութիւնը
միւսից: Այդ ինչպէս էլ լինի, կայ մի առաղջա-
պահական մեթօդ, որին մենք այժմ անառես ենք
առնում, բայց որը միացընում է իրան մէջ օդի,
լոյսի և ջերմութեան ազդեցութիւնը: Այդ մե-
թօդը, որ հին ժամանակները ընդհանուր գործա-
ծութիւն ուներ, կոչուումէ իոնոլատիո (արեգակ-
նային բաղանիս): Յունաստանում ինչպէս Պլատոն
սպասումէ, ծեր մասրդիկ սովորութիւն ունեն
բոլորովին մերկ և բովիկ ման գալ արեւի տակ,
ծծել առլով իրանց մէջ բարելի ճառագայթ-
ները: Հռոմում շատ տանիքների վերայ շե-
նուած կային ճեմելու համար առանձին առ-
փարակ տեղեր, որ solarium (արեւօթիկ) էին
կոչուում: և նշանակուած էին յատուկ արեգակ-
նային բաղանիսների համար: Պլինիոս կրտսերը
ծոսմի Ապուրինա անունով բաղաքացու կենցա-
ղավարութիւնը պատմելիս, ասում է, որ այս
ծերունին ամեն օր, ձմեռը 9 ժամին և ամառը
8 ժամին առառօտեան, ման էր գալիս բոլորովին
մերկ իւր solarium -ի վերայ: Յէլիուս - Կուռէ-
լիանուս բժիշկը, որ ժամանակակից էր Գալլէնի,
գովեստով է խօսում արեգակնային բաղանիսների
մասին և նոցա բուժիչ ներգործութեանը վերայ

շատ հիւանդութիւնների գէմ: «Աս խորհուրդ էր
առլիս այն կերպով զործածել այդ բաղանիսները,
որ արեւի ճառագայթների միակերպ ներգործու-
թեանը տակ գտնուեն մարմնոց բոլոր մասերը,
բացի գլխիցը, որ պէտք է ծածկուած մնար:

Վկիցէննաս, արաբացի հռչակաւոր բժիշկը և
վիլխովիսն, որ ապրում էր մեղնից 9 դար ա-
ռաջ, նոյնպէս նշանաւոր բուժիչ զօրութիւն-
էր վերաբերում արեգակնային բաղանիսներին:
»Ով որ ենթարկումէ իրան արեւի ճառագայթ-
ների ներգործութեանը և միենցն ժամանակ
շատ շարժողութիւններ է անում օդի մէջ, նա
ազատ է մնում շատ աեսակ հիւանդութիւն-
ներից« ասում է նա: Օգուշանալու է միայն
արեւի տակ անշարժ մնալուց և սովորելու է
ասաիճանաբար նորա ճառագայթների ներգործու-
թեանը:

Մեր ժամանակի սովորութիւնները և հիւսի-
սային ցուլս երկիրների կլիման չեն ներում մեղ-
արեգակնային բաղանիսները կանոնաւոր գործ-
ածել այն ձեւով, ինչպէս անում էին այդ յոյ-
ները և հռովմացեցիք: Յայտնի բժիշկ Մ. Լ.
Թիւքքը առաջարկում է զոյա աեղ գործածել
արուեստական կերպով տաքացրած օդային բաղա-
նիսներ, որոնց մասնակցէր նաև արեւի լոյսը:
Այսպիսի բաղանիսները, ասում է նա, որ առան-
ձին բնակարաններում ջերմանայի նմանութեամբ
շինուած պիտի լինին, եթէ գործածուին, կարող

են պահպանել մեզ շատ ակարութիւնների դէմ
և օգնել կեանքի երկարանալուն“։ Աւելացնենք
մեր կողմից, որ նոցա գործածութիւնը շատ օդ-
տակար կլինէր վատոյմների, ծերերի, կանանց,
նոյնպէս և արեան ստակասութիւն ունեցողներին,
և այն մարդկանց համար, որոնք կորուսել են
իրանց ոյժը անչափաւորութիւններով, ինչպէս և
հիւանդ և ակար երեխաններին։

Գ Ն Ո Ւ Խ Լ Հ

Չափաւորութիւնը և մարսողութեան առսղա-
պահութիւնը։

«Չափաւորութեամբ ապրողնն—երկար
կեանք»։ ԵԿԿԵՊԻ ԱՐԴՅՈՒՆ

Պերսիոս կոչում էր չափաւորութիւնը հրա-
շալի ընդունակութիւն, գուսար խոչեմութեան,
մայր ամեն առաքինութեանց, ընկեր խմասառու-
թեամն։ „Ո՞վ սուրբ, մաքուր չափաւորութիւն
—բացականչում է Կորնարօ իւր գլուածքների
մէջ—մարդիկ պէտքէ մեծարեն քեզ։ Դու պահ-
պանում ես նոցա թանկագին բարիքը, կեանքը և
առողջութիւնը, ամենամեծ պարգեւը, որ եր-
կինք կարողացել են չնորչել մարդուն այսաեղ
երկրիս վերայ“։

Եւ արդարեւ, չափաւորութիւնը պահում է
մարդու ֆիզիքական և բարոյական ոյժերը մի
բարդաւոր ներգաշնակութեան մէջ և առաջ-
նորդում նորա դէպի երկար կեանք։ Բայց այս-

բանով չել վերջանում նորա երախտիքը. նաև ոչ
միայն երկարացնում է գոյութիւնը, բայց և
հասցնում է բնական մաշուան, առանց ցնցում
ների և հիւանդութեանց: Չափաւորութեանը
ապրած մարդը մեռնումէ այնպէս, ինչպէս կան-
թեղը մարտում իւղի պակասելու պատճառաւ,
բայց ոչ բանի կերպով մարեցնելուց:

Ավ որ կամենում է առողջ լինել և ծերացած
մեռնել, նորան հարկաւոր է, ամեն բանից
առաջ, պահպանել իւր ստամիքսը ամեն փոր-
ձանքների դէմ: Պատճում են, որ բժիշկ չէկէ,
իւր հարուստ հիւանդներին այցելութիւն անե-
լիս, սաէպ մանում էր նոցա խոհանոցները:
„Բարեկամներ, ասում էր նա խոհարարներին,
ընդունեցէք իմ շնորհակալութիւնը բոլոր ծա-
ռայութիւնների համար, որ դուք մասաւցանում
էք մեզ բժիշկներիս: Առանց ձեր օգնութեանը
առանց ձեր սոււմներին և համեմներին, մենք
ստիպուած պիտի լինենք մեռնել քաղցածու-
թեան մէջ“:

Մեզանից 18 դար առաջ, Անեկա ասում էր
փափկասէր հառվմայեցիներին. „Դուք գանգա-
սում էք ձեր հիւանդութիւնների բազմութեանը
վերայ—արտաքսեցէք ձեր խոհարարներին“:

Պերսիոս բանաստեղծը միենցն առսակ ճառով
դեմում է նոցա իւր երկրորդ սատիրացին մէջ.
„Դուք պահանջում էք ոյժ ձվերի համար,
դուք ցանկանում էք առողջ ծերութիւն, բայց

ասսուածները չեն տալիս անոր համար, որ դուք
անչափ լավիում էք հիւթալից մներ և քաղցրա-
համհամեմներ ձեր կերակրների հետ: Խռիթէր
սպաննում ձեզ ձեր ազահութեան համար“:

Դիոգէնէս նկատում է, որ չափից դուրս
մնունդ սաացած մարմինը նման է մի ամզարի,
որին մէջ գիլուած է շատ ցորեն: „Առաջնին
մէջ հիւանդութիւններ են առաջ գալիս, իսկ
երկրորդում—միներ:

* * *

Օանազան համեմեղների գործածութիւնը
կերակրների մէջ ամենեւին վնասակար չէ ա-
ռողջութեան համար, եթէ խոհեմեւ չափուոր
կերպով է կատարուում: Ինքը բնութիւնը այդ
բանին մեզ օրինակ է տալիս, միացնելով մնագա-
րար կերակրներին հետ զանազան հիւթեր և
աղեր, որպէս զի նոքա աւելի համեղ լինին, և
կամ այն նպատակաւ, որ մարտղութիւնը դիւ-
րաւ կատարուի:

Տարաբաղդաբար, խոհանոցային նրբացած ա-
րուեստը, ցանկալով շողոքորթել փափկացած ճա-
շակին և քնած ախորժակը զարթեցնել ի չարն
է գործածում բնութեան ցուցումները: „Խոհա-
րարների խորամանկութիւնը, ասում է Պլու-
տարքոս, իրանց սոււմներով և համեմներով,
ստիպում են մեզ ուտել աւելի, քան թէ մեզ
հարկաւոր է“:

Երբ ախորժակի գործարանները արտեհուտական միջացներով գոգուռում են, մարդ ընդունումէ կերակուրը չափից գուրս շատ և սասարիկ բեռնատղուած սասանքը դանդաղ և թերի է կատարում իւր սիժից վեր աշխատանքը: Հասկանալի է, ինչ պատճառաւ մարտղութեան թերի և ծանր կատարուիլը, վերջ և վերջոց կցնցէ նաև ամենասամուր առողջութիւնը և կկարճացընէ կեանքը:

* * *

Տարակյս չկայ, որ ըստսաւորեալ մարդը խիստ շատ է ուտաւմ, մանաւանդ նորա գործածած մանդէն կերակրների քանակութիւնը շատ աւելի մեծ է, քան թէ կարեւոր է կեանքը պահպանելու համար: Ինութիւնը քիչովէ բաւականանում, բայց մենք արուեստապէս գոգուռումնք մեր ախորժակը: „*Plures occidit gula, quam gladius*“, ասաց Անեկայ ^{*)}:

Արէաները ճաշում էին միայն երեկոյեան ժամանակ, օրուայ աշխատանքները աւարտելուց յետայ: „Կոյա սրբազնն զբքերը խսախւ արգելում են վաղ առաւօտից կշատնալու սովորութիւնը: Եթիուրգոսի օրէնքների համաձայն, երեխայը պարտական էին ամեն ամիս ներկայանալ Ապարատայի մեծերին, և եթէ նոքա չափից գուրս

^{*)} « Վամնը առաւել է կոտորում, քան թէ սուրը »:

գերացած երեւէին, ենթարկուում էին պահեցողութեան և չափաւորութեան: Հին Գաղղիացւոց երեխայը, իրանց ասրիքի համեմատ, մի ահակ գոտի ունէին հագած, որի սահմանից գուրս թոյլ արուած չէր նոցա հաստանալ:

Կոյեալ դարու ամենասառաջաւոր բժշկներէն մին, Ֆրիդրիխ Հոֆմանն, հիանումէ մեր սրբազնն զբքերի քարոզած առողջապահական կամսների բարձր իմաստին վերայ: „Կոյա մէջ կրիսակի բարցականութիւն կայ, ասում է նա, բարցականութիւն մոաց և մարմնոյ“: „Կա նայում է պահեցողութեան վերայ իբրև մի ամենախելսցի կրօնական կանոնադրութեան, որ նըսպասառում է առողջութիւնը պահպանելու: Կոյա նկատողութեան համեմատ, պար գեղեցիկ կերպով յարմարեցրած է կենսական օրէնքներին, ի նկատի սոնելով այն մեծ փոփոխութիւնը, որ կատարուումէ բնութեան և մարդու կավմուածքի մէջ, գարնան գալովը:

Չմեռուայ ժամանակ, մարդու անընդհատ գործունէութիւնը և մարտղական գործարանների կանոնաւոր աշխատանքը շատացնում են արիւնը և ամրացնում մկանունքը: Բայց այդ հաւաքուած սիժերը մնում էն հանգստեան դրութեան մէջ, որպէս թէ քուն են լինում: Գարնան կենսասառ աղդեցութիւնը, դրում, զարթեցնում է նոցա գէպի նոր կեանք, և այս նեղ միջոցին, աւելի քան թէ մի ուրիշ ժամանակ,

կազեւոր է չափաւոր լինել ինչպէս մնունդի մէջ,
նոյնպէս և ուղիշ անսամնական գոգոմնէքների
բաւականացնելումը, որոնք այս միջոցին յայտ-
նում էն ամեն հրապուրիչ կերպարանքներով:

Ակայն, ամեն կրօնիների մէջ մենք գանում
ենք ահմանուած պասեր: Փիւնիկեցիք և Եսո-
րեսամացիք ունէին պրեազմն պասեր: Պարսկաց
բարձր գասին պատականող մողիլը կերակրուում
էին միայն պատուներով հացով և բանջարե-
ղեններով: Հնդկասամում, բրահմանները կերա-
կրուումէին միայն Գանդիչ գետի եզերքը բուսնող
պատուղներով: Հռոմում պասեր կային ի պատի-
հւալիտերի: Վակեգեմնացիք, մի քանի դէպ-
քերում, անսասուներին ևս պաս բռնել էին աս-
լս: Մահմետականները իրանց Ուամազանի պա-
սին ժամանակ, արեւի ծագելուց մինչև մարը
մտնելը, ոչ մի բան չեն ուտում, և հրաժարուում
են նաև ծխախոտի գործածելուց:

* * *

Հաստ սուրբ հայրեր, ամեն աեսակ վրկանի-
ների մէջ, հասան ամենախոր ծերութեան,
կերակրուելով մի միայն բուսական նիւթերով:

Ո՞ի աբեղայ, Մոխանաի վաճից, Ի՞ն ա-
նունով, որ 85 տարի ապրեցաւ, ուառումէր միայն
քացախի մէջ թաթախած խոտեղէններ:

Սուրբ Պօղոս-Ճգնաւոր, որ համարուումէ Ե-

րեւելքում վանական կեանքի հասաատողը, անա-
պատ քաշուեցաւ 22 տարեկան հասակին և այն-
աեղ ապրեցաւ մինչև 113 տարի, կերակրուելով
միայն խուրմացով:

Սուրբ Ենտոնիոս, որ մեռաւ 185 տարեկան,
90 տարի անսապատի մէջ անցրուց հացով և
ջրով, և միայն ծերութեան ժամանակ թոյլ էր
ապահա իրան մի քանի աեսակ բանջարեղէնների
գործածութիւնը:

Սուրբ Ժերոմ վիսյում է, որ սր. Խլարիօն,
Ծնայելով, որ բնականից ակար կազմուածք ունէր,
ապրեցաւ 84 տարի, որոնցից 70ը անցրուց ա-
նապատի մէջ, սասատիկ զրկելով իրան կերակրից
և զգեսաններից:

Հասաատում են, որ սր. Մակար անցնում
էր բոլոր մեծ պատր ծոմ պահէլով և միայն կե-
րակի օրերը ուտումէր կազամի մի քանի թեր-
թեր:

Սուրբ Առոնւալի ապրեցաւ. 112 տարի. սր.
Եւզիփիան 113., սր. Գիոնիփիոս 100., սր. Յակոբ
Ճգնաւոր 104 տարի., սուրբ Յակոբ կըրա-
սելը—96 տարի:

Ո՞ի յայնի բժիշկ, որ միջոց է ունեցել մօտից
գիտել անապատականների կեանքը, վկայում է,
որ, Ծնայելով բոլոր զրկանքներին, որոնց ենթար-
կում են իրանց այդ գասին պատականող կրօնա-
ւորները, հակառակ առողջապահութեան սկզբ-
նական օրէնքներին, նոցա կեանքը ոչ միայն չէ

կարձանում, այլ և անցնում է երկայնակեցութեան անհաւատալի սահմաններից էլ անդին:

* * *

Իժիշկ Իազիկի ճանաչում էր շատ տեւողական հիւանդութիւններով բռնուած մարդկանց, որոնք առողջացել էին պասերը խսախւ պահելուց յետոյ:

Յայտնի է Պոմպոնիա Ատափիուսի պատմութիւնը, որ, յուսահաւուած իւր առողջութիւնը վերականգնելուն վերայ, վճռեց մեռնելքաղծածութեան մահով և մի քանի օր բոլորովին առանց կերակրի մնալից յետոյ՝ առողջացաւ: Այս իրողութիւնից օգուտ քաղելով, մի Տիրոլի գիւղական դեռ մօտերումն բժշկում էր բոլոր հիւանդութիւնները քաղցածութեամբ (Hunger-Cur). Ուօկացիէն, Հռովմայեցի սենատորը, քաղցած պահելով իրան, բժշկուեցաւ պոդակրայից:

Կերակրների փոփոխութիւնը չափազնց օգտակար է առողջութեան: Հին ժամանակները մարդիկ համագուած էին այդ բանին, և ժամանակ առ ժամանակ մնի և ձկան տեղ, ամբողջ շափաթներ, չոր պատղներով էին կերակրուում: Այդ կանոնին հետևում էր և Պալէունի դպրոցը:

Չափաւորութիւնը, ինչպէս բժիշկ Շարրօն ասում է, ոչ միայն լաւ դեղ է ամեն հիւան-

66

զութիւնների գէմի բայց և նպաստումէ զգացմունքների նրբանալուն և զարգացնում է տպաւորութիւնները բմբունելու կարողութիւնը: Գիտուած է, որ քաղցած շանը հոսոտելիքն են նուրբ, իսկ քաղցած բաղեկն աչքերն են սուր: Մարդկանց մէջ ևս, շատակերները սակաւ ընդունակ են մոտաւոր աշխատութիւններին: Իռուլը մեծ գիւտերը և հնարքները քաղցած մարդիկ են արել: Լակեդեմոնացիք, որ պատմի էին ենթարկում սահմանից գուլա գիրացողին, այնպէս էին հաւատում, որ „հասացող մարդու խելքը չէ աւելանում“:

* * *

Չափաւորութեան վերայ խօսելիս, չէ կարելի չյիշել Վորնարօնն: Այս հռչակաւոր Աննետիցին, քաւասումն տարեկան հասակին, իւր անցուցած զբօնական կեանքիցը հալուած և մաշուած, և բժիշկների կողմից էլ իւր ճնկատագրին թողած, վճռեց ապրիլ ամենախիստ չափաւորութեամբ, և այդ տեսակ կեանք վարելով կարողացաւ մինչև հարիւր տարի ապրիլ: Նըրկու հարց գրաւում էին նորա ուշադրութիւնը. Բնու տեսակ կերակրուր և միջափ պիսի ուտէ, և Բնու խմելիք պիսի գործածէ: Չասա փորձերից յետոյ, նա մէկ ֆունթի հասցրուց իւր կերակրի քանակութիւնը, որ բաղկացած էր հացից, ա-

67

պուլից, մեր և մեկ և ՚ ֆունթ գինից: Ասկայն այդ պահեցողութեան հետևանքը այն եղաւ, որ Կորնարօ գերի գարձաւ իւր ստամբսին. մի անգամ քիչ էր մնացել պիտի մեռնիր, որովհետեւ մի ամենափոքր զանցառութիւն էր գործել իւր կանոնի գէմ:

Տայց չափաւորութեան վերայ խօսելու ժամանակ, Կորնարօ այնպէս խիստ չէ, ինչպէս կարելի էր ենթադրել: „Ամոնտաւոր իւրանք վարող մարդուն, ասում է նա, ոչնչ չէ հարկադրում, հետեւելով իմ օրինակին, ինձ պէս քիչ ուտել և հրաժարուիլ պառւզներից, ձուկից և ուրիշ կերակրներից: Եթէ ես քիչ եմուտում, պատճառն այն է, որ այդ քանակութիւնը բաւական է իմ փոքրիկ ուսամնքսի համար, եթէ ես մի քանի բաներից բոլորովին հրաժարուումեմ անոր համար է, որ նոքա ինձ վնասակար են: Ո՞չափ քիչ ուտենք մենք, ստամբսը այնչափ աւելի դիւրաւ կմարսէ կերակրութը: Վիենոյնը կարելի է ասել և խմէքների վերաբերմանը — պէտք չափաւոր կերպով գործ ածել”:

Այս խօսքերից երեւում է, որ Կորնարօն ոչ միայն հոգեկան հիւմնդ չէր, ինչպէս շատերը նորա ներկայացնում են, այլ և շատ բանաւոր մարդ էր:

* * *

Ասկայն պէտք չէ կարծել որ մարդ անպատճառ գասապարաելու է իրան իւր կերակուրը չափով և կշեռքով ընդունելու: Ամեն մարդ, որ կատարեալ առողջութիւն է վայելում, հարկաւորութիւն չունի ենթադրիկել իրան մի որ և է որոշ պահեցողութեան: Պէտք է ջանանք մեր կերակրները բազմակերպ անել ինչպէս խորհուրդ է սալիս Յէլզիուս. „Զհրաժարուիլ ճաշի ժամանակ ոչ մի աւսակ կերակրից, ուտել երբեմն աւելի երբեմն պակաս, մասնակցել ժամանակ առժամանակ շուայլ իննջոյքներին, իսկ ուրիշ անգամ յետ կենալ նոցանից, — մէկ խոպով գերի չգառանալ սովորութեանը”:

Ամենավասա սովորութիւններից մինը, որին գէմ բարքում է առողջապահութիւնը, է շատ պով ուտելը: „Շատ ծամելը և շատ ճեմելը (bien mâcher et bien marcher), ասում էր Բոսկիւն, Փարիզի գլխաւոր հիւմնդանոցի բժիշկը, երկար կեանքի երկու գլխաւոր պայմաններն են”: Հումբանդ նկատեց, որ բոլոր երկար ապագները, ծանը էին ուտում: Լաւ ծամած կերակուրը աւելի զիւրին խառնուումէ թուքի և սասամնքսի հիւթի հետ, որ մեծ նշանակութիւն ունի մարտողութեան դիւրաւ կատարուելուն համար:

* * *

Հիպակուսատէսի կարծիքով, վաս աստամներ ունեցողը չէ կարող շատ ապել: Տայց այդ

Եղբակացոթիւնը հազեւ թէ հիմնաւոր է: Ա-
 տամները կորցնելուց յետոյ էլ կարելի է հաս-
 նել խոր ծերութեան, եթէ մարդ հրաժարուի
 առաւել պինդ և դժուարամարս կերակրներից
 և աշխատի կերածը լաւ ծառելու: Պէտք է
 նկատել որ նախորդ սերունդների ասամները
 աւելի լաւ էին պահպանուում, քան մեր ժամա-
 նակներում: Այն պատճառամբ արգեօք, որ ա-
 ռաջները մարդիկ քիչ էին գործածում մնեցն
 կերակրներ, թէ անո՞ր համար, որ էին ժամա-
 նակներում ապք սուրՃ և թէյ չէին խմում—
 դժուար է հաստատ ասել. բայց նայելով չին
 գերեզմանների մէջ գտնուած գանկերն, մեր
 նախահարց ասամները հիմնալի կերպով էին
 պահպանուում: Այսպէս, օրինակի համար, այս
 դարու սկիզբներում, երբ փորեցին Շոտլանդիայի
 Կերտա քաղաքի մօտի գերեզմանոցը, այն-
 տեղ գտնուած գանկերի ծնունդը բոլորովին
 ամբողջ ասամներ ունեին:

* * *

Բժշկները և փիլիսոփանները համաձայն են
 այն կարծիքն որ կերակրները, որչափ կարե-
 լի, պարզ պէտք է լինին: Ամեն անգամ, երբ
 ես տեսնում եմ, առում էր Վզիսան, մեր այժմու
 մեղանները, ծածկուած աշխարհիս բոլոր չորս
 մասերից բերուած ուտելիքներով, իսկոյն միտու

են գալիս զանազան պօդակրամներ, աիֆեր, ջրբ-
 դոլական ցաւեր և ուրիշ շատ հիւանդու-
 թիւններ, որնք հէնց դուլա են նայում ամեն մի
 ամանի միջից:

Աստւանի բժիշկ Տիսսօի կարծիքով՝ առող-
 ջապահութեան ամենագլխաւոր կանոնը այն է,
 որ կերակրների տեսակները բազմաթիւ չլինին
 ճաշի ժամանակ, երկու կամ շատ շատ երեք
 տեսակը՝ բոլորովին բաւական է: „Ես ճանա-
 չում էի, ասում է նոյն բժիշկը, մի ծեր մար-
 դու, որ իւր առողջութիւնը վերականգնելու
 համար, քառասուն ապրեկան հասակին, վճռեց
 ուտել միայն մի աեսակ կերակուր: Ես իւր
 խօսքը բռնեց և ապրեցաւ 90 տարի, միշտ վա-
 յելելով առողջութիւն“:

Բայց եթէ կերակրների տեսակների բազմա-
 թիւ եղածը վեսասակար է ճաշի կամ ընթրիքի
 ժամանակ,—միւս կողմից էլ նոցա միակերպու-
 թենից ախորժակը կպակասի և մարմինը կթու-
 լանաց: Հարկաւոր է բազմակերպ անել կերա-
 կուրը և միևնույն ժամանակ—պարզ:

* * *

Ուտելու համար որոշած ժամեր ունենալու
 է: Այն ժամանակ մարտողութիւնը կազմուածքի
 համար սովորութիւն կդառնայ և աւելի զիւ-
 րաւ կվասարուի: Ունաւանդ այդ օրէնքին

Հարկաւոր է հետեւիլ ծեր մարդկանց, ակար
կազմուածք ունեցողներին և երեխայից: Ուռաւե-
լու ժամերի ընտրութիւնը կախուած է անձնա-
կան սովորութիւնից և աեղական պայմաններից:
Առօմայիցիք իրանց փառքի ամենալաւ ժամա-
նակները օրուայ մէջ հինգ անգամ էին ուստում:
Կոքա ունեին նախաճաշիկ (uentaculum), ձաշ
(prandium), նախընթրիք (merenda), լիթրիք
(coena) և յետընթրիք (commisatio) քնելուց ա-
ռաջ: Ըստ անգամ նոքա իրանց թոյլ էին
տալիս ուստել և երկրորդ նախաճաշիկը (gustatio):
Առօվմայեցոց կերակրների մէջ ունեցած չափա-
ղանցութիւնը այնաեղ էր հասնում, որ նոքա,
չկարենալով մալաւել կերածը, սասամքսը դատար-
կելու համար սախողուած էին լինում դիմել
արուեստական փսխողական միջոցներին:

* * *

Ըստակերների հակառակ՝ առօմնում կար մօ-
նօֆակների աղանդը, որ բաւականնում էր
օրուայ մէջ մի անգամ ուստելով: Ամբողջ օրուայ
կերակրը միանգամից ընդունելը այն պատճա-
ռաւ վնասակար է, որ սասամքսը լցուելով կե-
րակի աչաղին քանակութեամբ, մարտողութիւնը
գանդաղ և ծանր է կատարուում:

Ո՞ւր ժամնակներում սովորութիւն է օրուայ
մէջ երկու անգամ ուստել չհաշուելով թէյլ և

սուրձը. Ժամը 12 մինչեւ մէկը նախաճաշ են
անում, և չորսից մինչեւ վեցը—ճաշ այս բա-
ժանումը բաւականին յարմար է:

Միայն նախաճաշի ժամնակակ հարկաւոր է
չափաւոր ուստել մանաւանդ միեղին կերակրները,
որպէս զի ստամքսը մինչեւ ճաշ իւր աշխատանքը
կարտղանայ վերջացնել և հանգստանալ:

Որչափ աւելի մարդ պարապուումէ ձեռքի աշ-
խատանքով և շատ շարժողութիւններ է անում,
այնչափ աւելի մնադարար և կոշա պիտի լինի
նորա կերակուրը: Երեխայը առաւել սահպ պի-
տի ուստեն, որովհետեւ մարտողութեան և կազ-
մուածքի աձման գործողութիւնը նոցա մօտ ա-
ւելի արագ է կատարուում, քան հասակ առած-
ներին: Տարկքը անցուցած մարդիկ, ընդհակա-
ռակն, աւելի լաւ կարող են դիմանալ քաղցա-
ծութեան: Երբ կոմ Ուգոլինո գասապարաւե-
ցաւ իւր չորս գեռահաս որդւոց հետ միասեղ
քաղցածութեան մահին, նորա աչքի առաջ մե-
ռաւ չորրորդ օրը ամենից առաջ ամենակրասեր
որդին. մնացածները հետեւեցին նորա սասահա-
նաբար, իւրեանց տարկքի համեմատ, մինչեւ ա-
մենամեծը, և վերջապէս ութերորդ օրը մե-
ռաւ նաև հայրը:

* * *

Պարացէլս համեմատում էր մարդուն ծառի
հետ, որ աշնան վերջերում կորցնումէ իւր աեւ-
րեւները, ինչպէս մարդը կորցնումէ մարդը, և,
քանի ձմեռը մօտենայ, այնչափ աւելի կարկասի
կերակրի հարկաւորութիւնը:

* * *

Սասամքար մարմնոյ միւս անդամների ընտա-
նիքի մէջ՝ գլխաւորի գերն է կատարում—մի
ճշմարտութիւն, որ ծանօթ է մարդկանց շատ
հին ժամանակներէ իվեր և որ նիւթ է դարձել
„անդամների վէճը“ ասուած հանդածանօթ-
աւակին: Սասամքար մարտում, պատրաստում է
կերակուրը և յետոյ բաժանումէ մարմնոյ ամեն
անդամների մէջ, բայց ինքը զտանուումէ ուղեղի
ազգեցութեան տակ: Մարտողութեան վերայ
ազգումէ մարդու հոգու տրամադրութեան զա-
նապան փոփոխութիւնները, վրդովիչ կրքերը
դժուարացնում են կերակրի կանոնաւոր մար-
տուիլը, մինչդեռ հոգու հանդարա և ուրախ
տրամադրութեանը դիւրացնումէ այդ գործո-
ղութիւնը: Ո՞ի հին զիտնական ասում էր, որ
„Ճաշի ժամանակ բարկանալը միենայն է, թէ
կլել մի բարձ գնդասեղներով:“

Եթէ մարդ վրդովուած է, պէտք է կերա-
կուր չուտէ մինչեւ չհամգասամայ: Յաղերի ցըն-
ցումից գաղալում է ստամքսի նիւթի բաժա-

74

նուիլը, որ անհրաժեշտ է մարտողութեան կա-
տարուելուն. միենայն ներգործութիւնն ունի ստա-
մքսի վերայ նաև ստամքսի վիշտը: Ո՞ի քանի
թիշիներ նկատել են, որ շատ մարդկանց ախոր-
ժակը պակասումէ, մարտողութիւնը տկարանում
և իրանք նարխոնդրիա են ստանում այն պատ-
ճառաւ, որ կերակուր են ուտում միայնութեան
և ձանձրութեան մէջ:

Ո՞ի յայսնի բնաբան ասաց, „Ճաշի ժամանքը
պէտք է ամբողջապէս ստամքսին նուիլած. այդ
ժամանակը նա թագաւոր է:“

Վուանց չափից դուրս ստամքսին ծառայելու,
հարկաւոր է կրկին մի փոքր ուշադրութիւն
դարձնել կերակրների վերայ, որպէս զի մարդ
կովի կամ ձիու անտարերերութեամբ, խոտի պէս,
չուտէ: Եթէ կերակուրը մարդու ճաշակոմն է,
թուքը բերանուում բաժանուում է այնչափ, որչափ
որ անհրաժեշտ է մարտողութեան համար, իսկ
եթէ, ինչպէս Ո՞նտան ասում է, մարդ Ճաշի
նսաի միայն այն նպատակով, որ „իւր բաժինը
ուտէ“, նաև առանց ախորժակի—թուքը ամե-
նելին չէ բաժանուում:

Ո՞չ մի բան այն ստամքան չէ զիւրացնում
մարտողութիւնը, ինչպէս ուրախ տրամադրու-
թիւնը: Լակեդեմոնացիք ինչցոքի զահլիձների
մէջ զնում էին միշտ մի ծիծաղի արձան: Կոի-
ծաղը մի փոքր ցնցելով ստամքսը, օդնում է
նորսան իւր աշխատանքի մէջ: Պլուտամքս ասում

75

Էր, որ ծիծաղը ամենալաւ համեմնէ ամեն կերակների համար: Միջնադարեան իշխանները և բարոնները ճաշի ժամանակ շրջապատռմէին իրանց խեղասահներով և միմոններով որտոք իրանց կառակիներով զուարձացնում էին նոցա: Օրիծաղ սիրող մարդիկ գրեթե բոլորն էլ նկատելի են լինում իրանց պարագա մարմնով և երեսի թարմ կարմութեամբ:

Օդասկամբ է արդեօք մարտողութեան համար ճաշից յետոյ Ճեմելը: Հիպսիլիսատէս ասում է, որ „շարժողութիւնները անհրաժեշտ են ուսելուց առաջ“, երեւում է նա կամենում էր ասել մարմնամարդութիւնը և Ճեմելը: Պլուտալքոս այն կարծիքն էր, որ ճաշից յետոյ, ստամքսի գործունէութիւնը գուգուելու համար, պէտք է մնալ հանդարա զրութեան և ապօւթեան մէջ, զուարձանալով միայն ուրախ և ախորժելի խօսակցութեամբ: Տարակյոս չկայ, որ աւելուդ շարժողութիւնները հաւաքում են արիւնը ճեռքերի, ոսքերի և ընդհանրապէս մարմնոց մակերեւոյթի մէջ, որով նելքին մասերից պահասումէ արիւնը և մարտողութիւնը դժուարանում: Մի բնաբան (Քլուրան) մի այսպիսի փորձ արեց: Երկու շան միենայն ժամանակ միասեսակ կերակուր տրուեցաւ: Կոյանից մէկը գոյուեցաւ մի սենեկի մէջ, իսկ միւսը յուղարկուեցաւ որսի: Երբ մի քանի ժամից յետոյ շներին մեռուցին, առաջինի մօտ մարտողութիւնը

բոլորովին վերջացել էր, իսկ երկորդին դեռ նոր սկսելու վերաց էր:

* * *

Ընդհակառակն, մի փոքր Ճեմելը դիւրացնում է ստամքսի աշխատանքը: Խնչպէս Շօմել ասում է, հարկաւոր է մարտողութիւնը կառարել ոչ միայն ստամքսով, այլ և ոտներով: Սորա վերայ պէտք աւելացնել որ շարժողութիւնները չափաւոր պէտք է լինին, և ոչ մինչև դադրիլը: Բայց ակար մարդկանց համար աւելի լաւ է մնալ հանգիստ զրութեան մէջ:

Աերակուելու վերայ խօսելուց յետոյ, հարկաւոր է մի քանի խօսք էլ ասել այն գործողութեան մասին, որով գտատրկուում են աղեքները մարտողութիւնների մնացորդներիցը: Բժիշկները ամեն ժամանակ մեծ նշանակութիւն են առած այդ գործողութեանը:

Տօրդէ բժիշկի կարծիքով մարդս ապրում է այդ գործողութեան համար և այդ գործողութեան շնորհիւ: Դ' Ելամբէր ասում էր, որ ամեն մարդու համար մի ճշմարիտ երջակութիւն է բաւականութիւն տալ այն հարկաւորութեանը, որ յիշեցնում էր Եղեքսանդր Մակեդոնացոյն, որ նա աստուած չէ: Ունեկա կարծում էր, որ բեն moratum ventrem տալիս է մարդուն ապատութիւն իւր գործողութեանց

մէջ և առողջութիւն—երկու ամենամեծ եր-
ջանկութիւններ, միացած սերտ կապերով։ “Կա-
պոլէօն 1, որ միշտ ամրութիւն ունէր, ասում
էր, որ այդ թունաւորում է իւր կեանքը։

Չափաւոր ամրութեանը շատ անգամ մենք
պատահում ենք ամենաառողջ մարդկանց մօտ,
երբ նոքա, անսովոր մարմնաւոր աշխատանքնե-
րից, դադրած են լինում։ Ամրութիւնը նոյն-
պէս վնասակար երեւոյթ չէ, եթէ մարդու-
կազմուածքը բնականից ունի այդ սովորութիւնը։
Հաս անգամ ամենաառոյգ առողջութեան աէր
մարդիկ արտաքնոց են գնում շաբաթը, 10 օրը,
երկու շաբաթը մի անգամ։ Իժիշկ Գէէր ձա-
նաչելիս է եղել մի քահանայի, որ այդ գործո-
ղութիւնը կատարում էր 24 օրուայ մէջ մի ան-
գամ, առանց առողջութեան վնասուելուն։ Այս
զբքի հեղինակին պատմեցին մի կեոջ համար,
որ 116 տարի է ասպել, և որ երկար ժամա-
նակ գնում էր արտաքնոց մի անգամ ամսուայ
մէջ։ Ա օլտէր բերում է մի նոյնաղիսի օրինակ,
որ Իւսիէրին, որ մինչեւ 80 տարի է ասպել։
Իժիշկ Հէրէրգէն պատմում է իւր երկու հի-
ւանդնելի մասին, որոնցից մինը ամիսը մի անգամ
արտաքնոց էր գնում, իսկ միւսը 12 օրը միան-
գամ և երկումն էլ ամենալաւ առողջութիւն
էին վայելում։ Ա երջինը նաև հասանում էր
տարուց տարի։

Աշտական չափաւոր ամրութիւնը վասոյժ և

դիւրագողիու մարդկանց համար մինչեւ անգամ
օդակար է։ Իսյց եթէ նոքա անցնին սովորական
սահմանիցը և զանազան ցաւեր պատճառեն, այն-
ժամանակ հարկաւոր է պէտք եղած միջոցները
իդործ գնել։ Ա ենք մասդիր չենք այսաւել ա-
ռաջ բերել այդ միջոցները, որովհետեւ նոցա ընտ-
րութիւնը կախուած է մարդու կազմուածքի
յատկութիւններիցը. մենք միայն այնչափ ա-
սենք, որ լուծողական գեղեր հարկաւոր չէ ի
գործ գնել որովհետեւ, թէպէտ նոքա գատարկում
են աղեքները, բայց յետոյ առաջ են բերում մի նոր
աւելի սասաիկ ամրութիւն։ Ա մենալաւ առողջա-
պահական միջոցը, որով կարելի է կանոնաւորել
այդ գործողութիւնը այն է, որ պէտք է սովորու-
թիւն անել ամեն առաւօտ գնալ արտաքնոց,
չնայելով զգում է մարդ հարկաւորութիւն, թէ
ոչ Ասովութիւնը կյալթէ բնութեանը և կա-
նոնաւորութիւնը նիքն իրան կվերականգնի։

* * *

Հին ազգերի մօտ մեղը ընդունուած էր կեան-
քը երկարացնելու իրեւ մի հասասա միջոց։ Դեմո-
կրատէմին, որ հարկւր տարի ապրեցաւ, երբ հարց
առաջարկեցին, թէ ի՞նչ միջոցով նա հասաւ
խոր ծերութեան, փիլիսոփան պատասխանեց՝
“Պլայց իւղով, ներսից մեղով”։

Պիթագորաս, որ նոյնպէս շատ երկար ապրե-

ցաւ և միշտ լաւ առողջութիւն էր վայելում,
շատ մեղք էր գործածում: Պլինիոս և Գիու-
կիանէս մանաւանդ ծերելին խորհուրդ են տա-
լիս մեղք ուստել:

Մի ուրիշ լուծողական միջոց, որ հին ազ-
գերի մօտ մեծ գործածութիւնն ունէր, և որուն,
բացի գորանից, յատկացնում էին կեանքը երկա-
րացնելու ընդունակութիւնը է սեւ եղբորոսը:
Տակախուս ասում է, որ այս բայսի արմատը շա-
քարով կերած, երկար կեանք է տալիս: Աւան-
դութիւն կայ մի ծեր մարդու մասին, որ այս
արմատի օգնութեամբ 200 տարի է ապրել

Գ Հ Ո Ւ Խ Բ .

Խմիչքներ:

Ընդարձակ երկրներում ուր ափապետում է
մահմետականութիւնը, ուր ապրում են բրահմի և
բուդդայի երկրագուները, մարդեկ գնի չեն
խմում, և սակայն երկար կեանքի օրինակները շատ
յաճախ են պատահում:

Ու է վելու է—Փարիզ է:

Առողջապահական ուսմամբ պարապողները
շատ ժամանակ է, որ աշխատում են վճռելու
այն հարցը, թէ օգտական է արդեօք առողջու-
թեան իրեւ խմելիք միմիայն ջուր գործածելու:
Անուանի բժիշկներ, նոցա մէջ և չոփմանը,
պնդում են, որ ջուրը երկար կեանքի աղբիւր է:
Ճան Վինկլու օրինակ է բերում մի ծեր մար-
դու, որ 120 տարի է ապրել և մինչև իւր մահը
ոչ մի ատամ չէ կորցրել: Այս ծերունին ջրից
զատ ոչինչ չէր խմում:

Գաղղեացի յայտնի իրաւաբան—Անդրէաս Տե-
րակօ, իւր բոլոր երկար կեանքի միջոցումը խմում
էր միայն ջուր, և սակայն, բացի իւր սովորական

պարապմոնքներից, զբեց երեսուն հատոր գիրք և
հայր էր երեսուն զաւակաց:

ֆան Աղովի, որի մասին մենք արդէն յիշե-
ցինք և որը 119 տարի, 11 ամիս և 11 օր ապ-
րիլցաւ, նոյնպէս միայն ջուր էր խմում:

Վ իրաբյժ Տեղեն, ութուն տարեկան եղած՝
ասում էր, թէ նա իւր ծերութիւնը նորան է
պարտական, որ օրական մինչև եօթը կամ ութը
գաւաթ ջուր է խմում:

* * *

Ունչ այնպէս շոշափելի կերպով չէ ապա-
ցուցանում ջրի գործածութեան օգուար, ինչպէս
այն բազմաթիւ ազգերը, ուսումնականները և փի-
լիսովիանները, որոնց համար ջուրը եղելէ և այժմ
էլէ միակ խմելիք: Ֆ լով բաւականանումէ մարդ-
կութեան ինը տաներորդ մասը: Ճին ազգերը
ջուրը կոչումէին ստամոքսի բարեկամ“: Ճիպսո-
կրատէս ասում է, որ ջուրը դիւրացնում է սցդ
գործարանի աշխատանքը՝ aqua vorax. Պինուա-
րոս գովաբանեց ջուրը իւր երգերի մէջ. „Ֆ ուրը
չէ բորբոքյնում ուղեղը արուեստական կրակով,
բայց և նորանից միաբը չէ ազօտանում, հան-
ձարը չէ խաւարում“: Պիտտակէս, Պարուս
XII, շվեդացւոց թագաւորը, Գեմաթենէս, Ճալ-
էր, Վիլսոն միայն ջուր էին խմում:

Կեւթան նոյնպէս ուրիշ խմելիք չէր գործա-
ծում և ուտում էր միայն հաց, երբ խորինում

82

էր ամիեղերի շինուածքի գալանիքների մէջ,
որոնց պարզելը անմահցրեց նորա անունը:

Վաքուր ջրի գործածութեան շնորհիւ,
մեծանուն բնաբան Ճալէր, տասն և ութը
տարեկան հասակից սկսած, պահպանեց իւր ա-
ռողջութիւնը և մանաւանդ աեսողութիւնը;
Հնայելով սաստիկ լցոնի տակ շարունակ միկու-
կոպով պարապելուն:

Ճռովմայեցւոց զինուողները արշաւանքների
ժամանակ ուրիշ ոչինչ չեն խմում, բացի ջրից,
որին փոքր ինչ քացախ էին խառնում (rosea),
և սակայն բոլոր աշխարհիս ափեցին: Կարթա-
գինայի մէջ զինին բոլորովին արգելուած էր զին-
ուորներին:

Ճռֆլանդ ջրի բարերար ազգեցութիւնը այն
հանգամանքին է վերաբերում, որ նորա մէջ լուծ-
ուած կայ թթուածին, որը ջրին հետ միա-
տեղ մենք խմում ենք: Ես պատուիրումէ գործ
ածել միայն աղքիւրի ջրեր և խորհուրդ է
տալիս պահել գոց ամանների մէջ:

Ամենին յայանի է, թէ որչափ հիւանդու-
թիւններ բժշկում են այժմ հիգրոթերապիայի
(ջրաբուժութեան) միջոցով:

Ամենէյ ազատուեցաւ իւր սաստիկ գլխացա-
փցը, որ արգելում էր նորան պարապուել ու-
տումնական հետազոտութիւններով, ամեն առա-
ւոտ երկու գաւաթ սառ ջուր խմելով:

* * *

83

Այ հին գիտական ապացուցանում է, որ ջուր խմեղները երկար ժամանակ պահպանում են „սիրելու ընդունակութիւնը“ և ապրում են մինչև խոր ծերութիւն։ „Գինին, ասումէն նա, կարելի է անուանել „երկրի արիւնը“, բայց նա ամենաչափ թշնամի է նորա զաւակաց։ Գինիի պատճառած ամենամեծ վնասը այն է, որ նա զրդում է սեռական կրքերը. Vinum lac Veneris (գինին Ա եներայի կաթն է)։

Եյն կարծիքի պաշտպանողները, իբրև թէ գինին առաւել նպաստառոր է երկայնակեցութեանը, քան թէ ջուրը, առաջ են բերում Ա. Գրոց յայտնի խօսքերը թէ՝ „գինին զուարթացը նում է հոգին և մարմինը և նոր կեանք է պարզեւում“։ Եսքա հարբածների մէջ նոյնչափ բազմաթիւ ծերեր են գտնում, որչափ չափաւորապէս ապրողներին։ Ասում են, որ Ամսուզում մի կառավար, Օլդման անունով, այնչափ գինի է խմել որ եթէ նորա բոլոր քանակութիւնը ժողովուէր մի յարմար տեղ, նորա վերայ մի նաւ կարող էր լողալ և, չնայելով այդ սաստիճան անչափաւորութեանը, Օլդման մինչեւ 80 տարի ապրեցաւ։ Պատմումեն նոյնպէս իրանդացի Բրունի մասին, որ մեռաւ Կօրնվալիսի մէջ 120 տարեկան։ Ես միշտ հարբած էր և այդ դրութեան մէջ վախենում էին նորանից ամենքը — նաև մահը։ Ինչպէս պատուիցաւ, որ մի օր նա խմած էր և այդ օրն էլ հենց մահը վրայ հասաւ։

Անակրէօն սիրում էր գինին և գովեսաներ էր երգում նորա վերայ, և այդ արգելք չեղաւ հոչակաւոր բանաստեղծին ապրիլ մինչև 85 տարի։

Եյս վէճին մէջ, երկու հակառակ կողմերն էլ ծայրացեղութեամբ են վարուում։ Խմաստուն Պլուտարքոսը շաա անաչառ է այս հարցը վճռելիս։ «Ես սաստիկ յանդիմանութիւն է կարդում Լիկուրգոսին, որ նա ոչնչացրեց խաղողի այգիները այն նպատակով, որպէսզի իւր հապատակները հարթեցողութեան անձնատուր չլինին։ »Ը առաւելի խոշեմ կլինէր, ասումէն նա, եթէ օգնութեան հրաւիրուէին ջրային յաւերժահարսունքը«, այս խօսքերով կամենալով հասկացնել գինին ջրախառն խմելը — մի սովորութիւն, որ շաա ընդունուած էր հին ժամանակներում։

Յունաստանում, մանաւանդ Աթէնքի մէջ, գինին խմում էին երեք, չորս, մինչեւ հինգ անգամ ջրով խաւնուած։ Վաքուր գինի միայն հարթեցողներն էին գործածում։ Հին ազգերը ընդհանրապէս վախենում էին իրանց ոգելից ըմպելիքներիցը. մի փոքր չափից առելի խմելը կատալութեան էր հասցնում հարսաւցին տաքարիւն մարդուն։ Վաքուր գինիով հարուստ պաարիկները հարկում էին իրանց գերիներին, որպէս զի հարթեցնելով՝ ծիծաղին նոցա խղճակի դրութեան վերայ։

* * *

Զէ կարելի չհամաձայնիլ որ դիմիի չափաւոր գործածութիւնը, շատ դէպքերում, անտարակուսելի օգուտներ է բերում: Ամենից առաջնա օգտակար է ծեր մարդկանց համար, որոնց կավառածքը կազդուրում է, կանոնաւորելով արեան շրջահոսութիւնը, զրգուելով միանոնքների գործունեութիւնը: Խզուր չէ, որ դիմին „ծերութեան կաթն“ են կոչում:

Լիմիա կայսրուշին, որ 82 տարի ապրեցաւ, կարծում էր, որ իւր երկայնակեցութիւնը պարտական է գինիի գործածութեանը: Գինին չափազանց օգտակար է հասակ առած մարդկանց, որոնք ծանր աշխատանքներով են զբաղվում: Ընդհակառակին, նա վնասակար է պատանիներին, որոնց մասաղ ոյժերը պէտք չունին զրգուեցուցիչ միջոցների:

Գալիքն արգելում է գինին երիտասարդ մարդկանց մինչև 18 տարեկան հասակը, Պղաստոն—մինչև 22 տարեկան: Իսկ համար առաւել խիստ է և այդ արգելքը հասցնում է մինչև քառասուն տարին, թշու տալով այդ հասակում խմել միայն երկու բաժակ օրուայ մէջ, յիսուն տարեկանից սկսած—չորս և վաթսունից յետոյ—վեց:

Օգոստոս կայսրը գինիի օգուտը չէր կամենում ճանաշել և եղբ ռուսի ժողովութեան մէջ այդ խմիչքի թանկանարուն պատճառաւ տըրտունջ բարձրացաւ, նա պատասխանեց, որ

Եգիիպպասի առատաձեռնութեամբը Շռոմում ծարաւը յագեցնելու համար բաւականին ջուր կայ: (Եգիիպպաս իւր հաշլովը ջրանցքներ էր շենել):

Եյդ ինչպէս էլ լինի, ոլէտք է ուշադրութիւն գարզնել ջրի լաւութեան վերայ: Հիպակուրատէսի կարծիքով, վատ ջուր խմողները չեն կարտղ յուսալ երկար կեանք ունենալու—ընդհակառակն, նոքա ժամանակից առաջ են ծերանում՝ ante tempus serescunt: „Մեղանից ոչ առողջը և ոչ ակալը, առում է Կօլումելլա, կարող է երկար ապրիլ առանց լաւ ջրի“:

Հին Շռոմայեցիք, երբ մի նոր երկիր նուածում էին, ամենից առաջ զոհ էին մատուցանում աստուածներին, միեւնոյն ժամանակ քննում էին զոհուած կենդանիների փորոտիքը և եթէ վերաւոր և ապականուած գտնէին, այդ նշաններից եզրակացնում էին, որ տեղային ջուրը խմելու համար պիտանի չէ:

* * *

Ծնդհանուր ճանաչուած է, որ լաւ ջուրը լինելու է մաքուր, առանց հոտի, կակուղ, առանց օտար համի, ոչ աղի, ոչ լեղի և ոչ քաղցր, առանց անասնական և բուսական մասնիկների խառնուրդի: Իսաց կամ գոց ամանի մէջ մի փոքր մնալից յետոյ, նա ոչ մի անախորժ հոտ առա-

նալու չէ, պէտք է լսւ լուծէ իւր մէջ թէյը,
սուրճը և եփէ բանջարեղինները։ Լսւ ջրին
մէջ շատ փոքր պիտի լինի լուծուած հողայինն
մարմինների քանակութիւնը, բացի ածխաթթու-
ային կիրիցը, որ կարեւոր նիւթ է ոսկորների
աճման համար։ Գրի մէջ այդ աղի լինելը մա-
նաւանդ օգտակար է երեխաններին։

Վմենալաւ ջուրը—անձրեւայինն է։ “Առան
հարկաւոր է ժողովել անձրեւի սկսելուց մի ժամ
յետոյ, առանձին աւազանների մէջ, բնակարան-
ներից հետու։ Վնձրեւային ջուրը նման է եփուած
և գոլորշի դարձած ջրին, որը յետոյ լուծել է
իւր մէջ մթնոլորդի օդի դագերը. այդ տեսակ
ջուրը շատ օգտակար է առողջութեան։

* * *

Դաշի ժամանակ պէտք է մարդ աշխատի,
որ խմածը կերածի համեմատ լինի։ Որպէս զե
մարտորութիւնը կանոնաւոր կատարուի, պէտք
է ո՛չ շատ և ո՛չ քիչ խմել և թէ խմիչքը հար-
կաւոր եղածից աւելի ընդունուի, սառմաքսային
հիւթը կտկարանայ և կկողցնէ կերակուրը մար-
սիւ կարողութիւնը. բայց, միւս կողմից էլ, եթէ
ընդունուած խմիչքի քանակութիւնը անբաւա-
կան լինի, կերակուրը չէ կարող ինչպէս հարկն է,
թլչուիլ և լուծուիլ և այս պատճառուատ ստա-
մքսի գործը կրժուարանայ։ Դաշի վերայ մար-

88

դու համար հարկաւոր եղած խմիչքի չափը
կարելի չէ ճիշտ որոշել նա կախուած է կե-
րակի աեսակիցը, որ կարող է աւելի կամ պակաս-
պինոդ, չոր կամ ջրալի լինել նա կախուած է նոյն-
պէտչատ կամ քիչ քրաննելուցը, նոյնպէս օդի չո-
րութենիցը կամ թացութենիցը և այն։

Վատոյժ, մաղձու և զիւրագրգիւ մարդ-
կանց, նմանապէս նոցա, որոնք սովորաբար ամրու-
թիւն ունին, հարկաւոր է աւելի խմել քան թէ
արիւնոտ և գէր մարդկանց։ Վռանց սահմանիցը
զուրս ենելու, ընդհանրապէս պէտք է ուտելու
ժամանակ կլիին աւելի շատ խմել քան թէ քիչ
որովհետև ջուրը անհրաժեշտ է կազմուածքի
համար և մասնակցում է կինսական տնտեսու-
թեան ամեն ֆիզիկական և քիմիական գործո-
ղութիւնների մէջ։

Բնաբանները հաշուել են, որ մարդ օրական
չորս և կէս ֆունթ ջուր է կորցնում և եթէ
կերակրի, խմիչքների և մթնոլորդի միջոցով մենք
այդ կորուսար չվերադարձնէինք, մեր մարմինը եր-
կու-երեք շաբաթ անցնելուց յետոյ, փայտի պէս
պիտի ամրանար և չորանար։

Վմենքը զիւեն, որ մարմինի քրանած ժամա-
նակը սառ ջուր խմելը շատ վտանգաւոր է։

Վղեքսանդր Մակեդոնային, ինչպէս Կվինսու-
Կուրցիոս վկայում է։ Օկտոս գետի եղելքը շատ
աւելի մարդ կորցրուց, քան թէ Մարպէլայի պա-
տերազմում։

89

Դամին Պատմոցիսկ 1, գնդակախաղը ժամանակ սաստիկ առքացած՝ սառ ջուր խմեց և չորս օրից յետոյ մեռաւ կշացաւից:

Ակայն, պէտք է նկատել, որ սառ խմիչքները վեասակար են այն ժամանակ, երբ մարմինը սաստիկ շարժողութիւններից է քրանած. բայց նոցա գործածութիւնը ամենեւնին վանդաւոր չէ, եթէ մարդ շոգել է սաք օդի մէջ կենալուց. օրինակի համար, պարահանդէսների ժամանակ, պարերին չմտնակցողները աներկիւղ կարող են սառ ջուր խմել և մինչև անդամ պաղպաղակ ուտել, չնայելով դահլիճի մէջ արիստիւող առքութեանը: Պարողները միայն այն պայմանուով կարող են օդառուիլ զուցուցիչ խմիչքներով, որ յետոյ կրկին պար գտն:

* * *

Գուրը ունի զանազան յատկութիւններ, որ առաջ են գալիս նորս բարեխառնութեան աստիճանիցը. եռման ջուրը գրգռում է, սաքը — տկարացնում և սառը — յագեցնում է ծարաւը: Խմելու համար գործածուածը, պէտք է եօթը կամութը սաստիճան ունենայ, զըրօյից վեր, Ուհոմիւրի ջերմաչափովը:

Երիսառակը խմում էր ջուրը միայն սաք. բայց այժմ յայանի է, որ սաք ջուրը տկարացնում է սաստիճառը և թուլացնում է կաղմուածքը:

90

Հռովմայեցիք այն աստիճան սիրում էին տաք ջուր խմել, որ կայսրերը ազգային թշուառութեան օրերում արգելում էին նորա գործածութիւնը: Վալեգուլա, իւր քրոջ մահուան պատճառաւ, արգելեց տաք ջուր խմելը, մահ սպառնալով չկատարողին: Օգոստոս և Վաւափոս խանգարեցին իրանց առողջութիւնը տաք ջործածելով, և միայն այն ժամանակ սուողջացան, երբ սկան ջուրը սառուցով խմել:

* * *

Ճողոր խմիչքների մէջ, միայն ջուրը մարդկային կազմուածքի համար մի անհրաժեշտ կարեւութիւն է: Բայց ընկերական պայմանները մինչև այն աստիճան ազգում են կեանքի վերայ, որ շատերը, ակարացնելով իրանց ստամոքսի մարտողական կարողութիւնը, քիչ թե շատ պահանջ են զգում գրգռիչ խմիչքների — զինիի և օղիի: Այդ խմիչքները բոլորովին արգելելը հազեւ թէ արդարացի լինէր. բայց նոցա չափաւոր գործածութեան վերայ խօսելը միշտ հարկաւոր է, և որչափ աւելի համոզեց, որչափ աւելի բարձրաձայն — այնչափ աւելի լաւ:

Տարակոյս չկայ, որ ոգելից խմիչքները, նաև համեստ գործածած, կարող են թոյն համարուիլ այն մարդկանց համար, որոնք բռնուած են բարակացաւով, ունին դիւրագրգիռ, ջղային բը-

91

նութիւն, նմանապէս որոնք չափավանց շատ-
արիւն են և որոնց արիւնը դիւրաւ գլուխն է
զարնում, ինչպէս և լեարդի հիւանդութիւն ու-
նեցողներին:

Բայց նոցա, որոնք վայելում են կայտառ առող-
ջութիւն, մենք յիշեցնում ենք Յեղիուսի խօս-
քերը. «Եմբողջապէս և ոչ մի բանից պէտք չէ
հրաժարուիլ. եթէ գէպը բերէ, մարդ կարող
է իրան թոյլ տալ նաև մի փոքր զանցառութիւն
չափաւորութեան օրէնքների դէմ. բայց ընդհան-
րապէս, չափաւորութիւնը պիտի լնի կեանքի ա-
ռաջնորդը:»

Աական, մենք խորհուրդ ենք տալիս մեր ըն-
թերցողներին չմեխել հուչակաւոր հռովմացեցի
բժշկի խրանները այնապէս, ինչպէս այն անգղիացի
բժիշկը, որը խորհուրդ էլ տալիս ամբողջ շա-
բաթը բաւականալ ջրով, իսկ կիւրակէն կշտա-
նալ գինիիով և օղիով մինչև հարդիլ:

Գ Լ Ո Ւ Խ ԾԱ.

Մարմնի շարժողութիւն:

«Գործել—նշանակում է ապրիլ:»
Գէյ շահերուեն:

«Անգործութիւնը թուլացնում է մարմինը,
աշխատանքը ամրացնում է նորա» ասում է Յեկ-
ղիուս: Եռաջինի հետեւանքը լինում է վաղա-
հաս ծերութիւն, իսկ երկրորդինը—երկարատեւ
երիտասարդութիւն:»

Դիտելով մարդու մարմնի զարմանալի մեքե-
նան, նորա անսամբերի ձնուն և փափուկ շնուած-
քը, մկանունքների առանձգական յատկութիւնը,
չէ կարելի ենթազրել որ այդ բոլորը ստեղծուած
է անգործութեան և հանգստութեան համար:

Ո՞ե՞ն Գրեղիրիք ասում էր. «Եսայելով մար-
դու մարմնի շնուածքի վերայ, ես պատրաստ
եմ կարծելու, որ մենք ստեղծուած ենք գլատար-
ների և սուրչանդակների արչեսաի համար, և
ոչ գիտնականների և պրօֆեսորների դերը կա-
տարելու:»

Հեռումը մարդիկ վարդացնում էին մկանունք-
 ների ոյժը առողջութիւնը պահպանելու համար։
 Ասկէպիագէսյոն բժիշկը, որ ապրում էր մեզնից
 երկու հազար տարի առաջ, մարմնամարդական
 վարժութիւնները մացրուց առողջապահութեան
 և բժշկականութեան մէջ, իբրև մի կարեւոր մասն
 այդ գիտութիւնների։ Յելլիուս վկայում է, որ այդ
 հոչակաւոր գործնական բժիշկը մինչև այն աս-
 տիճան հաւատում էր մարմնային մարզողութիւն-
 ների անկասկածելի օգախն, որ համարում էր նո-
 ցա իբրև մի միջոց բոլոր հիւանդութիւնների
 դէմ և զրեթէ հրաժարուում էր դեղերի ներքին
 գործածութենիցը։ Պլինիոս աւանդում է, որ
 Ասկէպիագէս, դեռ երիտասարդ հասակին, բնա-
 կութեան համար ձռո՞մ տեղափոխուելով ընդ-
 հանուր յայտաբարեց, որ թողի իբրև մի հոչակ-
 ռած սրիկայ ճանաչեն իրան, եթէ նա մեռնի
 երիտասարդութեան մէջ և ոչ խոր ծերութեան
 հասած կամ մի պատահական դէպից։

“Եա իւր խօսքը կատարեց. ապրեցաւ մօտ հա-
 րիւր տարի և մեռաւ բարձր սանդուղից վար
 ընկնելուց։”

* * *

Արմնային մարզութիւնների օգնութեամբը
 Յուլիսոս Աեսար և Կաւարայի ձէնրիք IV թա-
 գաւորը—երկումն էլքնականից տկար կազմուած-

քի տէր—ամբացուցին իրանց ոյժը մեծ գործեր
 կատարելու համար։

Գրեթէ բոլոր երկարակեաց մարդիկի գործու-
 նեայ և աշխատաւոր կեանք են վարել։

Այօիկ Ալչանտէս, որ մեռաւ հարիւր տարե-
 կան, իւր երիտասարդ ժամանակը գիշերները
 ջրհորից ջուր քաշելով էր անցնում իսկ ցե-
 րեկը ուսում էր առնում Զեննի գալոցում։

Միատէլշատա, որ ապրեցաւ 112 տարի, 18
 տարեկան զինուորութեան մասւ և մասնակցեց
 Պլուսիայի բոլոր պատերազմներին, այդ թագա-
 ւորութեան հիմնուելու օրից սկսած։

Դամնիմաբացի Պրակէնբորդ—որ „հիւսիսային
 ծերունի“ անունն էր ժառանգել և որ մեռաւ
 հարիւր քառասուն տարեկան 1770 թուին—հա-
 սարակ զինուոր էր, ոտով ման էր եկել բոլոր Խւ-
 րապան և ասմաջուել էր Ափիկէի բարձարուների
 ձեռքը գերի ընկնելով։

Գաղղիացի Պելլագէ, որ 120 տարեկան մե-
 ռաւ, ոտով շրջեց բոլոր ձնդկաստանը, Զինաս-
 տանը, Պարակաստանը և Եզիկատոսը։

Ժան Բէոյլ որ 130 տարի կեանք ունեցաւ, մի
 աղքատ, տանից տուն շրջող մանրավաճառ էր և
 ծախս էր անում կոճակներով։

Լնրի Շէնկինս անգղիացին, որ Աքրահամից
 միայն վեց տարի պակաս ապրեցաւ, ձինորս էր,
 և հարիւր տարեկան ժամանակին լողալով գետի
 մի եղելքից միւսն էր անցնում։

Թառվմասս Պարբէ, որի կեանքի ժամանակ Ենդշղայում ինը թագաւոր փոխուեցան, կալում ցուրեն էր կորզում, երբ ինքը 103 տարեկան էր:

Ժամ Արողեց որ 1820ին 117 տարեկան մեռաւ Մուրանոյի (Անետիկի մօտ) անկելանոցում, 87 տարի զինուորական ծառայութեան մէջ էր գտանուում:

Հաշուել են, որ Գաղղիայում մի գիւղական գրատար, որը մեռաւ 1861 թուին հարիւր տարեկան, իւր բոլոր երկար կեանքի միջոցումը ոսովքալիւ է մի տարածութիւն, որ 25 անգամ աւելի է երկրագնդիս շրջանակիցը:

* * *

Կորագոյն դիտողութիւններից երեւում է, որ միանունքների շարժողութիւնները նշանաւոր կերպով նպաստում են, որ կազմուածքի ամեն գործարանները կանոնաւոր կատարեն իրանց գերը անամնական տնտեսութեան մէջ: Վալելու ժամանակ, թռերը ծծում են աւելի մեծ քանակութիւն թթուածինի և արտաշնչում են շատ աւելի ածխաթթու: Անամնական տաքութիւնը, շարժողութեան ժամանակ, նոյնպէս աւելի շատ է կազմուում: Բէկկէրէլ և Բրէլ է ապացուցին, որ մարմի տաքութիւնը միանունքների քաշուելու ժամանակ բարձրանում է գոնէ կէս աստիճանով: Այսանից զատ, միւնոյն ժամանակը, այնչափ ելեք-

96

տրականութիւն է բաժանուում, որ նորա կարելի է չափել ելեքտրաչափով:

Եղբ այս զանազան երեւոյթները մեզ յայտնի եղան, մեկք այժմ կարող ենք զնաչատել բոլոր օգուտները, որ ստանում ենք մարմնի շարժողութիւնների միջոցով առողջութեան և երկայնակեցութեան համար: Յայտնի է, որ մեր մարմնը զետի նման ընթացք ունի, մի ծայրից մըտնում են նորա մէջ նոր նիւթեր, միւս ծայրից ենում են հիները: Բնագանները համեմատում են մարդու մարմնը Երգոնաւթիւնների նաւի հետ, որը պահեց իւր սկզբնական կերպարանքը, չնայելով, որ իւր առաջուայ շինուածքից ոչ միտախտակ չէր մնացած նորա մէջ: Մկանունքների շարժողութիւնները գիւրացնում են մաշուած մասնիկների վերանորոգուիլը և պահպանում են մարմնը երիտասարդ փափկութեան մէջ:

* * *

Եթէ շարժողութիւնները, որ մարդ անում է, չափից և սահմանից անցնում են, կազմուածքը դրանից կորցնում է աւելի ցի, քան թէ միւնոյն միջոցում նա կարող է ստանալ. սորա հետեւանքը լինում է այն, որ մարմնը սկըսում է նուազել և թուլանալ: Եյս պատճառաւ, ամեն մարդ պարտական է չափաւորել իւր շարժողութիւնները իւր կարողութեան համե-

7

97

մատ, և մննդարար կերակրով և հանգիստ առնելով, նոր պաշար տալ իւր ոյժերին:

Ո՞ի անդղեայի բժիշկ կարծում է, որ կանոնաւոր և չափաւոր կերպով կատարուած շարժողւթիւնները կարող են մարդկային ազգը տանջող հիւանդութիւնների երկք քառորդին դէմն առնել և կեանքը երկարացնել:

Սակայն պատահում է, որ մարդիկ շատ երկար են ապրում, առանց որ և է շարժողութիւն անելու: Ծիւֆֆօն, ինչպէս ինքը խոստովանաւմ է, 50 տարի գրասեղանի վերաց է անց կացրել և կրկն ապրեցաւ մօտ ութսուն և մէկ տարի: Եյն էլ ճշմարիս է, որ նորա միզափանդուշտին մէջ 57 կտոր քար գտան:

* * *

Անայբ առաւել երկար են ապրում, քան թէ աղամարդիկ, թէպէտե, ընդհանրապէս, նոցանից պակաս շարժողութիւններ են անում, և պարապ և անդործ անցնում են ժամանակը: Թժիշկ Տիասո կարծում է, որ շատախօսութիւնը կանանց մօտ շարժողութեան աեղ է բռնում: Որպանից զատ՝ նոքա անհոգութեան և զուարթութեան մեծ պաշար ունին, իսկ այդ յատկութիւնները շատ կարեւոր են երկար կեանք ունենալու համար: Ո՞իւնոյնը կարելի է աել և տղամարդկանց համար, որնիք ճաշակով և սովորութիւններով նման են կանանց:

98

* * *

Շարժողութեան ամենասպարզ ամենաքննական կերպը է ոսով զքօննուլը: Կա պահպանում է մարմնի պինդ և ջրացին մասերի մէջ բարերար հաւասարակշռութիւնը, զրգուում է ախորժակը, զիւրացնում է մարտողութիւնը: Եղեքսամողը Ուկեդինացին յետ ճամբեց խոհարաններին, որ յուղարկել էր նորան Եղա թագուհին, ասելով, որ նա իւր ամենալաւ խոհարանները ունի՝ ճաշի համար — առաւաօտ կանուխ ճեմելը, ընթրիքի համար — չափաւոր լինելը ճաշի ժամանակի:

Պոկրատ մի անդամ արագ քայլերով ձեմում էր իւր տան առջեւ, և եղբ մի բարեկամ հարցրեց նորա՝ թէ ի՞նչ է անում, նա պատասխանեց. „Պատրաստում եմ համեմ իմ ճաշի համար“:

Ոտով զքօննուլ նորանով ևս օգտակար է, որ միջոց է տալիս կրթելու մտաւոր ընդունակութիւնները և միւնցն ժամանակ պարապեցնում է միտքը և երեւակայութիւնը առարկաների բազմակերպ երեւոյթովը: Կա օգտակար է ամեն հասակի համար, բայց մանաւանդ կեանքի երկու ծայրայեղ սահմաններին — երեխաններին և ծերերին: Երեխաններին օգտակար է այն պատճառաւ, որ նոպաստում է մարմնի և հասակի զարգանալուն, ծերերին — որ զրգուում է գործարանների տկարացած եռանդը .. և կենդանական տաքութիւնը:

*

99

Տաղիքն առած մարդիկ, մի անգղեսցի բժշկի
խօսքերովը, պարտական են ոսով զքօսնուլ նոյն
ջերմեռանլութեամբ, իրու թէ դա մի կրօնաւ-
կան արարողութիւն լինէր:

Խոր ծերութեան հասած մարդկանց մեծա-
գոյն մասը սովորութիւն է ունեցել ամեն օր
ոսով զքօսնելու: «Օեր մարդիկ, որոնք իրանց ան-
շարժութեան են գասապարտել պէտք պատ-
րաստ լինին շուտով մեռնելու:

* * *

Առողջապահական տեսակէտից՝ ամենաօգտա-
կար վաղ առաւտեան մաքուր օդի մեջ զքօս-
նուլն է, և եթէ կարելի է, քաղաքից դուրս
Պէտք է ընտրել բարձրագիր և ոչ ցած և խո-
նաւ տեղեր: Հիպոկրատէս, Անկաօրիուս և
այլ բնաբաններ կարծում են, թէ զքօսանքը, որ
գիշերուայ քնից յետոյ է կատարուում, բարե-
րար ազգեցութիւն ունի կազմուածքի վերայ.
առաւօտու օդը առաւել մաքուր և առողջա-
րար է այն պատճառաւ, որ բոյսերը, արեւի
ճառագայթների աղքեցութեան տակ, դուրս են
տալիս մեծ քանակութիւն թթուածինի, որը չա-
փազանց կարեւոր է մարդու կազմուածքի համար:

Ոմնոք կարծում են, թէ զքօսնելու համար
մի յայանի նպատակ ունենալու է և թէ առանց
նպատակի ման գալուց մարդ շուտով կձանկանաց
և կդադրի: Լոնգուում մի լորդ կար, որը ամեն

օր գնում էր երեք միլ հեռաւորութիւն Ուէս-
միւնասերի աշաբակի մօտ իւր ժամացցը ուղ-
ղելու: Բժիշկ Օդիկ չէր տարակուսում, որ որոշ
նպատակը աւելի մէծ նշանակութիւն է տալիս
զքօսանքին:

Մի այլ դրագէտ ծերունի սովորութիւն էր
արել իրան խմել միսյն մի աղքիւրի ջուրը, որը
իւր տանից մի քանի հազար քայլ հեռու էր, և օրը
երկու անգամ ինքը գնում էր ջուր բերելու: Եյս
կանոնաւոր զքօսանքը, ասում է Շ'ոն Ոնդլէո,
պահպանեց ծերունու առողջութիւնը և երկա-
րացրեց նորա կեանքը մինչև խոր ծերութիւն:

* * *

Կայ զքօսանքի և մի ուրիշ ձեւը—ձիով ման-
գալը, որը բնաբանները դասում են ամենա-
օգտակար առողջապահական միջոցների կարգը:
Անգղեսցի հռչակաւոր բժիշկ Ույդէնչէյր ձի
հեծնելու վերայ մեծ գովեստով է խօսում և այդ
տեսակ զքօսանքը ճանաչում է իրեւ մի ամենա-
լաւ միջոց ոյժերը զարգացնելու համար:

Պատմում են, որ մի անուանի հոլլանդացի
բժիշկ մինչև այն աստիճան սիրում էր ձիով ման-
գալը, որ մինչև անգամ իւր հիւանդներին էլ
ձիու վերայ նստած էր ընդունում և խորհուրդ-
ներ տալիս:

Տարակոյս չկայ, որ զքօսանքի այս կերպը շատ
օգտակար է, երբ մարմնի գործարանները մի փոքր

տկարացել են, և այս պատճառաւ, երբ նոքա դանեղաղ և թերի են կատարում իրանց գերը կաղմուածքի մէջ. բայց նա վնասակար է այն մարդկանց, որոնք բռնուած են զանազան տեւողական հիւանդութիւններով և վասոյժ և դիւրագրիւր բնութիւն ունին:

Գ և Ո Ւ Խ Ժ Ա

•Բռնը:

«Քունը մի մահ է, որ կեանք է տալիս» :

* * *

Մարդու կեանքը, ինչպէս ամեն բան բնութեան մէջ, բաղկանում է մի շալք մէկմէկի հակառակ երեւյթներից, որոնք ձգտում են պահպանել հաւասարակշութիւնը, և այս պատճառաւ ամեն աշխատանքից յեայ՝ գալիս է հանգստեան ժամանակամիջոցը։ Վաւնը, որ հանգստառթիւն է տալիս զգացմնաքններին և կամաւոր շարժողութիւններին, պէտք է ամենամեծ բարիքներից մէկը համարուի, որ տուել է բնութիւնը մօսդուս։ «Կա ոչ միայն շնորհում է մեզ „ամենայն օր վերածնուելու“ և ամենայն օր նորդուած կեանքով ապրելու երջանկութիւնը, բայց և նկատուած բան է, որ խոր և հանգիստ քունը մի հաստատ նախագուշակ է երկար կեանքի։

Երթուն դրութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ կեանը արտաքին երեւյթների արտայայտութիւնը,

իսկ քունը՝ նոյն երեւոյթների հանդստեան ժամանակամիջոցն է, և երկուն էլ միանգամայն համապատասխանում են օրուայ և զիշերուայ հակառակութեանը (անտագոնիզմին): Մի խորհրդաւոր ազգակցութեան կատ կայ մարդու կազմուածքի և տիեզերքը կառավարող մեծ օրէնքների մէջ, այս պատճառաւ զիշերուայ ժամանակ մարդուս մէջ մի տեսակ առանձին երեւոյթներ են առաջ գալիս, որոնք առենելին չեն յարմարուումնորա արթուն զբութեան հետ:

Սորանից հետեւումէ, որ զիշերը պէտք է քուն լինել, այս մի օրէնք է, որը կարելի չէ զանց առնել առանց պատժուելու: Երթուն մնալ զիշերը և քուն լինել ցերեկը՝ առողջութեան շատ վնասակար է: Շեղուելով բնութեան օրէնքներից, մենք զիտակցապէս կարծայնում ենք մեր կեանքը: Մանաւանդ զիշերները մարդ պէտք չէ պարապի մոտեօր աշխատանքներով: Շատ զիտականներ, մատենագրներ, պատկերահաններ մեռան ժամանակից առաջ այն պատճառաւ, որ պարապում էն զիշերները:

Գաղղիացի հռչակաւոր պատկերահան ձեիրօդէ ցերեկով շատ սակաւ էր նկարում, բայց զիշերը՝ հազարում էր մի ահազին գլխարկ, վերան բազմնթիւ ծրագներ անցուցած, և պարապում էր մի քանի ժամ շարունակ: Կա ծերացաւ ժամանակից առաջ և մեռաւ երիտասարդութեան մէջ:

Անուանի աստեղաբաշխ Լակալ ամբողջ զի-

շերներ անցնում էր զիտարանում և մեռաւ 49 տարեկան: «Կա ասում էր, որ իւր կեանկում երկու թշնամի է ունեցել՝ „քունը և ամպերը“: Նոքա, որոնք զիշերները անքուն են անցնում և միայն արշալցար ծագելիս մնում են անկողին, ոչ միայն խանգարում են իրանց առողջութիւնը, բայց և, բայց դորանից, զիկում են իրանց առաւուեան ժամելիցը, որոնք ամենակեղեցիկերն են ամբողջ օրուայ մէջ: Գրեթէ բոլոր երկար ապրող մարդիկ սիրած են եղել առաւօտ կանուխ վեր կենալը:

Ճնն Ուէստէյ, անդղիական կրօնական աղմնդշներից մինի հիմնարկողը, մինչեւ այն աստիճան համարուած էր վաղ վեր կենալու օգտակարութեանը, որ այդ սովորութիւնը մացրեց կրօնական արարողութեանց կարգում: Կնքը ապրեցաւ 88 տարի: «Կա ասում էր. „Վաղ անկողին մանելով և առաւօտ կանուխ ենելով, մարդ վաստակում է առողջութիւն, հալատութիւն և իմաստութիւն“:

* * *

Օճէ քանի՛ ժամ անհրաժեշտ է մարդուս քուն լինել չէ կարելի որոշել ծշդիւ: Ո՛րչափ աւելի երիտասարդ է նա, այնչափ աւելի պէտք ունի հանգստութեան: Մի բժիշկ հաստատում է, որ կարելի է մեռյնել նորածին երեխային, եթէ արգելինք նորան քուն լինել քսան և չըրա

ժամ, չնայելով, որ երեխան, ինչպէս պէտք էր կարծել, քնից կշտանալու ժամանակ ունեցել է իւր մօր արգանդի մէջ:

Աալեռնի գովրոցի վարդապետութիւնը, վեց ժամեւայ քունը բաւական է համարում ինչպէս պատահին, նոյնպէս և ծեր մարդուն, մինչդեռ վերջինին այնպէս հարկաւոր չէ քունը, ինչպէս առաջինին:

Կանայք, ընդհանրապէս, առաւել երկար պէտք է քնին, քան տղամարդիկ:

Պարարտ անձինք պարտական են բաւականանաւալ կարճատեւ քունը. ընդհակառակը, վատոյժ և ջղային մարդկանց կարելի է աւելի երկար քնիլ որովհետեւ, ինչպէս Հիպակոլրատէս նկատում է, „քունը կակղայնում է մարմինը, իսկ արթնութիւնը չորայնում“:

Չափազանց երկարատեւ քունը—ութը ժամից աւելի—միանգամայն վնասակար է, Պղատոնի ասացուածքով, „մարմնի և հոգու“: «Վա թանձրայնում է արիւնը և, պահելով ուղեղը անգործութեան կապանքների մէջ, բթայնում է մասւորական ընդունակութիւնները:

Աարգիսյին կազմուածքը քնի ժամանակ էլ շարունակում է իւր աշխատանքը. ներքին գործարանները գործում են անդադար, առանց հոգնելու: Թռոքերը այդ ժամանակ ես չեն դադարունչ շունչ առնել, և, մանաւանդ մարդու քնած ժամանակը, պէտքէ ջանալ շնչառութեան համար

նոցա առատ օդ հասցնելու: Վայ պատճառաւ, ննջարանի համար նշանակուած սենեակը պէտք է ընդարձակ լինի և օդը նորոգելու համար ունենայ հարկաւոր յարմարութիւնները: Անկողինը հաստ վարագուրներով պատելը առողջապահութիւնը սասաթիկ արգելում է:

Ո՛չ այնքան արթուն ժամանակ, որչափ քուն լինելիս՝ մարդ ենթարկուած է ստորին կազմուածքների (միազմների) և Ճահճային գոլորշեի ազգեցութեանը, որոնց ներգործութենից նորանում զանազան հիւմնդութիւններ են առաջ գալիս. նոյնպէս ցնդական հոտալի նիւթերը աւելի սասաթիկ ներգործում են մարդու վերայ, երբ նա քուն է լինում:

Ճահճային դաշտերը (Խտախխում, Առվկասում և այլն) վտանգաւոր չեն Ճանապարհորդներների համար. բայց եթէ սիսալուին նոքա և քուն լինին այդ աեղելում, իսկոյն անխուսափելի չար ջերմը կրոնէ անզգոյշ օտարականին:

Կարելի է անվտանգ նատել ընկուղենիների շուքի տակ. բայց այնտեղ քուն եղողին սպառնում է շնչասպառ լինելու վտանգը: Խոնսու և անսառողջ բնակարաններում զիշերը, քուն լինելիս, զիւրաւ կարելի է ռէումասահպմ կամ նէուրալզիա (ջղերի սասաթիկ ցաւ) ստանալ:

* * *

„Վիշ ուստովը առողջ քուն է լինում, և նորա
հողին բերկում է“, ասում է Խկլէզիաստ:

Եթէ մարտողութիւնը ծանրացած է՝ քունը
դժուար և անշամնգիստ է լինում, մանաւանդիրիկ-
նաւացին մնեղին կերակրների դործածութենից:
Բժիշկ Պօրտալ դիտել է, որ ուղեղի հարուածները
(ապոսլէկսիաները) շատ յաճախ էին կրկնուում
ԺՌ դարտւմ, որովհետեւ այդ ժամանակները մեծ
և փառառոր ընթրիքները շատ ընդունուած էին:

* * *

Անկողինը կարեւոր գեր է խաղում անսցին
առողջապահութեան մէջ, որովհետեւ մենք մեր
կեանքի մի երբորդ մասը նորա մէջ ենք անցնուած:
Շատ կակուղ անկողինները վիասակար են երի-
տասարդ և գեր մարդկանց. բայց ծեր մարդիկ և
կանսցը կարող են դործածել եթէ սովոր են փափ-
կութեան: Ամենը փափուկ փետուրներով լցուած
անկողինը „հիւանդութեանց բոյն“ է կոչում:
Բնաբանները հաստատում են, որ ոչ մի խոր ծե-
րութեան հասած մարդ այդպիսի անկողի մէջ
չէր պառկում:

Ո՞եր մարմնի տաքութիւնը քնելու ժամանակ
վար է իջնում կէս ասամիճանն Ուեօմիւրի ջերմա-
չափով այս պատճառաւ մարդ պէտք է իրան ա-
ւելի տաք պահէ զիշելը, քանի ցերեկը: Հար-
կաւոր չէ ծածկել գլուխը վերմակով, որի տակ օդը
աւելի ծանր է և շնչառութիւնը դժուարանում:

108

Ենքնութիւնը միայն այն ժամանակ կարելի է
իրրեւ մի հիւանդութիւն ձանաչել եթէ նա չէ
առաջանում զիշերը չափից դուրս ուտելուց, բայց
երբեմն անքնութեան պատճառը լինում է ջղերի
զրդուումը: Այդ գէպքերում միշտ բառական է
լինում լոկ առողջապահական միջոցները, որպէս
զեւ մարդ կարողանաց հանդիսաւ քուն լինել.
մանաւանդ օգտակար է չափաւոր ձեւմելը, պաղ-
և թեթեւ կերակրների դործածելը, չեւու մնալը
ամեն մոքերից, որոնք յուղում են երեւակայու-
թիւնը: Անկողինի մէջ, քնելուց առաջ, կարդալը
միշտ վկասակար է: Օքեր և տկար անձինքների
համար անքնութեան դէմ մի շատ գեղեցիկ մի-
ջոց է մի բաժակ մալագայի հին գինին:

Ոմներ խորհուրդ են տալիս պարապեցնել միաքը
մի ձանձրացուցիչ առարկայով: Կանար պատմում
է, որ երբ նորան տանձում էր անքնութիւնը, նա
իւր միան էր բերում Ավերոնի կեանքը և գրուածք-
ները, և իսկոյն քունը գալիս էր: Տառւաբանա-
կան խնդիրների մասաւոր լուծումը նյոնպէս օգ-
նում է անքնութեան դէմ:

* * *

Հանդարապութեան և մթութեան մէջ մարդ
առաւել լաւ քուն է լինում, բայց կրկին ամեն
բան սովորութենից է կախուած: Գաղացպանը
խոր քնումէ անիւների աղմկի մէջ, և զարթումէ,
եթէ յանկարծ գաղարի մեքենան: Ո՞ի և նոյնը

109

մեզ հետ է լինում երբ, գեշերը երկաթուղիով
գնալիս՝ գնացքը կանգնում է կայարանի առ-
ջև։ Շատերը չեն կարող քնիլ առանց գիշե-
րուայ կանթեղի, և զարթում են, երբ նա մա-
րում է։ Բօէրկաւ հրամայում էր դնել հիւանդի
սենեակում մի աման ջուր, որը կաթում էր մի
պղնձի թասի մէջ։ Երբեմն բարցական պատճառ-
ներ զարթեցնում են մարդու։ փողոցի կառքերի
աղմուկը չէ վօդովում ինամասար մօր քունը,
բայց իւր հիւանդ երեխայի ամենաթեթեւ շար-
ժումը նորան իւկոյն զարթեցնում է։

Գ Ա Ր Ւ Խ Ժ Ա Վ ։

Կլիման և տեղի զանազան գրութիւնները։

»Տաք կլիման, որի չնորհիւ ծերացած մարդը կա-
րողանում է ամենայն օր ձեմեւը ոդի մէջ ամե-
նահաստատ միջոցներից՝ մին է երկար կհանքիւ։«

* * *

Ո՞ի քանի տեղերի գրութիւնը, իւրեանց մե-
տէօրօլոգիական պայմաններովը, առաւել նպաս-
տաւոր են երկար կերնիքի, քան ուրիշները. բայց
և ամեն կլիմայի մէջ մարդ կարող է երկար ապ-
րիլ։ Ամեն բան կախուած է բնութենից, կազ-
մուածքից և նոյնիսկ մեզանից, մեր վարած կեան-
քից և ողջախոչ առողջապահութեան օրէնք-
ները կասարելուց։

Դիտուած է, որ մարդկային կաղմուածքը կա-
րող է յարմարիլ ամեն կլիմայի, տեղի ամեն
գրութեան հետ, սկսած բարձր լեռներից՝ մինչև
խոր անդունդները։ Ճանապարհորդները զարմա-
նում են Ավետցի տօրէատորների անառվար ոյժին

և ձարպիկութեանը: Պօտովլայում, երիտասարդ
մարդիկ և նազեկ կանացք անցնում են ամբողջ
զիշերներ կասազի կաքանելով: Եւ սակայն այդ
երկու աեղելն էլ գտանուում են մի բարձրու-
թեան վերայ, որ հաւասար է Վոնազանին, որ-
տեղ Առափուրը հաղեւ կարողացաւ իւր գործիք-
ների օգնութեամբ մի քանի դիտողութիւններ
անել և ուր նորա ուղղեկից առաջնորդները—
մի քանի ուժեղ լեռնականներ—ուշաթափ վար
էին ընկնում ճանապարհ բանալիս:

Տաք երկինները այն ասաիձան նպաստառու չեն
երկար կեանքի, ինչպէս ցուրտ երկիրները: Տաք
կլինոյի մէջ կաղմուածքը առաւել վաղ է զար-
գանում—ուրիմն և կեանքը կարձանումէ: Ցուր-
տի ազգեցութեան տակ, ընդհակառակը, կազ-
մուածքը աւելի դանդաղ է անցնում մի փոփո-
խութենից դէպի միւրը ցուրտը ակարացնում է
կրքերի սասակութիւնը, որը աւելիչ կերպով ներ-
գործում է մարդու վերայ: Ճիւսիսային Եւրո-
պան ներկայացնում է երկայնակեցութեան զար-
մանակը օրինակներ: Իսայց, պէտք է ասել եթէ
ցուրտն էլ անցնի յայտնի սահմանները, նոյնպէս
վնասակար է դառնում, ինչպէս տաքը:

Ճիւսիսային երկիրների կարգում Շ վեաը ա-
մենից չոչակուածն է իւր բնակիչների երկայնա-
կեցութեամբը: Բաժիշկ Ա եմո վկայում է, որ
շվեաացի կանանց զարմանալի պաղաբերութեան
շետ—որոնց մէջ պատահում են մայրեր քանի և

երեսուն զաւակների—այդ երկում հարիւրա-
մեայ ծերերն էլ ամենեւին հազուագիւտ չեն:
ԺԷ դարու առաջին 73 տարիներում, Շ վեաի
տասներկու վիճակների մէջ գտնուել են 232 մարդ,
որոնք 90-ից մինչև 140 տարի ունեին, իսկ երկու
մարդ անցել էին նաև այդ թուերիցը. նոցանից
մէկը 156 տարեկան էր, իսկ երկրորդը—160: Այս
վերջինս եօթը սերունդ էր տեսել իւր կեանքում:

* * *

Ա իճակագրութիւնը շատուց է ապացուցել
որ բարձր աեղերը նշանաւոր կերպով ազդում են
մարդու կեանքի աեւողութեան վերայ: Գաղ-
ղեայի Դիժօն քաղաքի գաւառի վիճակագրու-
թիւնը կազմելիս, այս դիքի հեղինակը գտաւ,
որ որչափ բարձր է աեղի դրութիւնը, այնչափ
բարեյաջող են սրացմանները կեանքի երկարատե-
ռութեան համար:

Այն աեղերում, որտեղ բարձրութիւնը ծովի
մակերեւութից 200 մետր է, կեանքի միջին չափը
համարմ է 34½ տարիների:

200ից մինչև 350 մետր բարձրութեան վերայ—
38½ տարիների:

350ից մինչև առաւել բարձրը — 41½ տա-
րիների:

Բարձր աեղերի ազգեցութիւնը յայտնի էր չին
ազգերին ևս, և Ամեր լեռը հոչակուած էր այդ
մասին: Պոմազնիոս և Առկիանոս կարծում են,

որ նորա վերայ բնակողները ուրիշներից երկու
անգամ աւելի էին ապրում:

Եթք բժիշխները խորհուրդ առուխն Պղատոնին
փոխել իւր բնակութեան տեղը, փիլսոփիան պա-
տասխանեց, որ չէր համաձայնում տեղափոխ-
ուել նաև Ըթոս լեռան վերայ, եթէ անկասկած
համզուած լինէր, որ այնտեղ ինքը աւելի եր-
կար պիտի ապրի, քան այդ առանձնաշնորհած
տեղի բնակիչները: Մուցիսանուս, —ինչպէս Պլե-
նիս աւանդումէ —կարծումէր, որ Լեպիայի Տմօ-
լուս լեռան վերայ մարդիկ սովորաբար մինչև 150
տարին են ապրում:

* * *

Ո՞ի քանի հովիսաներ այնպիսի բնական յաջող
պայմանների մէջ են գտանուում, որ նոցա մէջ ապ-
րող մարդկանցից շատերը համառ են խոր ծե-
րութեան: Անցեալ զարում մանաւանդ մէծ
համբաւ էր սասացել այդ մասին Կորվեգիսյում
Ներդրանդի հովիար: „Այս հովիառում—ասում
է այն ժամանակի գրադերից մին, բոլորովին հա-
ւատացած—մարդիկ այնքան երկար են ապրում,
որ կեանքից ձանձրանալով հրամացում են տա-
նել իրանց մի ուրիշ տեղ, որտեղ վերջապէս կա-
րողանային մեռնել“:

* * *

Ո՞ի քանի փաքրիկ կղզիներ շատ ժամանակնե-
րից իվեր համարուում էին իրեւ ծերութեան

114

օրօրոց, շնորհիւ ծովային կենասատու օդի մաք-
րութեանը և նորա բարեխառնութեան միշտ ան-
փոփոխ մնալուն: Հարաւում Ռեմուգի կղզիները,
Բարբագ, Մագելիա, հիւսիսում Օրկասեան և
Շառալանաեան կղզիները ամեն տեղ համբաւ էին
սասացել իրեւ երկայնակեցութիւն շնորհելու ար-
տօնութիւնը ունեցող վայրեր: Գետնի աեսակը
նոյնպէս մեծ նշանակութիւն ունի այս գէպքում
և քարու գետինը առաւել նախագասելի է, քան
կիրոսը:

Եւ սակայն, պէտք չէ կարծել որ հիւսնդոս
կամ ակար կազմուած մարդիկ, տեղափոխուելով
այդ երջանիկ վայրերից մին, կարող են յուսալ
բնիկներին հաւասար, երկար կեանկ ունենալու
Վողջութեան տեղ շատ անգամ նոքա այնաեղ
կարող են գտնել հիւսնդութիւն և նոյն իսկ մահ:

Այսպէս, ջղային, վասոյժ և զիւրագլուխ
ընութիւն ունեցող մարդիկ և որմաց նշառու-
թեան գործարանները դիւրաւ ենթարկուում
են զանազան հիւսնդութիւններին, կարող են մնա-
սել իրանց առողջութեանը, եթէ երթան լեռ-
նային չոր օդի մէջ ապրելու: Բնդ հակառակը,
նոցա համար շատ օգտակար կղզին բնակուիլ հո-
վիաի մէջ, որտեղ օդը առաւել մեղմէ թանձր է:

* * *

Օդի խոնաւութիւնը, մանաւանդ եթէ միացած
է նա ցուրաի հետ, բոլոր միջնոլորդական պայման-

*

115

ներից ամենասնկարեցաջողն է նաև ամենաամուր
կազմուածքի համար: Խսնաւ ցուրտը մարդու մէջ
առաջ է բերում զանազան ջղային ցաւեր, սկոր-
բուտ և կատարր շնչառութեան գործարանների,
մինչև անգամ բարակացաւ: Ուստանական հետա-
զոտութիւններով ապացուցուած է, որ խնաւ օդի
ազդեցութեան տակ, շատ անգամ թոքերի օդ-
անցքների թեթեւ կատարից առաջանում է
փոանգառոր թոքախոտ այսպէսով մէկնուում է,
թէ ի՞նչ պատճառաւ այնպէս ատրածուած է
բարակացաւը հիւսիսային Եւրոպայում: մանա-
ւանդ Նողլանգայի մի քանի քաղաքներում, որ-
տեղ այդ հիւանդութիւնը գերեզման է առնում
բնակութեան մի երրորդ մասը:

* * *

Չափից գուրս տաք օդի մէջ, ինչպէս վերևու
ասացինք, մարդու կազմուածքը առաւել արագ
է զարգանում և կեանքը կարծանում է: Ո՞ի քանի
տարիքների համար, ընդհակառակը, չափառոր
տաքը կարող է շատ նպաստաւոր լինել կեանքի:
Կաշիի գործունէութիւնը շատ կարեւոր դեր
է խաղում կազմուածքի մէջ և այդ գործունէու-
թեան նուազելը ծերութեան առաջին նշանն է:
„Օերութիւնը՝ հիւանդութիւն է“, ասում է
Ամնկառիուս: Կաշիի գործունէութիւնը զրգը-
ռելու համար պէտք եղած հոգատարութիւնը
երկար կեանքի ամենաառաջին պայմաններից մինն

է: Վանաւանդ վտանգաւոր է ծերելի համար
ձմեռը, որովհետեւ տարուայ այդ ժամանակին
ծերացած մարդկանց կաշին զրեթէ բոլորին
գաղաքառում է գործելուց: Որի հանգամանքները
ներում են փախչել ձմեռնային ցրաիցը և պաղ-
քամիներեցը մի հարաւային տաք երկիր, նա ա-
զատ կազաչէ իւր կեանքը սպառնացող վտանգ-
ներից:

ԳՐԱՏԱԿԱՆ ԺԳԹ

Կաշիի հոգատարութեան մասին:

Առանց կաշիի դորձունեութեանը կարել չէ ոչ առողջ լինել և ոչ երկար կեանք ունենալ:

Հ ո ւ ֆ լ ա ն դ ր

Կաշին կարելի է անուանել ամենազլիսաւորը բոլոր կենդանական հիւսուածքների մէջ, որով չետև նա, ինքն իրայ համար, ասես, մի առանձին, սատրին դասի պատկանող, կենդանի լինի: Վենդանեաց ամենասպարզ անսակներին մէջ մենք պատաշում ենք այնպիսիներին, որոնք ուրիշքան չեն, եթէ ոչ մի կաոր կաշի, և այդ վերջին է, որ կատարում է թօքերի, ստամփսի, զգայարանքների և այլն գերը. օրինակի համար, որ օթէ ա անունով ինվուզորիան—որը այսպէս կոչուած է Պրոթէոս հին աստուածի անունով, որովհետեւ այս կենդանին էլ այդ ծովի աստուածի նման, անդադար փոփոխում է իւր կերպարանքը—բաղկացած է մի կաոր բոլորաձեւ

կաշիից, և, միշտ ընկղմած լինելով ջրի մէջ, ծծում է այդ շղանից իւր օդը և կերակուրը: Ճիդրանի նոյնապէս մի պարզ բարակ թելերից գործուած, տոպրակ է ներկայացնում, որը կարելի է, ձեռնոցի նման, միւս երեսը դարձնել և որը, չնայելով դորան, մի կենդանի է և ապրում է. նորա ներսի և զրաի երեսը հերթով կատարում էն կամ ստամփսի և կամ չնչառութեան գործարանի գերը: Խթէ այս կենդանին կարտենք մանր մասերի, նոցանից ամեն մէկը կրկին մի ամբողջ և կատարեալ էակ կդառնայ: Եյսպիսի մի տարօրինակ երեւոյթ նորանով է մեկնուում, որ այս կենդանին բաղկացած է միմիայն կաշիից, և որ կենդանական գործարաններից և ոչ մինը „այնպէս ամբողջութեամբ չէ արտայայտում կեանքի գաղտփարը, ինչպէս կաշին“: Մարդկացին կազմուածքի համար կաշիի գոհացուցիչ դրութիւնը և նորա գործողութիւնների կանոնաւորութիւնը առաջին պայմանն է առողջութեան, ուրեմն, և երկայնակեցութեան:

Բաւական է, որ մարդ ըմբռնէ այս գործարանի նշանակութիւնը, որպէս-զի համոզուի նորա կարեւորութեանը: Մի կողմից կաշիի միջնորդութեամբ կազմուածքը մաքրուում է անպէսք և վեսսակար նիւթերից (արտաշնչութիւնով), միւս կողմից—կաշիի մէջ տեղի է ունենում մի տեսակ շնչառութիւն, որով նա ծծում է մթնոլորդի օդի մէջ գտնուած թը-

թուածինի մի մասը, և դուրս է տալիս ած-
խաթթու և ազօտ:

* * *

Թռէպէտ կաշին փոքր քամնակութեամբ է ըն-
դունում շրջապատող օդից թթուածին և
դուրս տալիս ածխաթթու, այնու ամենայնիւ
նորա շնչառական գործունէութիւնը մեծ կա-
րեւորութիւն ունի կավմուածքի համար: Բայց
կաշին գլխաւոր գերը կայանում է մի հեղուկի
(քրաինքի) բաժանելումը, և իսկապէս սորան ենք
կոչում մենք կաշին կամ մարմնի արտաշնչու-
թիւն: Այդ հեղուկը գուրս է գալիս մարմնի
ծակաիքներիցը անդադար, բայց նա մեզ նկա-
տելի չէ լինում այն պատճառաւ, որ իսկոյն
գոլորշեանում է մարմնի երեսից: Խակ եթէ որ
և է պատճառաւ սկսի այնպիսի առաստու-
թեամբ բաժանուիլ որ չկարողանայ ամրողջա-
պէս գոլորշեանալ այն ժամանակ մենք տեսնում
ենք նորան մարդարիսի մեծութեամբ կաթիլ-
ներով մարմնի ծակաիքներիցը դուրս ենելիս
և անուանում ենք „քրաինք“:

Քրաինքը պարունակում է իւր մէջ նիւթեր,
որոնք անպէտք են գարձած կավմուածքին և
որոնք, եթէ դուրս չգան, կարտղ են թունաւո-
րել արիւնը և հիւանդութիւններ պատճառել.
արտաշնչութեան միջոցով մարմնը շարունակ
մաքրուում է այդ նիւթերից: Բայց դորանից,

կաշին արտաշնչութիւնը ունի և մի ուրիշ կա-
րեւոր նշանակութիւն: Թռքերի արտաշնչութեան
հեա միասեղ նա կամնաւորումէ մարդու մար-
մնի բարեխառնութիւնը, այսինքն պահում է
մարմնը տաքութեան միևնոցն աստիճանի մէջ,
իսկ այդ անսիստոլս դրութիւնը առողջութեան
էական պայմաններից մինն է:

Յայսնի է, որ հեղուկ նիւթերը գոլորշեա-
նալիս կլանում են տաքութեան մի որոշ քանա-
կութիւն, ուրիշ խօսքերով — եթէ մի տեղ մի
ջրային մարմն գոլորշի դասնայ, այն շրջանը
աւելի կամ պակաս կատաղի: Ամառուայ շոքերին
կուէ փարչերի մէջ ջուրը միշտ սառն է լինում:
այդ նորանից է, որ այդ աեսակ ամանների պա-
տերը անթիւ ծակաիքներ ունին և այդպէսով
նոցա ներաը հաղորդակցումէ դրսի երեսին հետ:
Եթէ փարչը լիքն է, ջուրը այդ ծակաիքներից
անցնելով, մանր կաթիքներով ելում է ամանի
դրսի երեսին, և այստեղ տաք օդի ազդեցու-
թեամբ, իսկոյն գոլորշեանում է, այսպէսով պա-
զում է ամանը և նորա մէջի ջուրը: Կոյնը պա-
տահում է և մարդու մարմնի հեա: Քրաինքը
որ շարունակ դուրս է գալիս մարմնի ծակաիք-
ներիցը, իսկոյն գոլորշեանալով, յափշտակում է
տաքութեան մի մասը և պաղեցնումէ մարմնի
մակերուցթը:

Եթէ մարդերենք, որ մարմնի արտաշնչու-
թիւնը տեղի է ունենում անդադար, որ և գի-

շեր և բոլոր ծակախիքներիցը, որոնցով ափուռած
է մեր մարմնի բոլոր մակերեւոյթը, — կարելի է
երեւակայցել արտաշնչուած հեղուկի առասու-
թիւնը: «Օ» ակախիքները այնպէս բազմաթիւ են,
որ մի մատնաչափ քառակուսի տարածութեան
վերաց մինչև երեք հազար հատ են համարել:
Ասմիսորիուս հաւատացնումէ, որ կաշիի դուրս
տուած հեղուկի օրական քանակութիւնը չէ կա-
րող երկու ֆունթից պակաս լինել: Ը արժողու-
թիւնները և մի քանի տեսակ կերակրները սաստ-
կացնում են նորա բաժանումը: Ընդհակառակը,
կան մնադարար կերակրների և ուրիշ տեսակ-
ները, որոնք արգելում կամ ակալացնում են կա-
շիի արտաշնչութիւնը, օրինակի համար, խոզի
միսը, սունկը, սեխը և ձուկը: Եռաս կերա-
կուրը սաստկացնումէ արտաշնչութիւնը: Կրիկ-
նահացից յետոյ անմիջապէս քուն մոնիլլ արգե-
լումէ նորա բաժանուիլը: «Կայնապէս պակասե-
ցնում են արտաշնչութեան բաժանումը տխուր
մաքերը և չարաչար մնաւոր աշխատանքը: Պատ-
ինկէր կարծում է, որ գիշերուայ, անկողնի
միակերպ տաքութեան մէջ տեղի ունեցած
արտաշնչութիւնը առաւել օգտակար է քան ցե-
րեկուանը, որը առաջանումէ աշխատանքից և
ճեմելուց:

Վենդանիների վերաց բազմաթիւ փորձեր են
արել իմանալու համար, թէ ի՞նչ կլինի հե-
տեւանքը, եթէ բոլորովին արգելուի կաշիի ար-

տաշնչութիւնը: Բժիշկ Բուլէ այդ նպաստակով
ձիերի մարմինը ծեփեց ձիւթով (լակով), և չե-
տեւանքը այն եղաւ, որ կենդանիները մեռան
շնչարգելութեան բոլոր նշաններով: Երբ նոցա
մարմինը բացին և քննեցին, աեսան, որ մարմնի
բոլոր մասերը, թափերը և լեարդը լցուած էին
սև արիւնով: Լոնկէ բժիշկի կարծիքով այդ
տեսակ մահը առաջ է եկել ածխաթթուի
կազմուածքի մէջ մնալուց: Ուսունոց վերաց
արուած փորձերը նոյն հետևանքը տուին:

* * *

Եռաս չափազանցութեան կարելի է ասել
որ սուր հիւանդութիւնների երկու երրորդ
մասը առաջանում է կաշիի անկանոն գործու-
նէութենիցը: Ապանիացիք մի առած ունին, թէ
«երբեմն քամին, որից ճրագն անգամ չէ մարտում,
կարող է մարդ մեռցնել»: Եւ այդ Ճշմարիս է.
միշտ հարկաւոր է զգուշանալ անցուկ քամիի
մէջ մնալուց, բայց առանց այդ զգուշութիւնը
Ավեֆահ չափազանցութեանը հասցնելու: Եյդ
գիւնականը այնքան վախենում էր անցուկ քա-
մից, որ երբեմն բաց մնացած զուռը, նորան
մինչև կատաղութեան էր հասցնում:

Պատմում են, որ մի անգամ նորա աղախին-
ներից մինը մօսակայ գիւղը հարսանիք երթա-
լով մնաւցել էր գոցել դուռը իւր հաեւից:
Ավեֆա մարդ յուղարկեց նորա քամակից, որպէս-

զի նորան ստիպէ դուռը գոյելու։ “Եղել պատմում են և դուքս ԱԷլլինդանի մասին։

* * *

ՈՇ մի նախազգուշութիւն կարելի չէ աւելորդ համարել եղանակի յանկարծակի փափոխութիւնների դէմ մանաւանդ աշնան ժամանակ։ Տժիշկ Աէլլինդէլմը ասում է, որ ժամանակց առաջ ձմեռուայ զգեսաները հանելոց և ամառուանը հագնելոց աւելի մարդ է մեռնում, քան ժամանախոց և պատերազմից։

Եւ սակայն այդ նախազգուշութիւնն էլ պէտք չէ ծայրահեղութեան հասցնել Օրինակի համար, Մալէրբ բանաստեղծը իւր գուլպաները նշնել էր առւել այբբենի կարգով, և քանի ցուրաը սաստիանար, հազնում էր մինը միւսի վերայից։ Երբեմն համում էր նա մինչև Ժ գիրը։ Անոր համար էլ նա միշտ հազում էր և անվերջանալի կատարը ուներ։

Ի՞ւժիօն ցրաից պատսպարուելու համար առաւել իւելացի միջոցներ էր ի գործ դնում։ Օներութեան ժամանակ նա հրամայում էր տաքայցնել իւր սենեակները մինչև 16⁰ Ուէօմիւրի շերմանափոխը և ամբողջ վեց ամիս տանից դուրս չէր ենում։ Կա իւր բնակարանը կոչում էր արուեստական Խտալեա։ Անդինացի բժիշկար, որ ապրեցաւ մօտ հարիւր տարի, իւր կեանիքի վերջի տարիները անցնում

124

էր սենեակումը, որը միշտ միենայն բարբեխառնութիւնն ունէր (18⁰ Ուէօմիւրի)։

* * *

Յիւս կողմից, տարբակոյս չկայ, որ այն անձինքը, որոնք ձմեռը սասակի տաքութեան մէջ են պահում իրանց, դժուարութեամբ են ասնում գողինան առաջի սովորները։ Չէ կարելի երեւակայել, ի՞նչ աստիճան մարդս գերի է գաւառում տաք զգեսաներին և տաք բնակարանին, եթէ սովորի նոցա։

Ճարտն Գուրիէ, զիսնական երկառափը, որը ուղղեկից էր Բօնապարտին նորա Նըեւելքի արշարանքներում, այնպէս զգայուն էր ցրաի դէմ, որ իւր կեանիքի վերջի տարիներումը պահում էր իրան մի աեսակ Գուտլարի մէջ, որտեղից միայն գլուխը և ձեռքերն էին երեւում։

* * *

”Ես չեմ հասկանում, ասում էր Աէնրիկ IV, ի՞նչպէս կարելի է չլինել քաղաքավարի և մաքրասեր, եթէ առաջնի համար բառական է գտակը հանել իսկ երկորդի համար հարկաւոր է միայն մի բաժակ ջուր։“

Մաքրութիւնը օգտակար է ոչ միայն մարմնի համար, այլ նա ունի և բարյական նշանակութիւն։ Մաքրութիւն սիրողը կտովորի և կարդ կանոն, յարգել իրան և ուրիներին, մաքրու-

125

թենից է կախուած կաշեի գործողութիւնների
 կանոնաւոր կատարուելը, նա ունի ազգեցու-
 թիւն և մեր ոգու արամադրութեան վերայ:
 Մարդիկ շատ շուտով պիտի հրաժարուէին ան-
 մաքրութենից, եթէ կարողանային միկրոսկոպի.
 միջոցով տեսնել այն ամենը, ինչ որ հաւա-
 քուում է կաշեի վերայ քրամինքից և փոշելից:
 Խոչպէս վերեւը սասացինք, քրամինքը պարունա-
 կում է իւր մէջ շատ նիւթեր. բայց գորոշի է
 գառնում քրամիքի միայն ջուրը, իսկ նորա մէջ
 ըւծուած մասերը մնում են մարմինի վերայ, իւրեւ
 կեղաւ բժիշկ Լէմիր այդ վերջինի մէջ գտաւ
 անհամար բազմութիւն սարին կենդանիների
 (բակաերիաների, վերբինների և այլն), որոնք
 չափազանց մանր լինելով, կարելի է միայն միկ-
 րոսկոպի (մանրացոյցի) օգնութեամբ տեսնել:

* * *

Բաղանիսները հին ժամանակներից յայսնի
 են, իւրեւ մարմինի մաքրութիւնը պահպանող և
 կեանքը երկարացնող միջոց: Առասպելական ժա-
 մանակներում պատճեւմ էին մի կենդանի ջրի
 մասին, որ յատկութիւն ունէր վերաբարձնելու
 ծերերին երիտասարդական ցժը: Յունաստա-
 նում, Արգոսի մօա կար Ասնասոս ազբիւրը,
 որի մէջ Խնոնան ամեն ատրի լողանալով, վե-
 անորոգում էր իւր գեղեցկութիւնը և երիտա-
 սարդութիւնը:

Յունաց պատմիչները յիշատակում են մի ու-
 րիշ ազբիւրի մասին, որ գտանուում էր Եվլեկյ
 կղզիի վերայ, այժմու Նեղոպնատոսի, որը համ-
 բաւ էր ստացել մարդկանց երիտասարդութիւնը
 վերաբարձնելու յատկութեամբ:

Հատ հին է ծեր մարդկանց այն սովորու-
 թիւնը, որով նոքա պահպանում և կազդու-
 րում են իրանց ցժերը միշտ լողանալով: Օրի-
 նակի համար, Գրանկլինը մինչև իւր մահը լո-
 ղանում էր ծովի մէջ: Ճան Լաֆիտ անունով
 մէկը, որ մեռել է 1766-ին Դեկտեմբերի 5-ին,
 ամենավաղ երիտասարդութենից սովորութիւն
 էր արեւ իրան շաբաթուայ մէջ երկու կամ ե-
 րեք անգամ լողանալու և ապրեցաւ 136 տարի:

* * *

Պաղ ջրի մէջ լողանալը ամեն աեղ ամեն ժա-
 մանակ յայսնի է եղած մարդկանց. նորանով օգ-
 տառում էին և հասարակածի (Էկվատորի) աակ
 ասպրող վայրենիները և հիւսիսի Ակիւթացիքը:
 Հոռվմայեցիք սկզբներումը լուայուում էին Տիգ-
 րոս գետի մէջ, բայց հասարակապետութեան
 վերջի ատրիներում տաք բաղանիսները սովորու-
 թիւն գարձան ժողովրդեան բարձր շըջանների
 մէջ, և յետոյ ատրածուեցան ամեն տեղ:

Հիւրասիրութիւնը պարտաւորում էր տան-
 տիրոջը առաջարկել իրա հիւրին մի բաղանիս:

Առովմայեցւոց կայսերի մինի պալատի մէջ
 երեք հազար մարմարիներ լուացուելու աւագան-
 ներ կային: Առօվմէական լուսաւորութիւնը մե-
 րինից աւելի գնահատառում էր լուացուելու
 առողջապահական օգուտը. հասարակական բա-
 զանիները շնուռում էին տարօրինակ ձոխու-
 թեամբ, որի համար մեր ժամանակներում վկա-
 յում էն Ներոնի, Եգիպտասի և Տրյամտափ
 բազանիների աւերանիները: «Տաղանիների գոր-
 ծածութիւնը մինչև այն ասաիձան օգտակար
 էր ճանաչուած, որ վեց դարերի ընթացքում
 նոքա ծառացում էին իրեւ ամենալաւ դեղ ա-
 մեն հիւանդութիւնների համար», ասում է
 Պլինիոս: Եթէ Առօվմայեցւոց, ամեն բանից
 առաջ, հարկաւոր էին ռանե et circenses (հաց
 և տեսարաններ), սոցա վերայ պէտք է աւելա-
 ցնել և ելլոպուտ անհրաժեշտութիւնը — balnea
 (բազանիս): Երբ Վեզուվի հրաբուղնից Աէր-
 կուլանում և Պոմպէոս քաղաքները կործանուե-
 ցան, Տիտոս կայսրը, որպէս վեց յրուէ սար-
 սափը և վեշար, որ ամբել էր Առօմնում այդ
 դժբաղութեան պատճառաւ, հրամայեց սկսել
 նոր հասարակական բաղանիների շնութիւնը:
 Մեր ժամանակներում տարօրինակ պիտի թուէր
 եթէ որ և է կառավարութիւն ի նշան վշտի
 կամ ուրախութեան, բանար հասարակական բա-
 զանիների գաները, որպէսպի ժողովուրդը ան-
 վարձ օգտուի նոցանով, մինչդեռ այդպիսի կար-

գագրութիւնները հին Առօմնում ամենասովո-
 րական բաներ էին:

* * *

Որովհետեւ մեր աւտոնին սովորութիւնները
 շատ քիչ համաձայնում են բազանիների ստէպ
 գործածութեանը հետ, — կաշի մաքրութիւնը
 պահպաննելու համար, հարկաւոր է գոնէ սովո-
 րութիւն անել մարմինը ամեն օր ջրով սրակելու:
 Շնու օրէնսդինները առանձին ուշադրութիւն են
 դարձրել այս առողջապահական միջոցի վերայ.
 Մափսէս և Վահամէս մացրին նորան կլօնական
 ծէսերի կարգը:

Առաւտօնները մարմինը սառ ջրով սրակելով մաք-
 րում ենք կաշին օտար մասնիկներից, որոնք կարծ
 են նորա մակերեւոյթին և արգելք են լինում
 նորա գործունէութեանը: Պրանից զատ, այդ
 միջոցով սասականում է բոլոր կազմուածքի գոր-
 ծունէութիւնը, մանաւանդ մնունդը, և կաշին
 կոտրի մթնոլորտի փոփոխութիւններին: Երե-
 խանների համար մարմնի պաղ ջրով սրակելը ան-
 տարակուաելի օգուաներ է բերում: Իրեւ
 կազմուածքը ամրացնող միջոց:

Մի ուրիշ առողջապահական միջոց, որը
 շատ օգտակար է կաշիի գործունէութիւնը պահ-
 պաննելու համար, մի միջոց, որից այժմ ոչ մի
 մարդ չէ օգտուում: Է մարմնի չոր շփումն կոչ-
 ուածը: Անումը կարեւոր նշանակութիւն էին

տալիս նորան և զանազան ներդործութիւն էին
վերաբերում, նայելով ի՞նչ սասակութեամբ,
մարմինի լանգին, թէ երկայնութեանը և այն,
շփում էին:

Աթէ մարմինը ձեռքով խոզանակով կամ մի
կառոր ֆլանելով շփուի, կաշին կկարմիի, կտաքա-
նայ և նորա գործունէութիւնը կսասականայ.
բացի գորանից, արիւնը կսկսի առելի արագ
պտափիլ և հաւասարասպէս տարածուիլ մարմին
ամեն մասերի մէջ:

* * *

Այսպիսի շփումները օգտակար են գէր մարդ-
կանց համար, որովհետեւ պակասեցնում են նո-
ցա աւելորդ պարարտութիւնը. նոքա օգտակար
են նիշարմներին և վասոյժներին ևս, որովհե-
տեւ, գրգռելով և կանոնաւորելով մարմին մէջ
արեան պայտար, ամրացնում և պարարտացնում
են նոցա մարմինը: Այն անձինք, որոնց առողջու-
թիւնը և տարիքը թոյլէ տալիս շատ շարժողու-
ներ անել կարող են զարգացնել և ամրացնել
իրանց մկանունքները չոր շփումներով:

Աթէ Ավետոնիոսի հաւասար-
նոս վերականգնեց իւր առողջութիւնը չոր շփում
ներով: Բժիշկ Ուշիլիյէ—Փարիզէ այս հարցն
է առաջարկում: արդեօք այս շփումների օգուտը
նորանում չէ կայանում, որ կենդանական անտե-
սութեան մէջ սասականում է ելքարականու-

թիւնը, և նոցանում աեմնում է մի ամենալաւ
միջոց ծերութեան ժամանակ առողջութիւնը
պահպանելու համար: Աեր ժամանակի անուանի
մարդիկներից մինը միայն մի պատասխան է տա-
լսե նոցա, որոնք գանգատում են իրանց առող-
ջութենիցը. „Եյդ նորանից է, որ Գուք չէք
շփում ձեր մարմինը“!

Մի անգղեացի բժիշկ ասումէ. „Հաս մե-
ծասուններ կան, որոնք թանկ գներով բազմա-
թիւ ախոռապեաններ են վարձում իրանց ձիերը
մաքրելու և շփելու համար: Եյդ մարդիկը
քանի տարիներ կարող էին վաստակել իրանց
կեանքի վերայ, եթէ սափիկին այդ ախոռապեա-
ններից մէկին իրանց վերան էլ միենցն գործո-
ղութիւնը կատարելու, ինչ որ անում են նոցա
ձիերին“:

Բժիշկ Գիգօ օրինակ է բերում մի հարիւր
տարեկան ծերունիի, որը իւր կեանքի վերջի
30 տարիները ազատ էր մնացել պօդազայից,
որովհետեւ ամենայն օր շփումէր իւր մարմինը
հոտաւեա նիւթերի մէջ թալթախած ֆլանելի
կարուվ:

Գ և ս ո ւ թ ի մ ա գ ն

Ա եռական ժուժկալութիւնը և ամուսնութիւնը:

«Զբանամուլ երիտասարդութիւնը մի դաւա-
ճանութիւն է ծերութեան դէմ: Թանկ է
նասում մեզ երեկոյին մեր առաւտու շարու-
թիւննեղը»:

Բ է Կ օ ն:

Հոչակաւոր պրօֆեսոր Կիկոլայոս Լէօնի-
ցինուս, ընայելով որ 96 ապրեկան էր, դեռ
կարողանում էր ֆիզիկա դաս տալ Գյէլարում:
Երբ նորան հարցրին, թ'նչ միջոցներ է ի գործ
դլեւ նա այդպիսի առողջ ծերութեան համե-
լու համար, նա պատասխանեց. «Ես վասնում
էի միայն առկուր, իսկ դրամագլուխը պահեցի
ծերութեան համար»:

Ա եռական կարիքների մէջ խոչեմ չափաւո-
րութիւնը, իրաւացի, պէտք է երկայնակեցու-
թեան էական պատճառներից մինը ճանաչել
մանաւանդ, եթէ մարդ վաղ երիտասարդու-
թիւնից չետեւի նորան: Կատարեալ հասակն
ևս պարտական է ինսյողութեամբ վարուել

այս դէպքում, և պէտք չէ սպասէ օրհասական
ժամկին, մինչև կեանկի դրամագլուխը ամբողջա-
պէս վասնուած լինի:

* * *

Ծնդհանրագէս, մարդս միայն այն ժամանակ
նկատում է, որ չափից աւելի խմեց, երբ նա
բաժակի յատակն է աւենում: Ծնուանի բարոյա-
բան Շարլոնը ասում է այդ մասին. «Ուշ է
ափսոսալ անդարձ կորածի վերայ, — մուածել
ինսյողութեան վերայ, երբ բան չէ մնացել —
գնել ենելու, երբ տօնավաճառը արդէն վեր-
ջացել է»:

Մի հիմնաւոր օրէնք կայ, որը ամեն կենդա-
նի էակների համար ընդհանուր է — կանուխ
պառող առողջները կանուխ են մեռնում: Մի
տարի կեանք ունեցող թյսերը թառամում են,
երբ որ պառող բերին: Կամնասուների մէջ,
կենդանին որչափ աւելի վաղ ընդունակ է դառ-
նում արտադրելու և որչափ աւելի պաղատու է
նա, այնչափ աւելի կարծ է լինում նորա կեանքը:
Միեւնյնը նկատուած է և թռչունների մօտ.
եթէ դեղձանիկը ամեն տարի ձագ բերէ, նա
կարող է ապրել միայն վեց տարի, մինչդեռ —
ինչպէս նկատում է թռչնապան Գյէրվիէն, որ
այս թռչունը լաւ ուսումնասիրել է — „նա կա-
րող է ապրել մինչև քսան տարի, եթէ շեռու
պահուի սեռական յարաբերութիւններից»:

Բիւֆֆօն նկատում է, որ աղաւնին ուժը
տարիից աւելի չէ ապառում, մինչդեռ ողջախոչ
տատրակը երբեմն համում է 20 և մինչև 50
տարիների:

* * *

Բոլոր երկար ապառող մարդիկ, միւնյն ժա-
մանակը, զանազանուելեն ուրիշներից և նորանով,
որ առաւել երկար պահպանել են իրանց ար-
տավրական ընդունակութիւնը. իսկ այդ լաւ ա-
պացոց է, որ նոքա երիտասարդ տարիներում
խնայել են իրանց ոչքը: Ճռչակաւոր Անգլիա-
ցին, Թոոմ Գարրէ, իւր հարիւր տարեկան հա-
սակում, գատապարտուել էր եկեղեցւոց զրան
կանգնած ապաշխարելու, անոր համար, որ
խնդարել էր մի երիտասարդ աղջկայ կուսու-
թիւնը և նորան մայր էր արել:

Ճժիշկ Ռարտօմէն պատմում է մի մարդու
մասին, որը 127 տարի է ապաւել և հարիւր
տարեկան եղած ժամանակը ամուսնացել է մի
երիտասարդ աղջկայ հետ և նորանից շատ ե-
րեխաներ է ունեցել:

Ը վետացի Գուգլաս Գուլաէնը 100 տա-
րեկան ամուսնացաւ և նոյնպէս երեխաներ ու-
նեցաւ:

Ճժիշկ Գիւֆուրնէլ—որը մեռաւ Փարիզում
1810 թուին 120 տարեկան — 110 տարեկան
հասակումը ամուսնացաւ մի 26 տարեկան աղ-

ջկայ հետ և նորանից մի քանի երեխայք ու-
նեցաւ:

Պատմաբանները յիշատակում են, որ Կանառն-
Յինզօր իւր ուժսունամեայ հասակումը հայր
դարձաւ. Մասախիսա, “Եռմիդիացւոց կայսրը,
և Վլասախիսաւ, Լհհացւոց թագաւորը, միե-
նոյն ուրախութիւնը վայելեցին 90 տարեկան
հասակում, և այն:

* * *

Ահա մի քանի անտարակուսելի օրինակներ եւ:
Անցեալ գալու վերջերին, Կօնինում մի կին,
Վարդարիսա Կրօպակովնա անունով, 95 տարե-
կան, եղորդ անգամին ամուսնացաւ Գաղղիացի
Գասպար Դէկարին հետ, որը 105 տարեկան էր,
և ունեցաւ նորանից երկու որդի և մի աղջեկ,
և մեռաւ հարիւր ուժը տարեկան:

Դորանից մի քանի տարի յետոյ, Ոէէցի եպիս-
կոպուր հաղորդեց Փարիզի գիտութեանց ակա-
դեմիային, որ մի մարդ, 94 տարեկան հասա-
կում, ամուսնացաւ մի 83 տարեկան իսոջ հետ,
որը յղացել էր նորանից: “Եահապեաների դարը
նորոգուում է իմ վեճակում” նկատել էր սրբա-
զանը:

Լզինբուրգում մի 80-ամեայ կին, 1730-ին
Գեկտեմբերի 25-ին, աղասուեցաւ յղութենից և
բերեց երեք տղայ միասին:

* * *

Ամենից առելի սեռական ժուժկալութեանը
պարտական են անսպատականները և ճգնաւոր-
ները իրանց տարօրինակ երկարակեցութիւնը:
Վարմնաւոր կրքերի սպաննութեան այս հերոնները
կուռում էին չար սաստանայի փորձանկների դէմ
պատերով և ամեն տեսակ զրկանկներով, և,
չնայելով այդ ամենին, համսում էին այնպիսի
խոր ծերութեան, որը անհասանելի է հեշտա-
մէր և փափկասէր մահկանացուներին:

Այս սակաւակեաց մարդկանց հակառակ, կա-
րելի է օրինակբերել այնպիսիններին, որնք, չնայե-
լով իրանց վարած զքօնամոլ կեանքին և ամեն
անչափաւորութիւններին, կրկին երկար են ապ-
րել պահպանելով, կարելիէ առել մինչև վերջի
շունչը սեռական ընդունակութիւնը, որը սովո-
րաբար կրչումէ այդ տարիքներին: «Խոյանից մի
քանիսը հռչակաւոր մարդկի են և պատկանում
են պատմութեանը:

Վարշալ դ'Էստիէ՛ն, ելլր 91 տարեկան էր,
երրորդ անգամ ամումնացաւ, և „առանց կա-
տակի“, նկատում այն ժամանակի պատմիչներից
մին:

Դուքս Ուիշէլիօ՛ն, որ առաջի անգամ ամու-
նացել էր իւր 14 տարեկան հասակումը, երրորդ
անգամ պատկուեցաւ, ելլր 84 տարեկան էր, և
„մի աղամարդ էր բոլոր յասկութիւններով“, հա-
ւասացնում են նորս ժամանակիցները:

Դուքս Լովունի, որ յայսնի է իւր բազմա-

թիւ սիրահարական յարաբերութիւններով,
ապրեցաւ իննուուն տարի:

Հայց այս բոլոր օրինակները, որոնց վերայ
կարելի էր առելացնել և ուրիշները, որոնք կեանքի
մէջ կարող են պատահել առել բան չեն, եթէ
ոչ միայն հազվագիւտ բացառութիւններ, ընդ-
հանուր կանոնից, և ապացուցանում են, որ բնու-
թիւնը պարգեւումէ մի քանի ընարեաններին
անսովոր կինական ոյժ, որպէս կարողանում
են զիմանալ ամեն տեսակ անչափաւորութիւննե-
րին: Եյն միաբը, որ սեռական անժուժկալու-
թիւնը կարձացնումէ կեանքը, մենք գտնում ենք
զիցաբանութեան մէջ ևս. Վեներան, սիրոց
սաստածուհին, ներկայ էր լինումնաև յուղար-
կաւորութիւններին և այդ ժամանակը նա կրում
էր Լիբիան ա անունը:

* * *

Մի Գերմանացի բժիշկ անուանումէ սեռա-
կան անչափաւորութիւնը „մահուան մանգալ“,
և ասումէ, որ նա վեսասկար է ամեն հասակի
համար. բայց մանաւանդ ծերութեան ժամանակ
հարկաւոր է զսպել ցանկութիւնները, որոնք
շատ անգամ, ծնունդ էն լինում իսպառուսիկ երեւա-
կայութեան: Ոօրի կարտինալը ասում էր. „Ե-
մեն անգամ, ելլր ծերունին զանց է աւնում
ողջախոչութեան կանոնը, նա ինքն իւր գլխին
մի բուռն հող է ածում“: Հութվանդ ասաց.

„Եյն մարդը, ողը 65 տարին անցնելուց յետոյ,
անձնատում է լիում սիրոյ, ամեն անգամին զար-
նում է մի գամ իւր դադաղին“:

Խոհեմ ժուժկալութիւնը վաղուց է ճանա-
չուած, իբրև ամենազօրեղ միջոցներից մինը
մարմնի ոյժը և ամրութիւնը պահպանելու հա-
մար: Հնումը մենամարտառթեան արուեստը այդ
առաջին պայման էր դնում:

Շատ ազգերի մէջ—հրէից և հռովմայեցոց,
չափաւորութիւնը խասիւ հրամայուած էր զի-
նուորմներին պատերազմի ժամանակ, մինչեւ ան-
գամ նորան պարտական էին ենթարկուել ամուս-
նացողներ էլ: Յայտնի է, որ Անիբալի զօրքը
Կապուայում փչացաւ սիրոյ հրճուանքներին ան-
ձնատուր լինելով: Երէակոս հասաատում է, որ
նիշար մարդիկ ժուժկալ մնալով կարող են յաղ-
թել հսկաներին, որոնք տկար ացել են իրանց
անչափաւոր սեռական զուարձութիւններով: Իր-
ժիշկ Բալիկի նկատում է, որ ժուժկալ չաս-
մուսնացած մարդիկ առաւել լսու են կուռում
հիւանդութիւնների դէմ, քան թէ ամուսնա-
ցածները:

* * *

Անչափաւոր հեշտասէր բաւականութիւն-
ները բթացնում, մինչեւ անդամ, բոլորովին մեռ-
ցնում են մտաւոր ընդունակութիւնները: Ո՞-
հեշտասէր մարդու ուղեղը, որի մասին յիշում

է Գալիէն, կամաց-կամաց վարժանալով, հասաւ
մի բուն մեծութեանը: Ընդհակառակը, ժուժ-
կալութիւնը ընդունակ է անում մարդու ծանր
աշխատանքների և մեծ գործերի: Կատոն տ-
տում էր, որ եթէ աշխարհիս վերայ կանայք
չլինէին, մարդիկ պիսի կարողանային աստուած-
ների հետ խօսակցել: Յայտնի է Կամէդեկլի ասած
խօսքերը թէ՝ „աղամարդի մարմինը վանազմն է
ստեղծուած կնոջինից նորա համար, որպէս-զի
աղամարդը կարողանայ զիտութիւններով պարա-
պի“: Տարակոյս չկայ, որ անինութիւնը և ժուժ-
կալութիւնը հրամայուած է զանազան դաւանու-
թիւնների պաշտօնեաներին այն նպատակով, որ նո-
ցա մնաւոր ընդունակութիւնները պահպանուին
առաւել բարձր, իրանց կոչմանը համապատասխա-
նող ասափանի վերայ: Իժիշկ Աաաիէ ենթադրում
է, որ այդ իսկ նպասակալ հին օրէնքները արգե-
լում էին ամուսնութիւնը բժիշներին էլ որոնք,
ինչպէս յայտնի է, ամուսնանալ սկսան միայն
1152 ժուականից:

* * *

Եթէ ժուժկալութիւնը ամրացնում է ան-
հատական ընդունակութիւնները, —միւս կողմից
էլ մնաւոր աշխատանքը և խոր մնածմունքները
մարդուս առաւել ընդունակ են անում չափա-
ւորութեան և սանձում են հեշտասէր ցանկու-

թիւնները: Այս պատճառուաւ, կուսակիցները
բարձր տեղ են բանում երկայնակեցութեան
սանդուղին վերայ: Եշխարհային մաքերից հրա-
ժարութիլ բգացնում է կրքերը և նպաստում է
կեանքի երկարանալուն:

Նագարեան բանասաեղծութիւնը աւանդելէ
մեզ մի գեղեցիկ և սրամիտ այլաբանութիւն (ալի-
գորիա): Յայանիէ, որ յուշկապարիկները, Աքիլո-
սի և Կալիօպէի աղջիկները, դիմունում էին
Յունաց մօս հեշտասէր զուարծութիւնների գա-
ղափարը: Այս զմայելիցուցիչ կանաքը այնքան
մարդ էին սումնել, որ իրանց բնակած կղզիի
բոլոր երեսը ապշեցնում էր մարդու իր սաս-
տիկ սպիտակութեամբը, —մինչև այն ասաիձան
ծածկուած էր նա մարդկային ուկրններով: Ոդի-
սեւս այդ կղզիի մօսից նաւելու ժամանակ իւր
ուղըկիցների ականջները գոցեց մնոն, իսկ իրան
հրամայեց կազել նաւի կայմին: Որփէս խա-
փանում էր յուշկապարիկների երգը իր քնարի
չնչեւններով:

* * *

Հեշտասէր զգոցմունքները այնպէս զօրաւոր
էին, մանաւանդ Յունաստանի տաք երկնքի տակ,
որ բժիշները և իմաստունները, նոյա դէմ
դնելու համար, դիմում էին մինչև անգամ գե-
ղային միջոցներին: Աժէնքում գործածում էին
այդ նպատակով զանազան բօյսերի արմասները,

նելակց և դրսից: Յայները Պանասէնէսի տօնելի
ժամանակ քուն է լինում մի առանձին բոյսի
(vitex agnus castus) Ճիւղերի վերան, որպէս-զի
հեռու մնան գայթեակղեցուցիչ մաքերից: Խոր-
հուրդ էին տալիս գործածել նոյնպէս բելլագոնա,
նունուֆար, մանանեխ, այծմօրուքի ծաղեկը և
այլն, բայց այդ բոլոր միջոցները անօգուտ են
և չեն հասցնում նպատակին:

* * *

Վմենասագուու միջոցը է գործունեայ, պարապ-
մունքներով լի, կեանքը: Հին խօսք է, որ անգոր-
ծութիւնը մայր է ամեն մոլութիւնների: Մարմ-
նամարզական բաւականութիւնների մէջ հին
ազգերը որսորդութիւնը համարում էին իրեւ
մի ամենալաւ պահպանող միջոց:

Դիմանա, որսորդութեան աստուածուհին,
միեւոյն ժամանակը, էր և ողջախութեան ա-
ստուածուչի, թէպէսև սիրում էր Լնդիմիօ-
նին, Պանոսին և Օրփանոսին: Զի նստելը, ինչ-
պէս երեւումէ Հիպատոկրատէսի հին Ակիւթաց-
ոց մասին յայանած կարծիքներիցը, նոյնպէս
հեռու է պահում սեռական գրգռմոնքներից:
Պաստիկ մուաւոր աշխատանքը արգելում է մար-
դու մէջ սիրոյ խորհուրդների ծագելուն, և ե-
թէ Կեւթոն ժուժկալութեան ախպարն էր (ա-
սում էին, որ նա կյս մեռաւ 80 տարեկան հա-
ստիքումը) — դորան պարտական էր նա մշտական

մուաւոր աշխատանքներին։ Ամենից աւելի վաս-
սակար է խաբուսիկ, երեւակայութիւնը գրգռող,
գրքերի կարգալը։ „Պակաւ է պատահումասում
է Պլուտալքոս—որ հեշտապիտութիւնը չանցնի
հոգիից դէպի մարմինը“։

Քենելոպէ մշտական պարապմունքքներով պահ-
պանում էր իրան իւր վերայ աչք ունեցողներից,
որոնք ուզում էին մոլորեցնել նորան իւր մարդու-
բացակայութեանը, միւնյն ժամանակը, երբ
Ոդիսեւս հաւատարիմէր մնում իւր կնոջ, ուշ
չգնելով յուշկապարփիների գլուխէ հրապուրանք-
ներին։ Բժիշկ ջիմմերմանի կարծիքով, հասա-
րակ կարը և ձեռագործը կանանց աւելի հեռու-
են պահում գայթակղութիւնից, քան թէ ամեն
աեսակ զգուշութենները։ Այս ջիման վերայ,
մի անգղիացի, որ խոր ուսումնապիրել է մարդ-
կային սիրաը, առաջարկեց սովորեցնել ամեն
դասակարգի կանանց կար և ձեռագործ, որոնք,
լցնելով կեանքի դասարկ մասը, հեռացնում են
նոցանից մեղանչական մաքերը։

* * *

Կերակների և զինիի դործածութեան մէջ
չափաւորութիւնը նոյնպէս մի գեղեցիկ միջոց է,
որ պահպանում է սեռական ձգտումների դէմ։
Այս չափաւորութիւնը հին յոյները անուանում
էին Պօֆրօզինա, այսինքն „իմաստութեան պա-
հապան“։ Բնդշանիրապէս, կարելիէ ասել որ

մարդկանց և կենդանիների սեռական յանկու-
թիւնները այնչափ աւելի գրգռուում են, որչափ
աւելի մննդաբար և առաս է նոցա կերակուրը։
Բժիշկ Տրամբլէ ապացուցեց, որ պօլիսները
(սարին կենդանիների մի տեսակը) սկսում են
արտադրել երբ որ կերակուր են գանում իրանց
համար, և, լնդշակառակը, գաղաքում են բաղ-
մանալից, եթէ կերակուր չունենան։ „Կարելի
չէ երեւակայել—ասում է մի յայտնի գրագէտ
—ինչպէս հաւատարիմէ մնում կինը իւր մար-
դուն եթէ նաքաղցած է“!—

* * *

Հին ազգերը արձաններ էին կանգնում ամուս-
նութեանը և այսպէս արձանագրում էին նոցա
վերայ։ „Ամուսնութիւնը հեռացնում է ծերու-
թիւնը“։

Ա իճակագրական դիտողութիւններից երեւում
է, որ ամուսնութիւնը երկարացնում է մարդու
կեանքը, որովհետեւ նո չափաւորում է սեռական
ցանկութիւնները և կանոնաւորում է նոցա։ „Այն
մարդկանց համար, որոնք հակում ունին դէպի
հեշտապիտութիւններից կեանքը—ասում է Պլուտալքոս—ա-
մուսնութիւնը անհրաժեշտ է, ինչպէս մի սանձ,
որ կարող է պահպանել նոցա չափաւորութեան
սահմանների մէջ“։ Հուֆլանդ նկատում է։ „Ա-
մուսնութիւնը, բաղդատելով անմնութեան հետ,
նման է մի համեստ լնտանեկան ճաշի, իսկ ան-

ինութիւնը մի շուայլ սեղանի, որ ծածկուած
է մաքից անցած ամեն կերպակներով^ւ:

Գրեթէ բոլոր երկարակեաց մարդիկ ամուսնա-
ցած են եղել:

Բայց չափաւորութիւնից, որին ամուսնացած
մարդը քիչ թէ շատ հետեւումէ, ամուսնութիւնը
նպաստում է կեանքի երկարանալուն նաև այն
պատճառաւ, որովհետեւ մարդս մի նպաստի է
ունենում, որը կապումէ նորան կեանքի հետ—
կնոր և ընտանիքը, և նոցա բարեկեցութեան, նո-
ցա ապագայի ապահովութեան հոգսը: Հաստատ
նպաստիկը „ապրելու“ առիս է կազմուածքին մի
անսովոր ցժ և հաստատութիւն, և ծառայումէ
իրեւ մի զօրաւոր միջոց երկայնակեցութեան:
Միւս կողմից, տարակյս չկայ, որ ծերունին, որը
շրջապատուած է լինում իւր բարի կնոջ, սիրելի
զաւակների և թուների քնքուշ հոգացորութիւ-
նովը, աւելի մեծ յոյս ունի երկար ապրելու, քան
թէ ամուրի մնացած մարդը, որը, նաև հարստու-
թեան մէջ, խաղալիք է վարձկանների ձեռքը,
զգումէ միշտ միայնութիւն և ձանձրութիւն—
այդ երկու որդերը, որոնք ամեն բանից աւելի մա-
շում են կեանքը և առողջութիւնը:

Ասկայն ամուրի կեանքը առաւել ազդումէ կա-
նանց կեանքի մէջին աեւորութեանը վերաց, քան
թէ աղամարդոց:

Գաղղեացի Կիժոն բաղաքի վերաց եղած դի-
տողութիւններից երեւում է, որ ամուսնացած

տղամարդիկ եօթը տարի աւելի են ապրում քան
թէ ամուրիները, և ամուսնացած կանայք հինգ
տարով աւելի, քան թէ աղջիկ մնացածները:

Այս զանազանութիւնը մեկնելը դժուար չէ:
Մի կողմից, տարակյս չկայ, որ ամուսնութիւնը
չունի կանանց երկայնակեցութեանը համար այն
օգուար, ինչպէս աղամարդոց, որովհետեւ նոքա
ենթարկուում են յզութեան, աղայաբերութեան,
կաթ տալու և այն, որոնք սաստիկ յնցում են
կազմուածքը: Միւս կողմից, անամուսին կանայք
աւելի սահապ ապատ են մնում զանազան անչափա-
ւորութիւններից, որոնց անձնատուր է լինում
ամուրի աղամարդը, և որոնք, բնականապէս, խան-
գարում են նորա առողջութիւնը:

Գ Ե Ա Խ Ի Ժ Վ :

Բ ա ր ո յ ա կ ա ն կ ե ա ն ք ը :

ՆԵՐԵ ուշադրութեամբ քննեսք, կարելք է
համոզուել որ մարդկանց մեծագոյն մասը իւր
կեանքը ժարում է անվատահ, անհանդիսա, և
մասնում է վշտերից ։

Բ Ի Ւ Փ Փ Օ Ւ :

Արքերը անբաժան են մարդուս բնութենիցը,
և նոքա մեզ արուած են մեր իսկ երջանե-
կութեանը համար: Մարդս առանց կրքերի պի-
տի նմանէր մի նաւի առանց առագաստների,
զեկի և բեւեռացցից, թողած ովկիանոսի մեջ
քամիների և ալիքների ձեռքը խաղալիք: Բայց
կրքերը նման են հարսաւթեանը—նա լու ծա-
ռաց է, բայց վաս իշխող:

Ով որ վաղ երիտասարդութենից չէ պարզում
իրան իւր կրքերը կառավարելու խորհուրդը—
նա չէ կարող յուսալ երկար կեանք ունենալու:
Ոչ մի բան այնպէս հասաւառ չէ ապացուցանում
հոգու մարմնի հետ ունեցած սերտ կապը, ինչ-

պէս այն ազգեցութիւնը, որ ունին կքերը և
հոգեկան վրդովմունքները կապմուածքի զանազան
գործոլութիւնների վերաց: Բժիշկ Մարտէնը
առաջ է բելում մի դէպք, որաեղ կենդանական
տաքութիւնը բարձրացնէլ է 29° -ից մինչև 30°
Ուկօմիւրով բարկութեան ժամանակ, և իջել է
մինչ 27° վախնալուց:

Պրու բժշկի գիտողութիւնների համեմատ, ած-
խային թթուի բաժանումը շնչառական գործա-
րաններից սաստկանումէ, երբ մարդ ուրախ արա-
մադրութեան մեջ է գտանուում, և, ընդհակա-
ռակը, այդ բաժանումը նուազումէ անհամագուտու-
թեան և վշտերի ազգեցութենից: Վաշին արաս-
շնչութիւնը հետեւում է նոյն օրէնքին, ինչպէս
նկատումէ Ամնկատրիուս: “Եցնավիսի երեւոյթների
պատահում ենք կենդանեաց և միջաների մեջ:

* * *

Արքերից անկախ կան ուրիշ աւելի մեզի
բարցական պայմաններ, որոնք նոյնպէս կարող են
ազգել առողջութեան և կեանքի աեւողութեան
վերաց: Բարերար ազգեցութիւն ունեցողների
կարգը կարելի է զնել „յոյսը“, որը Պինսարս
անուանում է „ծերութեան ծծմայր“:

„Փիլիսոփաները, որմնք յայսնի են ԽՀպիս-
տիկեան անունով —ասումէ Պյուտապրու—հա-
սաւատում են, որ յոյսը պահպանում է երկարա-
ցնում է մարդու կեանքը: Եւ իրաւի, այն մար-

գիկ, որոնք իրանց մի յայտնի նպատակ են
դրեւ և օրէ օր ամեն ջանքով առաջ են զի-
մում դէպի ի այդ նպատակը, այդ մարդիկը օժիտ-
ուած են լինում առաւել մեծ „կենսական ու-
ժով“: Ընդհակառակը, նոքա վհատում են հոգ-
ւով և մարմնով եթէ նոցա յօյար պարագ ենէ,
կամ եթէ նոքա համեն իրանց ցանկացած նպա-
տակին: Այս մաքով պէտք է մեխել գաղղիական
առածքը թէ՝ „հարսանիքից մի օր առաջ և ճա-
նապարհի վերայ ոչ ոք չէ մեռնում“:

Յայր նորանով բարերար ներգործում է
մարդու վերայ, որ նա նման է մի կանխազգաց
ուրախութեան, և որ նա, բայց զորանից, պահ-
պանում է կամքի ոյժը, որը, ինչպէս մենք յերայ
պիտի տեսնենք, մարդկացին կազմուածքի ամե-
նազօրեղ նեցուիներից մինն է:

Ուրախութիւնը և զուարթ արամադրու-
թիւնը, ուղղելով կենսական շարժումները կենդրո-
ւից դէպի մակերեւոյթը, զօրաւոր կերպով ազդրում
են կենդանական ունակութիւնների կամոնաւոր
կատարելուն և գոյութեան երկարանալրւն վերայ:

Հին ազգերը առում էին, որ ծիծաղը շեռա-
ցնում է ծերութիւնը, և որ Վեներան միշտ
երիտասարդ և գեղեցիկ է մնում նորա համար,
որ հանապազ շըջապատուած է „խաղերով և
ծիծաղներով“:

Հերակլիտէս երբէք չէր ծիծաղում, և մե-
ռաւ բարակացաւից 60 տարեկան:

Դէմոկրիտէս հանապազ ծիծաղում էր, միշտ
առողջէր և ապրեցաւ 109 տարի:

„Երբէք միշտ ուրախ, արէք շատ շարժողու-
թիւններ, հեռու պահեցէք ձեզ անչափաւորու-
թիւնից—եւ դոք կարող կը նիկը ծիծաղել իմ վե-
րայ“, առում էր մի հին բժիշկ:

* * *

Ծիծաղը երբեմն կարող է ներգործել իրեւ
մի ամենասպառ գեղ:

Հուչակաւոր Արլիա բժիշկը մի անդամ կան-
չուած էր օգնութիւն հասցնելու մի հիւանդի,
որ մելանքոլի սով բանուած էր:

—Ձեզ խորհուրդ եմ առաջիս, ասայ նա հի-
ւանդին, որչափ կարելի է ստէպ յաճախել մի-
մասցին ներկացացումներին: Դէպիւրօն իւր կա-
տակներովք քեզ կրժշկէ:

—Պալոն, պատասխանեց հիւանդը, երեւում
է, որ իմ հիւանդութեան համար գեղ չկայ,
որպէս դէպիւրօն ես ինքս եմ:

Հուոր մեծ վշտի մէջ էր, պապը մեռնելու
հիւանդ էր: «Կրու գլխի մօտ նասած էր իւր սի-
րելի կապիկը: Պապական թագը, կարտինաների
նախանձի այդ սուարկան, փայլում էր սեղանի
վերայ, նորա մօտ ծիրանի քղամիար: Պապիկը
յանկարծ աեղից վեր թռչում, դնում է իւր գլխին
թագը, ծածկում է իրան ծիրանովը և սկսում մեծ
վսեմութեամբ ձեմել սենեակի մէջ: Այս տեսա-

բանը այն ասաիծան ծիծաղեցնումէ պապին, որ
նորանում մի բարերար փոփոխութիւն կատար-
ուում և նո ազատուում է մահից:

Լորան Ժուբեր, «Նավարայի Արքարիտա-
թագուհու բժիշկը պատմում է մի ուրիշ հի-
ւանդի մասին, որը վերջին դրութեան մէջ էր:
Բժիշկը բերել է առուել նորա համար մի ասամիկ
լուծողական գեղ: Կապիկը խլել էր գեղը և
միանգամից խմել է բոլորը: Առուծողականը շու-
առվ ներգործել է և այդ անշափ զուարձացրել է
և ծիծաղեցրել է հիւանդին. նոր փոփոխու-
թիւն է առաջ եկել նորանում և մեռնողը առող-
ջանում է:

Հաչակաւոր Խրազմը ուսւեցք ունէր թոքերի
մէջ, որ նորան մահ էր սպառնում: Այդ ժա-
մանակ նա մի նամակ ստացաւ, և այդ նամակը
այնպէս սասամիկ շարժեց նորա ծիծաղը, որ ու-
ռեցը փլաւ և հիւանդը առողջացաւ: Աղանից
յեայ ծերունին դրեց իւր յայանի գիրքը „Գո-
վեստ յիմարութեան“ անունով:

Բժիշկ Պելիճն առաջ է բերում մի գէպք,
որտեղ մի կին յաջող կերպով ազատուել է իւր
ծանր ծնունդից, որովհետեւ մի պատճառով նա
սասամիկ ծիծաղել է:

Տիաօ պատմում է մի ուրիշ կնոջ մասին, որի
սասամոքսը կարող էր մարտել կերակորը միայն
այն ժամանակ, եթէ ճաշից յեայ նա ծիծաղ, էր:

* * *

Ուրախութիւնը միշտ բարերար է ներդոր-
ծում կազմուածքի վերայ. բայց նա միայն այն
ժամանակը կարող է նպաստել կեանքի աեւողու-
թեանը, եթէ հանդարա և չափաւոր է. սաս-
ամիկ և անանձ ծիծաղը ակարայնում է ֆիզի-
քական և բարոյական ցժերը: «Եղմկալի և ան-
չափաւոր ուրախութիւնը և սասամիկ ծիծաղը—
ասում է Բէկօն աւելի բժիշկի քան թէ բա-
նասատեղծի լեզուով—կարելի է անուանել՝ հոգ-
ւոյ փորլուծութիւն», որ սասամիկ թուլացնում
է կազմուածքը»:

Եթէ չափաւոր ուրախութիւնը պրգուում է
հոգեկան և մարմնական ցժերը,—ընդհակա-
ռակը, վեշար, ախրութիւնը, նախանձը սպան-
նիչ կերպով ներգործումէն մորդու վերայ, որով-
հեաւ այդ կլքերի ազգեցութեամբ արիւնը
մարմնի մակերեւոյթից հաւաքուում է գէպի ի
կենդրումը—գէպի ի թոքերը, սիրաը և այն, որի
հեաւանքը լինումէն հեծեծանքը և արասասուքը:
Լեղին զադարում է լեարդից գուլա գալիս և,
նորա մէջ մնալով, առաւել թանձանումէ. մնա-
ցած գործարաններն ևս դադարումէն կանոնա-
ւոր կերպով գործելուց: Տիսուր բնութիւն ունե-
ցող և միշտ հոգսերով զբաղուած մարդիկ, եթէ
վէլքեր ունենան, շատ գժուար են բժշկուում, և
ընդհանրապէս նոքա շատ ծանր են առողջանում
հիւանդութիւններից: Յանկարծակի վեշար կա-
րող է նաև մահուան պատճառ դառնալ: Բժիշկ

Ուշալ մեռաւ յուսահասութենից, երբ մի մեռաելի մարմինը բանալիս տեսաւ, որ նորա սիրալ գեռ զարնում է. Գերնէլ մեռաւ իւր կինը կորսմանելու վշարց. ԱՅՆ—Ըման, Ուսպին և Լուփուա—որովհեաւ Լուգովիկոս XIV զրկեց նոցա իւր ողորմութենից:

* * *

Եթէ վիշար և ախրութիւնը վնասաբեր ներդրործում են վէքերի վերայ, արգելելով արեան պայտաք նոցա մէջ և տկարացնելով կինսական ոյժերը, — ընդհակառակը, բերկրալի ոգեկան զգացմունկները նպաստում են նոցա բուժմանը: Ուրախութիւնը կինդանացնում է մարմինը, ինչպէս արեւի ճառագայթները կինդանացնում են բնակարանը: Տիսօ յիշում է մի կնոջ մասին, որը երկու տարի շաբունակ տանջուում էր մի ուռեցքով որին ոչ մի միջոց օգուա չեր բերում: բայց երբ հիւանդը վերջապէս աեմուեցաւ իւր որդու հետ, որի բայցակայութիւնը նորան շան անհանդիսա էր անում, վէրլին էլ սկսաւ դէպ ի լաւը փոխուել և շուտով բժշկուեցաւ:

Արանեղութիւնը (ձանձրութիւնը) այն ասաիծ աւերիչ չէ ներգործում մարդու վերայ, ինչպէս վիշար, բայց նորան էլ հարկաւոր է այն ազգեցութիւնների կարգը գնել որոնք ցնցում են կեանքը:

„Օք մնրդիկ, ասում է մի հեղինակ, ա-

ւելի մեռնում են ձանձրութենից, քանի թէ հիւանդութենից“: Զէ կարելի երեւակայել ինչպէս անգործութիւնը և, նորա ուղեկից, ձանձրութիւնը սպանում են ծերտնիներին: Ոլչափ նոցա առաջուայ կեանքը գործունեայ է եղած, այնչափ գժուար են տանում նոքա ժամանակի երկարութիւնը:

Յանկարծակի ցնցումները՝ մինչև անգամ ուրախութենից առաջ եկած, շատ անգամ տիսուր հետեւանկներ են ունենում: Լէյանիցի եղօրաղջեկը յանկարծակի մեռաւ, երբ տեսաւ ուկիով լի արկու որը իրան ժառանգութիւն էր մնացել: Վիակորաս մեռաւ ուրախութենից իւր որդուն գրկելիս, որովհետեւ այս վերջինս պարզեւ էր ստացել Օլիմպիական խաղերում: Լեռն Խ պապը, ինչպէս հաւատացնում են, վախճանեցաւ ուրախութենից, երբ Գաղղիացոց զօրքերի ջարդուիլը լսեց:

* * *

Հարոյապէս ընկնիլը և ոգեպէս վհասակը ստուափի աւերումներգործումէ մարդու կազմուածքի վերայ. դորա հակառակ, ոչ մի բան այնչափ չէ զրգուում կեանքի ոյժը, ինչպէս զօրաւոր կամքը և հաստատ բնութիւնը: Կամքը իւր ազգեցութեամբ, որ ունի կեանքի վերայ, շատ անգամ հրաշքներ է գործում: Կա ոչ միան կարող է սանձել վնասակար զգացողութիւնները,

Ճ՛նշել օրինակի համար, վշտի զգացմունքը, այլ
և—փաղատել նոյն իսկ վեշտը:

Յայտնի է, որ Արեսոս թագաւորի որդու—որ
զրկուած էր խօսելու ընդունակութենից—լեզուն
բացուեցաւ, երբ տեսաւ իւր հօր գլխի վերայ
բարձրացած տուրը:

Ես գըքի հեղինակը ճանաչում էր մի հի-
ւանդի, որը անդամալուածութեամբ բռնուած՝
անշարժ պառկած էր անկողնի մէջ. բայց երբ
նա տեսաւ, որ սենեակի միւս անկիւնում զըլր-
ուած իւր որդու օրօրոցը այրուումէ, հիւանդը
վեր թռաւ, աղատեց երեխային մահից և ինքը
առողջացաւ:

* * *

Ճմիշկ Գեյխաէրսլէպէն օրինակ է բերում մի
մարդու, որը կարողանում էր կամքի ոյժով, իւր
մարդնի որ տեղը կամենար, բորբոքում առաջ բե-
րել:

Մի քանի պատմիներ հաստատում են, որ
Գիտքէնէս մեռցրուց իրան ինքնակամ, բռնելով
իւր շնչառութիւնը:

Եմերիկայում ապրում են վայրենիներ, որոնք
ենթագրելով իրանց պարաքը այս աշխարհումն
արդէն կատարած, շատ անգամ երիտասարդ
հասակում պառկում են գեանի վերայ, գոցում են
աչքերը մեռնելու հաստատ նպատակով, և, յի-
րաւի, մեռնում են:

154

Պատմում են մի գնդապեաի մասին, որ կա-
րողանում էր մեռած ձեւանալ: Մի անգամ բժիշկ
Ալէյնը, տեսնելով որ գնդապեաի զարկեսակը
(պուլը) չէ խփում և հայելի մէջ ոչմի նշան չէ
երեւում շնչառութեան, գնդապեաին յիրաւի մե-
րած համարեց. բայց կէս ժամանելուց յեաց,
երակը սկսաւ զարնել, սիրաը խփել և մեռելը
կրկին յարութիւն առաւ նոր կեանքով:

Կամքը, որ ոյժ է տալիս մարդուն և առաջ-
նորդում է նորա գէպի ամենաազնիւ ձգտում
ները, ամրացնում է միենայն ժամանակ կինաա-
կան սկզբունքը այնպէս, որ նա կամքի զօրու-
թեամբ շատ անգամ պահպանուա է իրան վա-
րակիչ հիւանդութիւնների գէմ:

Եթէ մենք հիւանդանալիս, երկիւղից բրո-
նուած, բարլուվին անպաշտպան, յանձնում ենք
մեզ բժշկին, —կամքը՝ ոյժ աշխարհիս ամենա-
զորեղ շարժիչներից մինը, տալիս է կազմուած-
քին այնպիսի գործունէական ոյժ, որով կարող է
լինում մարդու յաղթել ամեն թշնամնական ազ-
դեցութիւններին:

Գեօթէ պատմում է, որ նա միանգամ վտան-
գի մէջ էր փարակուելու մի շատ վասնգաւոր
էպիգէմիական ցաւով, բայց աղատ մնաց ըկ
հաստատ կամքի զօրութեամբ:

Երբ գերմանացւոց զօքքերի մէջ աիֆը կոտո-
րածներ էր անում, մի բժիշկ, առաւօս անկող-
նից վեր կենալիս, զգաց իւր մէջ այդ սարսա-

155

փելի հիւանդութեան նշանների երեւիլլ, բայց
 նա հաստատ միաքը գրեց չենթարկուել նորան
 և բոլը ոյժը մէկ անելով, գնաց հիւանդանոց:
 Ելր այսաւեղ իւր սովորական պարագմնիքները
 հոգալ սկսաւ, զգաց իրան աւելի լսաւ, յեայ,
 հրաւիրուած լինելով, գնաց մի տեղ ձաշի, որ-
 աեղ մի քանի բաժակ գինին ուրախ ընկերու-
 թեան մէջ վերջ տուեց այդ կոռին, զօրաւոր
 կաքի օդնութեամբ: Տուն դառնալով, բժիշկը
 անկողին մասաւ, գիշերը սասափիկ քրտնեցաւ և
 միւս օրը վեր կացաւ բոլորովին առողջացած:

* * *

Ենձնազոհութեան և անսահման սիրոց խոր
 զգացմունքը երեմն հրաշքներ է գործում:

Յայտնի է, որ երեւանների կաթ տուող կա-
 նացք անմերձենալի են հիւանդութիւնների հա-
 մար: Ելր Փարիզի ծննդական հիւանդանոցում
 չարաչար սաստկութեամբ կոտորածներ էր անում
 ծննդական ջերմ, կաթ տուող կանացքը ապատ
 էին մնում այդ հիւանդութիւնից: Բժիշկ Գոււ-
 սակը հաստատում է, որ խոալացի բժիշկ Գա-
 լլեցիին, բանուած լինելով մի անդուժելի հի-
 ւանդութեամբ (ընդհանուր ջրգողութեամբ),
 քաշուեցաւ մի միայնակ գիւղ սպասելու մաշ-
 ուան ժամին: Պեռ նոր հասել է նա այդ գիւ-
 ղը, երբ մի երկրագործի ընտանիք գալիս է նո-
 րա մօտ աղաչելու, որ բժիշկը երթայ օդնու-

156

թիւն հասցնէ իւր երեխային, որի գլուխը,
 կառքի տակ մնալով, ջախջախուել էր: Բայոր
 ոյժը հաւաքելով բժիշկը ենում զնում է երե-
 խային տեսնելու, որ ուշաթափ ընկած էր. մի
 օպէրացիա (արէպանացիա) է անում նա երե-
 խային և աղասում է նորա մահից: Գիւղացի
 ընտանիքը նորհակալութեան արտասուքներով
 ճանապարհ է ձգում բժիշկին տուն: Գաալից-
 ցին, հոգւով չափ շարժուած այս անցքից,
 սկսաւ մնածել ՝Ոլովհետեւ իմ կեանքը գեռ
 կարող է պէտքական լինել մարդկութեան, ես
 չեմ ուղղում մեռնել: Վասուած կապաչէ ինձ խեղձ
 հիւանդների համար“:

Քանիոր այս մնածմունքը անցնում էին նորա
 գլեխց, յանկարծ սկսաւ նա զգալ իւր մէջ նոր,
 անձնանօթ ոյժ: Եյն օրը, ութնատնեայ ան-
 քնութենից յեայ, առաջի անգամ նա հանգիստ
 և խորքուն եղաւ: Կամաց—կամաց նորա հիւան-
 դութեան նշանները անհետացան և, մի քանի
 օր յեայ, նա բորբովին առողջացաւ:

* * *

Բարնէց, Գօդէրէ և Շուֆլանդ բժիշկները
 հաստատում են, որ զօրաւոր ոգեկան ոյժով կա-
 րելի է հեռացնել մահուան նախասահմանուած
 ժամը: Եթէ մեռնողը սպասում է մի տարօրի-
 նակ կարեւոր գէպքի, նորա հոգեկան ոյժերի այդ

157

լարուած դրութիւնը կալող է արուեստապէս
երկարացնել մարտելու մօս կեանքը:

1672 թուին, եղբ Գաղղիացիք յարձակուել
էին Հոլանդացւոց վերայ և մաել էին նոցա եր-
կիր, վճնուորները փախցրին մի պառաւ ինոջ
աղջիկը: Պառաւը սասափիկ հիւանդ էր (գան-
գուէնով) և ամեն վարկեան սպասում էին նորա
մահուանը: Ենցաւ մի քանի օր, և բոլը այդ
ժամանակը մեռնողը սասափիկ անհանգիստ, որ
ոչ մի լուր չէ ստացուում իւր աղջկայ մասին,
նշաններով և կցկառւր խօսքերով հարցնում էր
իւր մօս եղաներից, թէ ի՞նչ եղաւ իւր աղ-
ջիկը: «Կա արդէն բոլորովին սառել էր և նորա
պուլսը դադարել էր զարմելուց. յանկարծ նա-
լսեց իւր աղջկայ ձայնը և տեսաւ նորան առնե-
մաննելիս: Հիւանդի խելքը յանկարծ դլուին ե-
կաւ, նա փաթաթուեցաւ իւր աղջկայ պարա-
նոցին և մեռաւ նորա բազուկների մէջ:

Յետագայ գեպքը, որ պասմումէ բժիշկ Գէ-
վէն, առաւելաւ վկայումէ այն անկարծիք ձըշ-
մարտութեանը, որ կամքի պիտ և այն զգաց-
մուքը, որով մարդս սասափիկ լարուած սպասում է
մի քանի, կարող են աղդեցութիւն ունենալ բո-
լորովին տկարացած կազմուածքի վերայ: Ո՞ի
52 տարեկան կնոջ վերջի շունչը բերանը հիւան-
դանոց բերին: Հիւանդը անցուսալի դրութեան
մէջ էր, և ամեն առաւօա բժիշկները զարմանում
էին նորա դեռ կենդանի գանձով: Բան

տեղ էր, որ կինը սպասում էր իւր եղօրը, որի
հետ նա ատելութիւն ունէր և ցանկանում էր
հաշտուել մեռնելուց առաջ: Ա երջապէս, եղ-
բայրը եկաւ: Հազիւ նոքա կարողացան մի քանի
խօսք ասել միմեանց, հիւանդը փախճանեցաւ:

* * *

Մարտուս համար ինքն իրան կառավարել
զիանալը մի գեղեցիկ բժշկական միջոց է: Անտոր,
որ խոր ուսումնասիրած է մաքին մարմնի վերայ
ունեցած ֆիզիքական ազդեցութիւնը, իրաւացի
նկատում է, որ ջղերի (ներվերի) հիւանդու-
թեանց մեծագոյն մասը առաջ է գալիս մարդու
ծուլութենիցը և նորա մասաւորական ընդունա-
կութիւնների անգործութենիցը, և նորանից որ
հեշտասիրական հակումները յալլթող են ներ-
կայանում բարյուականներին վերայ:

Ինչոր վերաբերումէ ընդհանրապէս անհա-
տական ընդունակութիւններին, — տարակոյս չկայ,
որ հաստատ և զօրաւոր խելքով մարդիկ աւելի
կարող են յուսալ երկար ապրելու, քան թէ հաղ-
ւագիւտ ընդունակութիւններով և հարուստ ե-
րեւակայութեամբ շնորհուածները — բանաստեղ-
ծները, կոմպոզիտորները, նկարիչները: Զ՞ո՞ն Ոինկ-
էլլի նկատովութեան համեմատ, 1700 հա-
րիւրամեայ ծերերի մէջ, որ յայտնի են Փրիս-
տոսի ծննդից մինչև մեր օրերը, միայն Թօն-
տոնէլին կարելի է ձշմարիս խելացի մարդ ան-

ուանիլ: Բայրն և Մոցարտ մեռան 36 տարեկան, Շելլինի 37, Վանիցէտափ 42, Ա էպէլ 40, միայն Ուսանինի և Մէջէրբէր այժմ անցած են 70-ից. բայց նոցանից առաջնորդ գտարել է գրելուց 38 տարեկանից սկսած, իսկ երկրորդը հարուստ մարդ լինելով աւելի ծանր և հանդարա է աշխատում և ապրումէ իւր ուղածին պէս: Մատառը ընդունակութիւնները և զրգուած երեւակայութիւնը սասափիկ հարստահարելը կը յոգնեցնէ ուղեղը, որից սերտ կախում ունի ջրզային սիստեմի միջնորդութեամբ, մարդուս բռլոր կազմուածիր:

* * *

Միւս կողմից, ուղեղի կատարեալ անդործութիւնը մնասակար է ապրում և կարճացնումէ կեանքը: Մի Հոլլանդացի բժիշկ նկատումէ, որ եթէ մարդս բոլոր էակների մէջ ամենից աւելի ունի կենսական ոյժ, այդ նորանից է, որ նա մի մասձող էակ է: Մատառը ընդունակութիւնների սոոր զարգացմանը պէտք է վերաբերել նեղերի (սեւամօրթերի) կարճատեւ կեանքը, որոնք, Վեպի բժշկի խոսքերին նայելով, միւս մարդկանցից քիչ են ապրում:

Երեւակայութեան ոյժը բժշկական տեսակետից ուսումնասիրելիս, գիրաւու կարելի է հասկանալ թէ ի՞նչ ազգեցութիւն ունի մարդուս բարցական կողմը կազմուածքի ֆիզիքական ե-

րեւոյթների վերայ: Երեւակայութիւնը, Գերդերի խօսքերով, մի հանդոյց է, որ կապում է հոգին մարմնի հետ: «Ես (երեւակայութիւնը) թագաւորումէ նաև ջղային սիստեմի վերայ, որը, իւր կողմից, իւր իշխանութեան տակ է պահում մեր մարմնի բոլոր կենդանական անականութիւնը: Եյս կախարդուհին այնպիսի զօրութիւն ունի, որ նորա ազգեցութեամբ մեռնողը նոր կեանքով յարութիւն է առնում, իսկ հելքիւլէսեան ուժով մարդը, վար ընկնում մեռնում է:»

* * *

Հոչակատոր գերմանացի բնաբան Ռուբրախ մի այսպիսի գէպք է առաջ բերում: Մի մարդ տեսել է երազումը, որ գաւազանով հարուած է սաացել իւր ուսին: Ելր նա զարթումէ, ուսին վերայ երեւում են հարուածի հետքերը — մի երկար կապցա բիծ:

Բժիշկ Մարմիսը, Բորգոից, Երկք տարի առաջ „Union medicale“ օրագլի մէջ հետագայ պատահմունքը հրատարակեց: Մի ախինտից հարկաւոր էր արիւն առնել: Եյս օպերացիայի ժամանակ ներկայ էր նորա աղախինը, որը վաղուց ծառայումէր նորա մօաւ և անսահման հաւաաւրիմիւր աիկնոջ: Ելր բժիշկը լանցէտով ծակեց հիւանդի երակը, այս գրածողութիւնը այնպիսի սասափիկ ներգարծութիւն արեց աղախինի վերայ, որ նա յանկարծ աղաղակեց և արագու-

թեամբ բոնեց իւր ձեռքը. յետոյ երբ աղախինի
ձեռքը քննեցին, աեսան նորա վերայ մի վերք,
որը ասես, լանցեառվ արիւն առնելու համար
բացած լինէր:

Եստ անգամ կրուել է բօերդաւի աշակեր-
տի մասին, որը համալսարանում լեկցիոյի ժա-
մանակ հիւանդանում էր այն ցաւերով որոնց
վերայ պրօֆեսարը կարդումէր: Բժշկների խոր-
հրդով նա ստիպուած էր հրաժարուել բժշ-
կութիւն ուսանելուց:

Յետազայ դէպքը հաղորդում է յայտնի ու-
սումնական Գեկէն:

1780-ին, Կոպէնչագէնում մի քանի բժիշկ-
ներ երեւակայութեան ներգործութիւնը մարդու
վերայ քննելու համար, հրաման առին փորձեր
անել մի յանցաւորի վերայ, որը դասապարա-
ռած էր անիւով սպաննութեան: Երբա դրին
առաք ջրով լցուած աւազանի մէջ, գոյեցին աչ-
քերը և մի գուլ գնդասեզով շատ թեթեւ ծա-
կեցին նորա թեւը: Միւեւոյն ժամանակը, ջրի
բարակ հոսումը, որ վասրւմէր մի ամանից, նմա-
նեցնում էր արեան հոսելուն աւազանի մէջ:
Յանցաւորը շուշով ուշամճափ եղաւ, պաղ քրր-
տինքը ծածկեց նորան, նա սկսաւ ցնցուիլ բո-
լոր մարմնով և $2\frac{1}{2}$ ժամից յետոյ մեռաւ: Աչ
մի կաթիլ արիւն չէր կորսրել մեռնողը:

* * *

Երեւակայութիւնը շատ անգամ հրաշալի
կերպով բժշկումէ հիւանդութիւնները: Ես ոչ
միայն օգնում է, որ դեղերը ներգործեն կազ-
մուածքի վերայ, այլ և բժշկարար յառակութիւն-
ներ է աալիս այնպիսի նիւթերին, որոնց մէջ ո-
չինչ դեղացին նիւթ չէ պարանակուում:

Ճիշկ Նելիպը հետեւեալ ծիծալաշարւշ
պատմութիւնն է առաջ բերում: Մի բժիշկ
զրել է մի հիւանդի համար լուծողական և
զեղաթերթիկը նորան առաջով ասել է. „Դուք
այս ընդունեցէք“: Միամիտ գիւղացին առն
դասնալով պառկում է անկողին և կուլ է տա-
լիս թուղթը, որը ներգործումէ իրեւ մի սասափկ
լուծողական գեղ: Միւս օրը նա գալիս է շնորհա-
կալ լինելու բժշկին և պասանում նորան բոլորը:
Կարելի է երեւակայութեալ բժշկի զարմանքը:

Մի հիւանդ պահանջում էր բժշկից փղո-
ղական համագեղ (պիլիւ), իսկ բժիշկը ամե-
նեւին չէր ուզում համաձայնիլ տալու: Նիւանդը
շարունակում է ինորեւ բժշկը այնպէս է ձե-
ւացնում իրեւ թէ զիջանում և գրումէ նորա
համար համագեղեր միմիայն հացից շնուած և
ուկեցօծած: Միւս օրը հիւանդը խօսք չէ գրա-
նում յայտնելու իւր շնորհակալութիւնը բժշկին,
որովհեաւ համագեղերը հիւանդի սիրաը յետ
բերին և նա առողջացաւ:

Մի անգղացի բժիշկ բժշկումէր մի հիւան-
դի, որի լեզուն, կաթուածով բռնուած, չէր գոր-

ծում: Արբ ամեն միջոց անկարող եղաւ հիւանդին որ և է օդնութիւն հասցնելու, բժիշկը մըտածեց մի նոր հնալք գործինել բայց առաջուց ցանկալով իմանալ ջերմութեան աստիճանը, նա դրեց հիւանդի բերանը մի ջերմաշափ: Հիւանդը երեւակայելով, որ այդ գործիքը նշանակուած է նորա լեզուն բանսլու համար, ուրախութենից կանչեց և խօսեցաւ:

Քրիստեան Գրօմմանը պատմումէ, որ հռչակաւոր աստուածաբան Հէմմինկը դասախոսութեան ժամանակ, կասակի համար, առաջ բերեց երկու բարբարոսական ոտանաւորներ, որնցով կարելի է բժշկել ջերմից: Կորա լսողներից մինը իւր ծառայի վերսց փորձ անելով, բժշկեց նորան:

* * *

Ըմենեւին կարելի չէ ապրակուափիլ, որ երեւակայութիւնը շատ նշանաւոր դեր է խաղում հիւանդութիւնների բժշկութեան մէջ և քանի անգամ զարմանալի հրաշքներ է գործել: Հաւաքը բժշկութեան մէջ, ինչպէս և կրօնքի մէջ, մի զօրաւոր միջոց է: Ա երջացնում ենք այս գլուխը նկատողութեամբ մի բարոյական նախապատճմունքի վերայ, որը, թունաւորելով կեանքը, միենոյն ժամանակը, կարճացնում է նորան: Մէնք կամենում ենք խօսել մահուան երկիւղի վերայ:

164

„Սիրել կեանքը, առանց մահից վախենալու —ահա միակ միջոցը երջանիկ սովորելու և մեռնելու խոր ծերութեան մէջ“ ասաց Հովհաննդ:

Եւ յիրաւի, նկատուած է, որ մահից վախցող մարդիկ սակաւ հասնում են խոր ծերութեան: Հասաւաս հոգին և պարզ միաքը, ընդհակառակը, նպաստում են դրութեան երկարանալուն, պահպաննելով կենաական սկզբունքը: Պայինիեանները, որոնք ցուը չէին ուղղում իրեւ մի չարիք ճանաչել և արհամարտում էին մահը, բոլորը ապրում էին շատ երկար: Օենոնը, այդ ուսման հիմնադիրը, զբեթէ հարիւր ապրեկան մեռաւ. Վէճանաչս, Պահիաննիոս, Ըստիոգորաս, Լատոն կնքեցին իրանց կեանքը ամենախոր ծերութեան մէջ:

* * *

Մահը մեզ մի սարսափելի բան է միայն երեւում մեր նախապաշարմունքներիցը, որոնց մարդ սկսում է ենթարկուել դեռ մանկութեան ժամանակ: Վնջեցեալի վերայ լայը, յուղարկաւորութեան ծէսերը, ախուր շարականները —սոքա բուլը յարուցանում են մեր մէջ երկիւղ և զլուանք գէպի մահը:

„Ես կարծում եմ ասում է Մոնտան, որ միայն սոսկալի պարագաներն են, որ յարուցանում են մեր մէջ սարսափ և զզուանք դէպ ի մահը. կանանց և աղայոց լայը, բարեկամների

165

և ազգականների ախոււր կերպարանքներով այցելելը, մութ սենեակը բազմաթիւ մռմերով, և այլն”...

Մահուան ագեղութիւնը մարդը ինքն է ստեղծել քանի մենք մօաննում ենք այդ սարսափելի ուրուականին, հաշառուում ենք նորա հետ և անհետաննում է նորա ագեղութիւնը. այդ դէպում մենք նման ենք երեխաններին, որոնք փախչում են իրանց ծանօթ մարդկանցից, երբ նոքա գիմակաւորուած են երեւում, բայց իսկցն մօաննումնոցա, երբ գիմակը հանեն: Պարզ երկնքի տակ, երաժշառութեան ձայների, տառանող դրոշակների և փայլուն միազգեսանների մէջ, զենուորը ոչ միայն չէ վախենում մահից, այլ ուրախ գնում նորա դէմ:

* * *

Մահուան ձաշակը մենք ամեն օր առնում ենք քուն լինելիս: „Քունը և մահը՝ երկուորեակներ են” ասում էին հնագարեան բանասաեղծները: Երբ Գիտքինէս մեռնելուց մի փոքր առաջ ուշքը կորարուց, բժիշկը հալցրեց նորան: „Դու վաս ես զգումքեղ” : Ոչ—պատասխանեց իմաստունը—բոյրքլոցն է մօաննում (մահը կեանքին): Ի՞նչ հարկաւոր է երկիւղ ունենալ մահից, եթէ մենք ամեն օր ուրախութեամբ ընկնում ենք նորա եղքօր (քուն) զիրկը, թռչելով մի քանի ժամուայ համար իրականութենից մի ուրիշ, աւելի լաւ աշ-

խարչ: „Աեսնքը, ասումէ Շիւֆփօն, սկսում է աղօսանալ այն վայրկենից շատ առաջ, երբ վիճակուած է նորան մարելու: Խնչու համար վախենում ենք մենք օրհասական ժամիցը, որին մենք սանդաղար մօաննում ենք”: Միթէ մահը նոյնպէս բնական չէ, ինչպէս և կեանքը: “Եղա երկումն էլ գալիս են առանց մեր կամքին, մեզ համար անգիտակցապէս:

Մինչեւ անգամ կարելի է ենթադրել, որ մեռնելու ժամին մարդուս ախրում է ինքնամուացութեան մի ախորժ զգացմունք՝ կենական սկզբունքը ձաշակումէ այդ ժամին քաղցր հանգիսա այն բոլոր զգացողութիւններից, որոնք յոգնեցնում են նորա գործունէութիւնը”: Լուկան ասում է, որ կեանքը անտանելի կլինէր մարդկանց համար, եթէ աստուածները չծածկէին նոցանից մահուան երանութիւնը: Սենեկան յիշումէ որ, Տուլլիոս Մարկիլինուս մահուան ժամին զգաց անասելի զուարծութիւն, որ զգումէ սասաիկ յոգնութենից յետոյ քուն մանող մարդը:

Գրանատա Առարեց մեռնելուց մի քանի վայրկեան առաջ ասաց “Non putabam tam dulce, tam suave esse mori:” Ես չեի կարծում, որ այսպէս ախորժ է, այսպէս քաղցր է մեռնիլը”:

Լա Մէտապի փիլսոփան, որը մի քանի անգամ սասաիկ հիւանդանալով մազի չտի մոտեցել էր մահուան, քննում է զգացողութիւն-

ները, որ նա ունեցել է օրհասական վայրիկնին:
„Ինձ այնպէս թւում էր, ասում է, որ մահը
անցրուց իմ պարանոցին մահուան հանգոյցը,
բայց, առանց քաշելու, ներդործեց իմ վերայ
իբրև մի քննցուցիչ գեղ. կեանքը թուչում՝ հե-
ռանում էր անդախար մի տեսակ ահհոգութեամբ
և ոչ առանց ախորժելի զգացմունքի“:

Սոքա են այն միհիմարտութիւնը, որ առջև է
բնաբաննութիւնը այն վախկոս խեղճերին, որոնք
երկիւղ ունին մահից: Բայց քրիստոնեայի հա-
մար մնում են գեռ հաւատքի միհիմարտութիւնը
և յօյոր մի յաւիտենական անվերջ կեանք վայե-
լելու:

Գ Ե Ո Ւ Թ Ժ Ե Վ

Կ Ե Ն Գ Ա Ղ Ա Վ Ա Ր Ո ւ Թ Բ Ե Ն :

Եթէ մարդո ուզումէ կարելին շատ օգուտ
քաղել իւր գոյութենիցը, պարտական է կշռել
այն օգուտները և վեաները, ինչպէս բարո-
յական, աղյակս և փեղբական, որ նա կա-
րող է ունենալ որ և է պարապմունքից, յար-
մարեցնելով նոցա իւր հակոմների հետ:

Յր. Ռեվէ:

Ոլովչեաւ աղքատութիւնը և չքաւորու-
թիւնը, Մանտեսկիկի ասածովը, անփախչելի
չարիքներ են երկրիս վերայ, վասնորոյ շատ
բնական է որ ժողովրդեան այն գասակարգերը,
որոնք միշա կուռում են չքաւորութեան հետ,
առևնամեծ տուրքը վճարում են մահուան:
Վ իձակագուութիւնը ապացուցանումէ, որ եթէ
աղքատութիւնն էլ իւր օգուտները ունի, ինչ-
պէս Անեկայ կարծում էր, այդ օգուտների կար-
գը ոչ երբեք կարելի է գասել նաև երկարակե-
ցութիւնը, և որչափ որ հարուստի կեանքը ա-

Խորժ և երկարատեւ է, այնչափ աղքատինը
ծանր և կարճատեւ է: Գիտողութիւններից ե-
րեւում է, որ ապահովուած մարդկանց կեանքի
միջին թիւը է 57 տարի և չորս տարս, մինչ-
դեռ չքաւոր մարդիկ ապրում են միջին թւով
միայն 37 տարի և մի տարս:

Եւսակոյն, մենակ հարասութիւնը չէ տա-
լիս երկար կեանք: Ամենամեծ տարիքների
հասած ծերերի մէջ չենք պատահում մենք
զբեթէ ոչ մի հալուստի, և մինչև անգամ
ապահովուած մարդու: Անդործ և միշտ երջա-
նիկ կեանքի միակերպութիւնը ոչ ամբողջապէս
նպաստում է երկարակիցութեան: „Կեանքի
հետ կոփուր և նորս բազմափերպութիւնը տմե-
նից աւելի նորոգում է մարդուս, նկատում է մի
բարյարան: Անսպասելի դիպուածներ, երկիւղը
գոյութեան համար, յոյար մի լաւագոյն ապա-
գայի, վեշտը և ուրախութիւնը կազմուածքի
վերայ նոյնպէս են ներգործում, ինչպէս քամին,
որ կարելի է անում առագաստաւոր նաւին շար-
ժելու ջրի վերայ: Բժիշկ Անդրեմէն նկա-
տել է, որ մեծ քաղաքներում անգործ մեծա-
տունների կեանքը առաւել կարծ է, քան թէ
աշխատաւոր արհեստաւորինը: Ոչ ոք չէ կա-
րող փախչել այն սարսափելի օրէնքից, որով
մարդս աշխատով պէտք է ձեռք բերէ իւր ա-
ռաղջութիւնը:

Չքաւորութիւնը կարձացնում է կեանքը

այն պատճառուաւ, որ նորան հետ, ըստ մեծի
մասին, ընկերանուում են բարյական անկումը,
հոգոյ վհաստութիւնը, անձնազարութեան բա-
ցակայութիւնը: Գերմանիայի և Ռուսաստանի
հրեաների մեծ մասը ապրում են սաստիկ չքա-
ւորութեան մէջ, բայց կրիին երկար են ապ-
րում, որովհետեւ նոցանում չքաւորութիւնը չէ
ծնում զեղիսութիւն և անդարյականութիւն և
չէ զրկում նոցա գործունեութենից, որ նոյնպէս
յասուկ է այս ազգին: Մարդու կեանքը կար-
ճանում է հոգսերից և աշխատանքից: Ավաս
կեանքից, որ սահիպուած է վնարել իւր մնունդը,
ինչպէս նկատուած է, ապրում է աւելի երկար
անային կենդանին, որ պատրաստ է ստանում
իւր կերակուլը:

* * *

Ա իմակագրական նկատողութիւններից երե-
ւում է, որ երկրագործները վայելում են երկար
կեանք: «Առքա իրանց այս առաւելութիւնը պար-
տական են մաքուր օդին, չափաւոր և պարզ կե-
րակին, մարմարոր աշխատանքին, վերջապէս
իւրեանց սովորութիւնների պարզութեանը և
բնութեան հետ ունեցած մշտական յարաբերու-
թեանցը: „Հողի մշտիկութիւնը մի գօրաւոր մի-
ջոց է“, առողջութիւնը պահպանելու համար
ասում է Գուլիէն:

Առաջ կարծում էին, և այժմ էլ շատերը

հաւատում են, որ գեանից բարձրացած գոլորշու մէջ մի կենդանացուցիչ բան կայ: Պրանտուա Բէկօն խորհուրդ է տալիս հետեւել չին սովորութեանը, այսինքն ամեն օր ներշնչել նոր փորուած գեանի հոռը, գնալով արողի յետեւից կամ պարտէզի մէջ գետին փորելով: Կա ճանաչում է եղել մի զարմանալի առաղջ ծերունու, որը ամեն առաւօտ խաւնտառում էր իրան բերուած հողը և ներս էր քաշում նորա գոլորշնն: Այս ձեւը շատերից իրեւ բժշկաբար ճանաչուած էր, և Հովֆանդ խորհուրդ է տալիս բարձրակացաւի հակում ունեցողներին օգուտ քաղել նորանից: Բժիշկ Ասրուլի շատ օգտակար է գտնում կաթուածից բւնուած կամ սովորաբար թոյլ ձեռքերի և ոսքերի համար ամեն օր մի կամ երկու ժամ թարմ հողով ծածկելով: Բժիշկ Գրէմ խորհուրդ է տալիս նաև թարմ հողի մէջ (հողային վաննայ), որ շատ հիւանդութիւնների դէմ մի գեղեցիկ միջոց է: Այս մեզ չէ յիշեցնում Վնաէւսի, երկրի որդու պատմութիւնը, որ Հելքիւլէսի հետ կոռելու ժամանակ միշտ նոր ոյժով վեր էր կենում, երբ դպշում էր իւր մօրը (երկրին):

Եթէ ամեն մարդ չէ կարող նուիրել իրան երկասդործութեան, գոնէ պարախզպանութիւնը այգեգործութիւնը շատերին մատչելի է: Պարախզի մէջ անխանջ աշխատութիւնը նատական կեանք վարողների համար մի գեղեցիկ և օգտակար պա-

րասրմունք է: Այս մարդիկ, որոնք թովնում են իրանց գործերը կեանքի մնացած մասը հանդրատութեան մէջ անցնելու նպատակաւ, պէտք է զդուշանան գործունեայ կեանքից յանկարծ պարապ կեանք սկսելու, և պարախզպանութեան մէջ նպատակ կդանեն ոչ միայն գործունէութեան մի նոր նպատակ, այլ և մի լաւ միջոց ձանձրութեան դէմ որը, ինչպէս վերեւը արդէն ասացնիք, կեանքի ամենավատ թշնամիներից մինն է:

Վնիբար - կամու անունով մէկը, որ Մարտելում 1760 թուականին մեռել է 122 տարեկան, իւր սովորական պարապմունքներից զատ, օրուայ մէջ մի քանի ժամ ևս նուիրում էր պարախզպանութեան և ծաղիկների մշակութեան, որ սասափի սիրում էր: «Օաղիկների և պողասառ ծառերի հոգատարութիւնը, հոգեբանների կարծիքի համեմատ, մանձում է մեր մէջ չար կըրքերը և խորհուրդները և ազնուացնում է մարդու: Դիսկէտիանոս և Ապրոլս Վ ինքնակամ հրաժարաւեցան գահից, որպէս զի կեանքի մնացած մասը միայնութեանը և ծաղիկներին նուիրեն:»

Ո՞ի հուշակաւոր գիւնական ասում է: «Ամեն սասուածգիտութեանց, կրօնքների, պատմելութիւնների, աւանդութիւնների մէջ առաջին մարդը երեւում է Եղեմում, այսինքն պարախզում, և վերջացնում է իւր գոյութիւնը Եղիւսի մէջ»:

* * *

Բհուլինի պրօֆեսոր Գրասպէրի հետազօտութիւններին համաձայն, հոգեւորականները, իրանց պաշտօնի ֆիզիքական և բարյական պայմանների շնորհիւր, շատ երկարակիւաց են. այդ պայմաններին են՝ աղաս ժամանակը մարմինի և մաքի չափուոր աշխատանքը, կարդ կանանի առվարութիւնը և պարզ խղճնանքը: Կարախնալ դը-Արլի, որ 110 տարեկան մեռաւ, իւր կիանքի վերջի ժամանակները պատմում էր, ինչպիսի միջոցներով հասել էր նա այսպիսի խոր ծերութեան: „Եթէ ևս մինչեւ նահապետական աարիքների հասայ, ասում էր նա, — ես պարական եմ գորանով չափաւորութեանը, մորթնաւոր ուժերիս և մասւոր ընդունակութիւններիս կանոնաւոր կրթութեանը, վերջապէս Վստուածային պատգամների խասիւ կատարելուս, որ ինձ տալիս էր հոգեկան խաղաղութիւն և խղճնանքի մաքրութիւն: Արիասաարդութեանա ժամանակ ես ծերի կիանք էի վարում, բայց ծերութեան ժամանակ, նորա տեղ, վայելում եմ երիտասարդութեան առջգութիւնը և առողջութիւնը“:
 Վերոջապէս բարեպաշտութեան նուիրած կեանքը չափազանց նպաստաւոր է երկարակեցութեան: Վուաջ բերենք այս օրինակը:

1845 թուին, Վալզում, մեռաւ հարիւր տարեկան հասակին մի կին, որի համար շատ ժամանակից իվեր միայն մի բաւականութիւն էր մնացել աշխարհում: եկեղեցի գնալ: Արք

խօսք էր լինում նորա տաղիքների մասին, նու սովորաբար ասում էր: որ նորա օրով ժողովրդիան երեք սելունդ է փոխուել: 1793 և յետագայ թուկաններում պատահածները նա յիշում էր, ինչպէս եկեղեցիների զոյտելու ժամանակը, և յեղափոխութիւնը վերջացաւ նորա համար եկեղեցիների գոների բացուելով:

* * *

Փիլիսոփանները միշտ երկարատեւ կեանք են ունեցել մանաւանդ նորա, որոնք նուիլում էին իրանց բնութիւնը ուսումնասիրելու, չափուոր, պարզ կեանք էին վարում և աշխարհային գործերի մէջ չէին մասնակցում: Ասզն, Թռաղէս, Պիտառկ ։ Յունաստանի երեք իմաստունները, մեռան հարիւր տարեկան: Կանոնիիլ և Խաշսէն հասան մինչեւ 105 տարի, երեք հիւանդութիւնների չենթարկուելով: Գեմմնակս ապրեցաւ 100 տարի և մեռցուց իրան, քաղցած մնալով: Մեռնելու վայրկենին, նա ասաց իւր շքապատճերին: „Աեւացէք, կատակերգութիւնը վերջացաւ!“ — այս խոսքերը յետոյ Օգոստոսին վերաբերեցին:

Դհմկարիաէս մեռաւ 104 տարեկան, Պիթագորաս 100, Օւենն 99, Պլուտագոս 90, Պլատոն 80, և այն: Վագողնիոս Տեանացին ապրեցաւ 100, ենթարկելով իրան պիթագորեան աղանդի բոլոր խիստ կանոններին:

* * *

Այն մարդիկը, որոնք իրանց սեփհական կամ
քովը ընալում են իրանց պարագմները, կարող են
իրանց կեանքը շատ թէ քիչ բարեյաջող պայ-
մանների մէջ դնել. սոյս հակառակ՝ առաջ բե-
րենք այստեղ մահուան մի քանի թւեր, որ
տալիս են Եւրոպայի արուեստաշատ կենդրոնները:

Հաշուել են, որ մի պաշարուած քաղաքի գէմ
պահնէշի տակ, պառկած զինուորը, որի վերայ
քաղաքից անհամար գնդակներ և ռումբեր են
արձակուում, տեղի պակաս ենթարկուած է
մահուան վտանգին, քան թէ այն մշակը, որ
բանում է Ենդղեայի արուեստաշատ քւղաքնե-
րից մէկի մէջ, ինչպէս Եխվագուլի, Մանչէս-
տէրի, և այն:

Ենավերպէնի պաշարման ժամանակ իւրա-
քանչիւր զինուորի համար մեռնելու և կենդանի
մնալու հաւանակութիւնը վերաբերում էին մէկ-
մէկի, ինչպէս 1 թիւը 68 թուին. Բազախօսի
պաշարման ժամանակ—ինչպէս 1ը 54ին. Պա-
տէրլօի պատերազմում ինչպէս 1ը 30ին:

Եխվագուլ մշակի համար մեռնելու հաւա-
նակութիւնը վերաբերում է անվնաս մնալուն
ինչպէս 1ը 19ին. Մանչէստէրի սասայնակ-մշակի
համար,—ինչպէս 1ը 17ին. Պէտքիլուի դանակ
շնողի համար, ինչպէս 1ը 14ին:

* * *

Պէտք էր կարծել թէ բժիշկները՝ որ իրանց
նուիրած են հիւանդութիւնների ուսումնասի-
րութեան, բժշկելու, և իրանց մերձաւորների
առողջութիւնը պահպանելու, ամէն միջոցներ
ունին իրանց սեփական կեանքը երկարացնելու
համար, մինչդեռ բոլորովին հակառակն է դուրս
գալիս: «Եօքա շատ ցած աեղ են բանում երկայ-
նակեցութեան սանառուղի վերայ: Ո՛չ մի արշեստ
կուլ չէ տալիս այնքան մատաղ կեանքեր, ինչ-
պէս բժիշկների արշեստը: Ենթարկուած լի-
նելով վարակիչ միազմների ազգեցութեանը, տա-
տանուելով յուսոյ և երկիւղի մէջ, զանազան ար-
գելքների և իւր ընկերակիցների թշնամական հա-
կառակութեանց կուռումը, խղճանակով բժիշկը
շուտով կիւանէ իւր ցժերը և շատ հազիւ
կապրի մինչև ծերութիւն:

Բայց բժշկի համար վասնգը պակասում է
տասը տարուայ գործունէութենից յետոյ: Եյա
ցանկալի գծից անյնելով, նա կարող է բարե-
յաջող պայմանների մէջ բաւական երկար ապ-
րել: Բոլոր ժամանակակից բժիշկների մէջ, առ-
մենից աւելի երկար կեանք ունեցաւ բժիշկ
Պի-Գուրնէլ որի մասին մենք ալուէն յիշեցնէք:
Նա մեռաւ 1810 թւին, 120 տարեկան: Ժան-
Ենառուան Բոնդինի սապեցաւ 117 տարի, պա-
րապելով բժշկութեամբ 95 տարի:

Մարդ՝ ինչ գործով էլ պարապի, գլխաւոր
բանն է միշտ գիտենալ խելացի կերպով կեանքը

կարգ-կանոնի գնել պահպանել հաւասարակշռութիւնը մտաւոր և մարմնաւոր աշխատանքի մէջ։
„Պղասոն, իրան յատոկ իմաստութեամբը՝ ասում է Պլուտալքոս, հրամայում է մեզ հաւասարակէս կրթել հոգին և մարմնը, ուղղելով նոցա մի և նոյն արագութեամբ, ինչպէս երկու ձիեր, որ մի կառքի լծուած են“։

Պատոր աշխատանքը ախորժելի է թուում մեզ Փիզիքական յոգնածութենից յեաոյ, և միեւնոյն ժամանակը, մտաւոր պարապմունքներով զքաղուած մարդը նոր կենդանութիւն կարող է առաջ իւր մոքին և երեւակայութեանը չափաւոր շարժողութիւնների միջոցով։

Ո՞նմորանսի անտառի մէջ ձեմելով, Ճա Ճա Որուսսո ստեղծեց իւր ամենալաւ գործքերը։

Հին ազգերի մէջ մտաւոր աշխատութիւնը և մարմնամարզութիւնը անբաժան էին մէկ-մէկից։ Ճեմարաններում ժողովուում էին ինչպէս փիլիսոփանները, նոյնպէս և մենամարտողները։ Պղասոնի Ճեմարանուումը, Զենոնի սիւնազարդ պատշաճի շուքի տակ, Խափիկուրի պարտէզներում, Երիստուուէլի լիկէօնում, ամենամեծ փիլիսոփանները, Ճեմելով, խօսում էին միմեանց հետ։

„Ա՞ր խելքը այնպիսի յատկութիւն ունի“, ասում է Ֆէյխաէրսլէբէն, „որ անգործութիւնը նորան այնչափ չէ հանգստացնում, որչափ բազմակերպութիւնը“։

Ա օլահէր իւր սենեակում հինգ գրասեղան ու-

նէր, որոնց վերաց փոփոխապէս պարապում էր զանազան շարադրութիւններով։

* * *

Աչ մի մարդ չզիացաւ այնպէս կանոնաւոր կարգագրել մտաւոր և մարմնաւոր աշխատանքը, ինչպէս հռչակաւոր Կորնարօն։ Եհաւասիկ նախապէս նկարագրում է իւր կեանքը իւր օրատեարի մէջ։

„Խմ ժամանակը հոսում է առանց ձանձրութեան, որովհետեւ ես ամեն—մի ժամ անցնում եմ ախորժելի պարապմունքներով։ Շատ անգամ միջոց ունիմ խօսակցելու խելացի, կրթուած մարդկանց, նոյնպէս յայնի գրողների և գիտականների հետ։ Ո՞նսակ ժամանակս ես կարսում եմ գեղեցիկ առաջնդաւոր գրուածքները. եթէ յոգնեմ—սկսում եմ գրել։ Ո՞ի հիանալի պարագաղ ունիմ, որակեղ կամ Ճեմում եմ և կամ զքաղուում եմ որ և է գործով։ Երբեմն որպի եմ զնում։ Երբեւ ապացոյց, թէ ինչպէս օգտակար է կանոնաւոր կեանքը, առաջ բերեմ, որ 83 տարեկան եղած ժամանակս ես կարողացայ մի ուրախ և ծիծաղաշարժ կատակերգութիւն գրել։ Ես ապրում եմ, եթէ այսպէս կարելի է ասել կրկնակի կեանքով. երկրային կեանքով, եթէ ես գործում եմ, երկնայինով—երբ խորհում եմ“։

* * *

Սովորութիւնը մեծ գեր է խաղում կեանքի մէջ։ Շատօրինան ասում էր, որ եթէ նո այն-

170

չափ յիմար լինէր, որ հաւասար երջանկութեան, — նա պիտի երեւակայէր նորան սովորութեան կերպարանքով:

„ Անձ այնպէս է թուում “, առումէ Խպիկուրի հետեւողներից մինը, „որ հանգչելով սովորութեան դիրկը, ես մինչև անգամ ազատ եմ մնում ապրելու աշխատանքիցը “:

Բայց սովորութիւնը ոչ միայն դիւրացնումէ կեանքը, այլ և նպաստում է նորա երկարելուն: Կարելի է „սովորիլ լինել առողջ, նոյնպէս և հիւանդ“, ասաց մի բժիշկ, և այս խօսքերի մէջ շատ ձշմարտութիւն կայ: Միշտ միենայն գործողութիւնների կրինելը երկրորդ բնութիւն, կդառնայ. մեքենան, ասես բնին իրան կդորձէ, առանց մարդու կողմից որ և է աշխատանք պահանջելու: Պորանից հետեւում է, որ քանի ծերութիւնը մօտենայ, հարկաւոր է՝ որչափ կարելի է, կանոնավորութիւն մասնել բոլոր կինատկան գործողութիւնների մէջ:

Սովորութիւնը մի բռնաւոր է, որի հետ հարկաւոր է ամէն զգուշութեամբ վարուիլ դիսեալ: Եղբեմն շատ վասնգաւոր է լինում ենել յանկարծ այս բռնաւորի իշխանութենիցը: Կենացավարութեան այն կերպը, որ յատկացրել է իրան կազմուածքը, անհրաժեշտ է առողջութիւնը պահպանելու համար, մանաւանդ ծերացած մասդիմաց: Օսերունու համար նոր սովորութիւնները շատ վասնգաւոր են, նորս կա-

լող են ցնցել և աւերել կազմուածքը: „ Այն սովորութիւնները “, առում է Հիպոկրատէս, „ մինչև անգամ վաստովութիւնները, աւելի պակաս վաստակար են ներսործում մարգու վերայ, քան թէ նոցա տեղ նորերը ընտունելը “: Ո՞ինչև անգամ հիւանդանալու սովորութիւնն էլ կարող է երկայնակեցութեան աղբեւր գաւանալ: Եղբ հիւագութիւնը սովորական բան կդառնաց մարգու համար, նա աւելի լաւ կդիմացլէ նորան: Բնութիւնը բավարար փորձերից հմտաց դարձած, կնանի այն բժշկին, որ վաղուց է պարապում բժշկութեամբ և իւր կեանքում շատ բան է տեսակ: Բնդիչակառակը, ամուր կազմուածքը, որ հիւանդութիւններ չեն աւեսել և մի օր յանկարծակիի է դալիս, հենց առաջի յարձակումից կշփոթուի և կվհատի հոգւով: Եյս հիմնն վերայ, հիւանդու ծերունիները, որոնց կեանքը լիքն է եղած ամեն անսակ ցաւերով, աւելի սակաւ ենթարկուում են սուր հիւանդութիւններին, որոնցից սովորաբար մեռնում են ամուր կազմուածքերը:

* * *

Եթեւակայել կարելի չէ, թէ ովքան երկար կարող են ասպիր ակար առողջութիւն ունեցողները, եթէ կեանքը խելացի ուզգուած լինի: Եմեն օր աեսնում ենք մենք նիշար մարդկանց, որ ապրում են խոր ծերութեան մէջ, որին չեն կարող հասնիլ հսկայական կազմուածք ունեցող

Ները: Տկար մարդկանց մանուաւանդ կարելի է խորհուրդ տալ բժշկուելու ժամանակ միանդամայն հրաժարութիւն սասարիկ գեղերի գործածութիւնից: «Եղա հիւանդութիւնները հարկաւոր է բժշկել „աւելի հոգասարութեամբ, քան թէ գեղերով” ինչպէս ասում էր Առնաան:

Այս Ֆրիդրիք Հոֆման, XVIII դարու հըուչակաւոր բժիշկներից մինը, առողջութիւնը պահպանելու համար տուած իւր եօթը կանոններին մէջ մացրուց նաև բժիշկներից և գեղերից փախչելու խորհուրդը, նա կամենում էր այդ կծուձեւով յայանել այն կանոնը, թէ շատ դէպերում հարկաւոր է, որ մարդս ինքը իւր ցաւերի և հիւանդութիւնների հետ „կառավարութիւն պիտինայ”:

Ենդղեացի բժիշկ Գեղեն Հերվիլը զբեց մի աշագին կանոնագիրք, որտեղ նա ապացուցանում է, որ կարելի է ամեն հիւանդութիւնները բժշկել սպասելով և յուսալով:

Տեարնիուս բժշկականութիւնը անուանում էր մի լոկ միիթարութիւն հիւանդի համար. „Medicina nihie aliud est quam animi consolatio.”

Վաժանդիի մի քանի աշակերանները գանգատում էին նորան բժշկական միջոցների անբաւական եղածի վերայ: „Վիթէ դուք երբէք փորցած չէք ոչ ինչ չտալ ձեր հիւանդներին”, պատասխանեց հոչակաւոր բժիշկը:

ՏՊԵԴՐԵԿԱՆ ՍԻՄԵԶԵՐԻ:

Երես.	Տպեւած է.	Հարկաւոր է կարդաւ
—	3 տող. գուսենագիրը	գէսեն-պիեր
3.	26 — երկարագործ՝	երկարագործ՝
8.	14 — Քիմիկաները,	Քիմիկաները,
19.	1 — ուսումը,	ուսումը,
1.	13 — մարմայ	մարմայ
12.	1 — ջեր մեռանդով	ջերմ եռանդով
22.	5 — սպիտակեցան:	սեւացան:
27.	21 — երկատութեան	երկարատեւութեան
28.	19 — ժուշկալ	ժուժկալ
31.	14 — մարդկու	մարդու
42.	18 — որոկոներից	ողորկողներից
43.	20 — շարման	շարժման
45.	4 — անժարշ	անշարժ
48.	11 — քարզեղէն	քաղցրեղէն
60.	26 — գեմում է	գիմում է
64.	19 — զրկանիների	զրկանիների
124.	4 — փոփոխութիւնների	փոփոխութիւնների
148.	21 — կատարելուն	կատարուելուն
149.	25 — ծիսանովը	ծիսանովը
150.	27 — ծիսալ, էր	ծիծալէր
155.	5 — մերած	մեռած
160.	1 — անուանիլ	անուանել
—	10 — ոնի	ոնի.
—	12 — կազմուածիր:	կազմուածիր:
—	24 — գիրաւ	գիրաւ
170.	26 — աշխատով	աշխատելով

Հաստ տեղէր եւս կան տառասխաններ՝ օտարաշգի գրաշարի չափանիկ կանալից, զորօրինակ փոխանակ է, գրի է, կամ ի ո—օ, ո—ր, յ—Շ՝ և երբեմն սորա հակառակ:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՐԶԻ ՔԱՂԱՔԻ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ

Դաշտական քառորդի մաս և պահանջման առաջնային համարը	Առաջնային համարը	Առաջնային համարը
Դաշտական քառորդի մաս և պահանջման առաջնային համարը	2	—
Եղբայրական գույքական առաջնային համարը	32	—
Աղմանական առաջնային համարը	41	—
Վահագան առաջնային համարը	1	—
Համազան առաջնային համարը	81	—
Խորհան առաջնային համարը	1	—
Համացանական առաջնային համարը	6	—
Անձնական առաջնային համարը	15	—
Համական առաջնային համարը	91	—
Արքական առաջնային համարը	41	—
Քաղաքացիական առաջնային համարը	81	—
Անձնական առաջնային համարը	92	—
Խորհան առաջնային համարը	4	—
Համացանական առաջնային համարը	11	—
Վահագան առաջնային համարը	62	—
Համական առաջնային համարը	62	—
Համացանական առաջնային համարը	91	—
Համացանական առաջնային համարը	4	—
Համացանական առաջնային համարը	15	—
Ավելացնային առաջնային համարը	72	—
Եղբայրական գույքական առաջնային համարը	72	—
Եղբայրական գույքական առաջնային համարը	6	—
Վահագան առաջնային համարը	1	—
Վահագան առաջնային համարը	01	—
Վահագան առաջնային համարը	21	—
Վահագան առաջնային համարը	15	—
Խորհան առաջնային համարը	02	—
Խորհան առաջնային համարը	02	—

Հայաստանի առաջնային համարը առաջնային համարը
Հայաստանի առաջնային համարը առաջնային համարը
Հայաստանի առաջնային համարը առաջնային համարը

983

2013





77